



ԵՐՈՊԱԿԱՆ ԱՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅԱՏՄԱՆ ԿԱՏԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA



Աղբահանություն

Շիրակի , Լոռու և Տավուշի 6 խոշորացված համայնքներում
մատուցվող ծառայությունների մոնիթորինգի զեկույց



COMPASS
Real Path to Changes



YCCD
YOUTH COOPERATION CENTER OF ARMENIA



Գյուլմրի 2019

Ուսումնասիրությունն իրականացվել է «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակում

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիվիզանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկեր կառույցների հետ, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

««Կոմպասս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ
Շիրակի մարզ, Ք. Գյումրի, Անկախության հրապ. 9^ա շ., 3-րդ հարկ, 301 սենյակ
Հեռ.՝ (+374) 312 6 01 00, (+374) 95 16 01 00, Էլ. փոստ՝ compassgyumri@gmail.com
Կայքէջ՝ <http://compass-center.org>

Բովանդակություն

Կիրառված եզրույթներ	5
Համառոտագիր.....	6
Ներածություն	7
Գլուխ 1 Հետազոտության իրականացման մեթոդաբանություն	9
1.1 Հանրային ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատման տեսամեթոդական հիմքերը	9
1.2 Աղբահանության կազմակերպման իրավական պահանջները	13
1.3 Հետազոտության նպատակ եվ խնդիրներ	17
1.4 Հետազոտության մեթոդ և գործիքներ.....	18
1.5 Հետազոտության ընտրանք	19
1.6 Բնակավայրերի ներսում փողոցների ընտրությունը.....	21
1.7 Հարցման ենթարկված բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը.....	22
1.8 Դաշտային աշխատանքների կազմակերպում և որակի ստուգում.....	26
1.9 Հետազոտության սահմանափակումներ.....	27
Գլուխ 2. Հետազոտության արդյունքների վերլուծությունը ըստ առանձին խոշորացված համայնքների	28
2.1 Աղբահանության իրականացումն ախուրյան խոշորացված համայնքում	28
2.1.1 Աղբահանության ոլորտում ախուրյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը	28
2.1.2 Ախուրյան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից....	29
2.1.3 Ախուրյան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքները	35
2.2 Աղբահանության իրականացումն Աշոցք խոշորացված համայնքում	39
2.2.1 Աղբահանության ոլորտում Աշոցք համայնքի տեխնիկական ապահովվածությունը.....	39
2.2.2 Աշոցք համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից	39
2.2.3 աշոցք խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	45
2.3 Աղբահանության իրականացումը Թումանյան խոշորացված համայնքում	48
2.3.1 Աղբահանության ոլորտում Թումանյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը.....	48
2.3.2 Թումանյան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից..	48
2.3.3 Թումանյան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ.....	59
2.4 Աղբահանության իրականացումը ստեփանավան խոշորացված համայնքում	62
2.4.1 Աղբահանության ոլորտում ստեփանավան համայնքի տեխնիկական ապահովվածությունը.....	62
2.4.2 Ստեփանավան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից	63

2.4.3 Ստեփանավան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ	68
2.5 Աղբահանության իրականացումը դիլիջան խոշորացված համայնքում	72
2.5.1 Աղբահանության ոլորտում դիլիջան համայնքի տեխնիկական ապահովվածությունը	72
2.5.2 Դիլիջան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից	72
2.5.3 Դիլիջան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ	81
2.6 Աղբահանության իրականացումը նոյեմբերյան խոշորացված համայնքում	84
2.6.1 Աղբահանության ոլորտում նոյեմբերյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը	84
2.6.2 Նոյեմբերյան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից	84
2.6.3 Նոյեմբերյան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ	93
Գլուխ 3: Աղբահանության ոլորտում հանրային ծառայությունների մատուցման համեմատական վերլուծություն	97
3.1 Խոշորացված համայնքների միջեվ համեմատությունն ըստ աղբահանության ոլորտում համայնքների տեխնիկական ապահովվածության	97
3.2 Խոշորացված համայնքների համեմատությունն ըստ օբյեկտիվ եվ սուբյեկտիվ ցուցանիշների համադրության	99
Գլուխ 4 Ֆինանսական հետազոտության արդյունքներն ըստ խոշորացված համայնքների	102
4.1 Շիրակի մարզի Ախուրյան և Աշոցք խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում	102
4.2 Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում ...	111
4.3 Լոռու մարզի Ստեփանավան և Թումանյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում ...	121
Հիմնական եզրակացություններ և առաջարկություններ	129
Հավելված 1. Տնային տնտեսությունների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների հարցաթերթ	134
Հավելված 2. Աղբահանության ոլորտի մոնիթորինգային ստուգաթերթեր	138
Հավելված 3: Խոշորացված համայնքներում աղբահանության բաղադրիչներից բնակչության բավարարվածությունն ըստ առանձին բնակավայրերի	144
Հավելված 4 Ախուրյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվությունն ըստ ուսումնասիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ	179
Հավելված 5 Դիլիջան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվությունն ըստ ուսումնասիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ	182
Հավելված 6 Նոյեմբերյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվությունն ըստ ուսումնասիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ	188

Հավելված 7 Թումանյան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնասիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ	190
Հավելված 8 Ստեփանավան համայնքի բյուջեի 2014-2018թթ հաշվետվություն ըստ ուսումնասիրված երեք ոլորտների/համայնքապետարանի կողմից ստացված տվյալներ	192

Կիրառված եզրույթներ

ՀամաԶարԿ	Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման կոալիցիա
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՏՏ	Տնային տնտեսություն

Համառոտագիր

«Մասնակցային մոնիտորինգ՝ հանուն ինելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագիրն իրականացվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ենթադրամաշնորհի շրջանակում՝ ««Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Ծրագրի շրջանակում 2018թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի 3 մարզերի 6 խոշորացված համայնքներում իրականացվել է հետազոտություն, որն ուղղված է եղել համայնքի կողմից մատուցվող մի շարք ծառայությունների որակի գնահատմանը, իրականացվող ծախսերի արդյունավետության գնահատմանը: Ծրագրում ներառված 3 մարզերն են Շիրակը, Լոռին, Տավուշը, որոնցից յուրաքանչյուրում համապատասխանաբար ընտրվել են երկու խոշորացված համայնքներ: Շիրակի մարզում՝ Ախուրյանը և Աշոցքը, Լոռվա մարզում՝ Ստեփանավանը և Թումանյանը, Տավուշի մարզում՝ Դիլիջանը և Նոյեմբերյանը: Հետազոտության մոնիտորինգային մասն ուղղված է եղել ընտրված համայնքներում համայնքապետարանների կողմից մատուցվող **աղբահանության և սանիտարական մաքրման** որակի գնահատմանը: Հետազոտությունը բաղկացած է եղել երկու բաղադրիչներից:

Առաջին բաղադրիչի շրջանակներում իրականացվել է մատուցվող ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատում, որի համար կիրառվել է քանակական դեմ առ դեմ հարցումների մեթոդը՝ քվոտային ընտրանքի հիման վրա: Ընդհանուր առմամբ իրականացվել է **902** հարցում:

Երկրորդ բաղադրիչի շրջանակներում խոշորացված համայնքներում իրականացվել է աղբահանության համակարգի մոնիտորինգ: Խոշորացված համայնքների մաս կազմող բոլոր բնակավայրերում դիտարկման են ենթարկվել փողոցներում տեղադրված աղբի կոնտեյներները, աղբատար մեքենաները, այցելություններ են իրականացվել քաղաքային/ կենտրոնացված աղբավայրեր: Ընդհանուր առմամբ, դիտարկման ցանկում ներառված են եղել շուրջ **249** փողոցներ:

Հետազոտության ֆինանսական վերլուծության մասը ներառում է նշված 6 խոշորացված համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում իրականացվող ծախսերի վերլուծությունը, համայնքներում ստեղծվող կապիտալ ֆոնդերի ձևավորումը և գնահատումը:

Հետազոտության շրջանակում «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ իրականացվել է նաև Town Hall քննարկում 3 մարզերի շուրջ 350 բնակիչների շրջանում՝ ոլորտային հիմնախնդիրների վերհանման և լուծումների նախանշման վերաբերյալ:

Ներածություն

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16.12.2016 ընդունված օրենքի Հոդված 12-ի համաձայն համայնքի պարտադիր խնդիրների մեջ է մտնում համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում հանրային ծառայությունների մատուցումը տեղական ինքնակառավարման մարմինների կարևոր գործառնություններից մեկն է և սովորաբար ներառված է համայնքային զարգացման ծրագրերում, սակայն համայնքապետարանները օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված չեն կարողանում լիարժեք իրականացնել այս ոլորտներում իրենց գործառնությունները: Ուստի, այս ոլորտում առանցքային խնդիրների վերհանումը, դրանց վերաբերյալ հանրային քաղաքականությունների մշակման, բարելավման աջակցությունը և մոնիթորինգի իրականացումը համայնքների զարգացման համար ունեն ռազմավարական նշանակություն, ինչին էլ ուղղված է այս հետազոտությունը:

1. Հետազոտության առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

- 1) Բնակչության բավարարվածությունը աղբահանության ծառայություններից
- 2) Պարզել, թե բնակավայրում ինչպես է կազմակերպվում աղբահանությունը
- 3) Պարզել, թե որքանով են համայնքի բնակիչները բավարարված աղբահանության ծառայությունների որակից
- 4) Պարզել, թե որքանով են աղբահանության ծառայությունների մատուցումը ֆինանսապես մատչելի բնակիչների համար

Աղբի կոնտեյներներ

- 1) Բացահայտել աղբի կոնտեյներների տարողունակությունը և խտությունն ըստ բնակիչների թվի,
- 2) Պարզել աղբի կոնտեյներների տեղակայման վայրերի համապատասխանությունը օրենքով սահմանված նորմերին,
- 3) Պարզել աղբի կոնտեյներների տեղադրման սանիտարական նորմերի պահպանությունը,
- 4) Բացահայտել աղբի կոնտեյներների հարակից տարածքներում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանության աստիճանը,
- 5) Բացահայտել՝ արդյոք համայնքում առկա է պլաստիկ շշերի համար տարբերակված աղբահանություն:

Սպասարկող անձնակազմ և աղբատար մեքենաներ

- 1) Դիտարկել սպասարկող անձնակազմի համար սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի պահպանությունը,
- 2) Դիտարկել աղբատար մեքենաների կողմից սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի պահպանությունը,

Բնակավայրերի տարածքում գործող չարտոնված աղբանոցներ

- 1) Բացահայտել բնակավայրերի ներսում առկա չարտոնված աղբավայրերի քանակը,
- 2) Բացահայտել բնակավայրերի ներսում չարտոնված աղբավայրերի առկայության կապը կոնտեյներների բացակայության հետ:

- 3) Ուսումնասիրել բնակավայրերի տարածքով անցնող գետերի կամ ջրատար առուների աղտոտվածությունը կենցաղային աղբով:

Քաղաքային բնակավայրերում բակերի, միջբակավային տարածքների, փողոցների, հրապարակների, զբոսայգիների և պուրակների սանիտարական մաքրություն

- 1) Բացահայտել, թե քաղաքային բնակավայրերում որքանով են պահպանվում բակերի, միջբակավային տարածքների, փողոցների, հրապարակների, զբոսայգիների և պուրակների սանիտարական մաքրությունը,
- 2) Բացահայտել, թե քաղաքային բնակավայրերի փողոցները, հրապարակները, զբոսայգիները և պուրակները որքանով են ապահովված աղբահոսությամբ:

Բնակավայրերը սպասարկող աղբավայրեր

- 1) Պարզել, թե որքանով են պահպանվում աղբավայրերի նկատմամբ սահմանված իրավական նորմերը:
- 2) Պարզել, թե արդյոք առկա են շրջակա միջավայրի զգայուն ընկալիչների վրա բնապահպանական ազդեցությունների ռիսկեր:

2. Ֆինանսական հետազոտության առջև դրվել են հետևյալ խնդիրները.

- 1) Ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքներում աղբահանության ոլորտում կատարված ծախսերի կառուցվածքի դինամիկան 2014-2018թթ համար
- 2) Վերլուծել աղբահանությանը հատկացված միջոցների տեսակարար կշիռը բյուջետային ծախսերում
- 3) Ուսումնասիրել ընտրված համայնքներում 1 բնակչին բաժին ընկնող աղբահանության ծախսերի դինամիկան մինչև համայնքների խոշորացումը և դրանից հետո
- 4) Ուսումնասիրել կապիտալ բնույթի ծախսերը աղբահանության ոլորտում մինչև խոշորանալը և խոշորանալուց հետո
- 5) Ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքների միավորումից հետո աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների քանակի փոփոխությունը:

Մույն հետազոտության շրջանակում վերապատրաստվել են **34** քաղաքացի-մոնիթորներ: Իրականացվել է **902** դեմ առ դեմ հարցում, դիտարկման են ենթարկվել **249** փողոցներ: Ուսումնասիրվել են 6 խոշորացված համայնքների կողմից աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում վերջին **4** տարիներին կատարված ծախսերի կառուցվածքն ու դինամիկան: Town Hall քննարկմանը մասնակցել են 3 մարզերի շուրջ **350** բնակիչներ՝ ոլորտային հիմնախնդիրների վերհանման և լուծումների նախանշման նպատակով:

Հետազոտությունը բաղկացած է համառոտագրից, ներածությունից, 4 գլուխներից, եզրակացությունից, առաջարկներից և հավելվածներից:

Գլուխ 1 Հետազոտության իրականացման մեթոդաբանություն

1.1 Հանրային ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատման տեսամեթոդական հիմքերը

Համայնքային մակարդակում մատուցվող ծառայությունների վերաբերյալ բնակչության կողմից տրված գնահատականները հնարավորինս մոտ են առկա իրավիճակին, քանի որ այս ոլորտներին բնակիչները պարբերաբար են առնչվում իրենց առօրյա կյանքում: Ուստի, կարող ենք ենթադրել, որ այս ոլորտների վերաբերյալ բնակիչների տված գնահատականները հնարավորինս «օտարված» չեն առկա իրավիճակից և արտացոլում են համայնքներում առկա իրական իրավիճակը: Սակայն, կարող է այնպես ստացվել, որ միննույն համայնքում բնակվող երկու հարևանները կարող են տեխնիկապես նույն բնութագրիչներն ունեցող համայնքային ծառայությունների վերաբերյալ տալ տարբեր գնահատականներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես վերջիններիս բնորոշ ենթամշակութային տարբերություններով, այնպես էլ տվյալ համայնքային ծառայությունը կարևորելու հանգամանքով: Ուստի, ուսումնասիրության ենթակա հանրային ծառայություններից բնակչության բավարարվածության գնահատման համար կիրառվել են բավարարվածության սուբյեկտիվ և օբյեկտիվ ցուցանիշներ: Օբյեկտիվ ցուցանիշները վերաբերում են այս կամ այն համայնքային ծառայության մատուցման օբյեկտիվ պարամետրերին, օրինակ, ինչ պարբերականությամբ է մատուցվում տվյալ ծառայությունը, ինչ որակով, առկա են արդյոք խնդիրներ և այլն: Մուբյեկտիվ ցուցանիշները վերաբերում են տվյալ ծառայություններից կամ վերջնական արդյունքում առկա իրավիճակից բնակչության գոհունակությանը: Աղբահանության դեպքում, օրինակ, գյուղական բնակավայրերում կարող է պարզվել, որ համայնքապետարանը չի իրականացնում աղբահանություն, և համայնքի բնակիչներն իրենց աղբը կուտակում են յուրաքանչյուր տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրում: Տվյալ դեպքում կարող է ստացվել, որ համայնքի բնակիչները դժգոհ չլինեն աղբահանության իրականացման այսպիսի տարբերակից, սակայն համայնքային ծառայությունների մատուցման տեսանկյունից աղբահանության այսպիսի կազմակերպումը կարող ենք համարել անբավարար: Հաշվի առնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներին տրված գնահատականները՝ կարող ենք առանձնացնել չորս իրավիճակներ, որտեղ օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները կարող են համընկնել կամ չհամընկնել՝

1. **Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները դրական են:** Այս դեպքում հանրային ծառայությունները մատուցվում են բավարար որակով և բնակչությանը բավարարում են մատուցվող ծառայությունների որակը:
2. **Օբյեկտիվ ցուցանիշները դրական են, սուբյեկտիվ ցուցանիշները՝ բացասական:** Այս իրավիճակը նշանակում է, որ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակը կարող ենք համարել բավարար, սակայն բնակչությունը բավարարված չէ առկա իրավիճակով, ինչը նշանակում է, որ համայնքի բնակիչների շրջանում համայնքապետարանից ակնկալիքները ավելի բարձր են:

3. **Օբյեկտիվ ցուցանիշները բացասական են, սուբյեկտիվ ցուցանիշները՝ դրական:** Այս իրավիճակը նշանակում է, որ համայնքապետարանների կողմից չեն մատուցվում պատշաճ որակի հանրային ծառայություններ, սակայն բնակչությունը բավարարված է առկա իրավիճակով, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ բնակիչները չեն կարևորում պատշաճ հանրային ծառայությունների ստացումը և առկա ցածր որակի ծառայությունները կամ նույնիսկ նրանց բացակայությունը համարում են «բավարար»՝ չունենալով առավել լավ ծառայություններ ստանալու ակնկալիքներ:
4. **Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները բացասական են:** Այս իրավիճակը նշանակում է, որ հանրային ծառայությունների մատուցումը բավարար որակով չի իրականացվում և բնակչության շրջանում առկա է հիմնավորված դժգոհություն:

Նշված չորս իրավիճակները կարող ենք ներկայացնել մատրիցային տեսքով՝

Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների փոխհարաբերությունները		Սուբյեկտիվ ցուցանիշներ	
		Դրական	Բացասական
Օբյեկտիվ ցուցանիշներ	Դրական	(1) Ծառայությունների բարձր որակ	(2) Բարձր ակնկալիքներ
	Բացասական	(3) Բավարարվածության պարադոքս	(4) Ծառայությունների ցածր որակ

Աղյուսակ 1.1.1 Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների փոխհարաբերությունները

Կախված նրանից, թե հետազոտության արդյունքում նշված մատրիցայի որ իրավիճակը կբացահայտվի՝ հանրային ծառայությունների որակի բարելավմանն ուղղված առաջարկությունները կարող են տարբեր լինել: Օրինակ, 2-րդ իրավիճակի համար կարող ենք ենթադրել, որ հնարավոր է որ համայնքապետարանի կողմից չի իրականացվում պատշաճ հաղորդակցություն համայնքի բնակիչների հետ և վերջիններս իրազեկված չեն համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ: 3-րդ իրավիճակի համար կարող ենք առաջարկել բարձրացնել բնակչության իրազեկվածությունը համայնքապետարանի գործառույթների շրջանակի վերաբերյալ և այլն:

Աղբահանության ոլորտում համայնքի բնակիչների բավարարվածության գնահատման համար առանձնացվել են ոլորտի բաղադրիչներ, որոնց շուրջ էլ իրականացվել է գնահատումը (Աղյուսակ 1.1.2): Գնահատումն իրականացվել է ինչպես ամբողջ խոշորացված համայնքի համար, այնպես էլ հնարավորության դեպքում դուրս են բերվել առանձին ցուցանիշներ համայնքի մաս կազմող բնակավայրերի համար:

Գնահատման բաղադրիչ	Գնահատման բաղադրիչի ցուցանիշ
Աղբահանության կազմակերպում	<ul style="list-style-type: none"> ✓ աղբամաններ և աղբարկղեր: առկայություն, բավարար քանակ, հարմար տեղադիրք, որակ, տարողունակություն ✓ աղբամանների և աղբարկղերի հարակից տարածքում սանիտարական վիճակ և մաքրություն ✓ աղբը տեղափոխող մեքենաների առկայություն ✓ աղբի մաքրման հաճախականություն և որակ ✓ օգտվողների համար ֆինանսական մատչելիություն (եթե կիրառելի է) ✓ բնակիչ-անձնակազմ հարաբերություններ (եթե կիրառելի է)

Աղյուսակ 1.2.2: Համայնքային ծառայությունների գնահատման բաղադրիչները

Համայնքային ծառայություններից բավարարվածության մակարդակների ներկայացման համար կիրառվել է հետևյալ որակական (կարգային) սանդղակը՝

- «Շատ բարձր», եթե տվյալ բաղադրիչի որակից «Լիովին բավարարված» կամ «Ավելի շուտ բավարարված» հարցվածների քանակը մեծ է կամ հավասար 80%-ի,
- «Բարձր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [60%; 80%) միջակայքում,
- «Միջին», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [40%; 60%) միջակայքում,
- «Ցածր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [20%; 40%) միջակայքում,
- «Շատ ցածր», եթե ցուցանիշի արժեքը գտնվել է [0%; 20%) միջակայքում:

Աղբահանության ոլորտի մոնիտորինգի համար սահմանվել են հետևյալ ցուցանիշները՝

Ցուցանիշ A: Տվյալ տարածքում 1000 բնակչությանը սպասարկող կոնտեյներների քանակ (A=տարածքում ապրող բնակչության թիվ/տարածքում առկա աղբի կոնտեյներների քանակ => հաշվարկած 1000 բնակչի հաշվով):

Ցուցանիշ B: Քաղաքային բնակավայրերում 800 քառակուսի մետրին բաժին հասնող աղբանոթների քանակ:

Ցուցանիշ C: Բնակավայրի տարածքում անօրինական բացված աղբավայրերի քանակ:

1.2 Աղբահանության կազմակերպման իրավական պահանջները

Հայաստանի հանրապետությունում աղբահանության աշխատանքները կանոնակարգելու և իրականացնելու գործառնություններով զբաղվում են տեղական ինքնակառավարման մարմինները, առողջապահության, բնապահպանության և քաղաքաշինության նախարարությունները: Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «ՏԻՄ-ի մասին», «Թափոնների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16.12.2016 ընդունված օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է համայնքի պարտադիր խնդիրները, որոնց մեջ է մտնում նաև համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Համաձայն սույն օրենքի հոդված 18-ի 20-րդ կետի՝ համայնքի ավագանին «իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ», իսկ նույն օրենքի 42-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը «կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ»: Նույն օրենքի հոդված 88-ը սահմանում է, որ Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ այդ թվում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման համար համայնքի ավագանին կարող է սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ:

ՀՀ ԱԺ-ի կողմից 06.23.2011թ. ընդունված և 06.08.2011թ. ուժի մեջ մտած «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին»⁴ օրենքը կարգավորվում է ՀՀ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները, սահմանելով.

- աղբահանության վճարը, մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, պարտականությունները, պատասխանատվությունը:
- ՏԻՄ մարմինների լիազորությունների իրականացման կարգը՝ աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառում:

Համաձայն սույն օրենքի՝ աղբահանությունը բնակավայրերում գոյացող աղբի հավաքումը, պահումը, փոխադրումը և աղբավայրում տեղադրումն է: Իսկ սանիտարական մաքրումը համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, բակերի, մայթերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումն է աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

Թափոնների կառավարման ոլորտում տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավահարաբերությունները կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով, ընդունված 24.11.2014¹, որի հոդված 9-ի համաձայն թափոնների գործածության ոլորտում առողջապահության բնագավառի կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝ թափոնների գործածությանը վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում մարդու առողջության համար անվտանգության պահանջների մշակումը եւ թափոնների գոյացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասագերծման եւ թաղման ընթացքում մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով սանիտարական եւ հակահամաճարակային կանոնների ու նորմերի, հիգիենիկ նորմատիվների մշակումը եւ դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության

¹ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=2136>

իրականացումը: Նույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանվում է թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում ա) իրականացնում է հսկողություն աղբահանման նկատմամբ, բ) կազմում է տարածքների սանիտարական մաքրման սխեմաները, գ) իրականացնում է չհսկվող եւ չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը), դ) կազմակերպում է ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցությունը: Թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են 16.12.2016 ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ իրավասություններ, այդ թվում համաձայն օրենքի 88-րդ հոդվածի աղբահանության եւ սանիտարական մաքրման կազմակերպման համար համայնքի ավագանին կարող է սահմանել համայնքի բնակիչների կողմից բյուջե մուտքագրվող վճարներ:

«Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը եվ թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.002-09 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 22 դեկտեմբերի 2009թ. հրամանի համաձայն սահմանված են հետևյալ նորմատիվային պահանջները²

- Կոնտեյներները տեղադրում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում կոնտեյներները տեղադրում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա: Հանգստի գոտիներում, լողափերում կոնտեյներները տեղադրվում են 3500-4000մ² մակերեսին 1 կոնտեյների հաշվարկով:
- Կոնտեյներները տեղադրում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցի մոտեցման համար հարմար դիրքով, ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով հարթակների վրա: Հարթակը երեք կողմից ունենում է պատնեշ կամ մետաղյա դեկորատիվ ցանկապատ: Կոնտեյներները չեն տեղադրում փողոցների մայթերի և սիգամարգերի վրա:
- Կոնտեյներները ունենում են կափարիչներ և աղբով լցվում են ծավալի երկու երրորդից ոչ ավելի մակարդակով:
- Կոնտեյներները հեշտությամբ նույնականացվում են և պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը: Կոնտեյներները ունենում են մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ:
- Մպառման թափոնները փոխադրում են աղբատար փոխադրամիջոցներով, որոնց կառուցվածքը բացառում է (փակ թափքերով) շրջակա միջավայրի աղտոտումը: Աղբատար փոխադրամիջոցները հեշտությամբ նույնականացվում և պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը:
- Աղբատար փոխադրամիջոցի կառուցվածքը ապահովում է աղբի խտացումը, ունենում է աղբաջրերը հավաքող համակարգ, կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք և/կամ կոնտեյներները լվանալու համակարգ:
- Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է կոնտեյներների հարակից տարածքի աղբը: Աղբահանության ժամանակ տեղափոխում են նաև աղբակույտերը և տերևակույտերը, դրանց այրումը արգելվում է:

² <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56273>

- Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից:

Աղբանոթների համար սահմանվում են հետևյալ իրավական կարգավորումները՝

- Փողոցներում, այգիներում, պուրակներում, կայարաններում, շուկաներում, տոնավաճառներում, ստորգետնյա անցումներում, հրապարակներում, լողափերում տեղադրվում են աղբանոթներ, որոնք ունեն ոչ ավելի, քան 100 լ տարողություն:
- Փողոցներում աղբանոթների միջև ապահովվում է ոչ ավելի, քան 70 մ հեռավորություն: Պուրակներում, զբոսայգիներում աղբանոթների քանակությունը որոշվում է 800 մ² մակերեսին 1 աղբանոթի հաշվարկով: Գլխավոր զբոսուղիներում, ինչպես նաև լողափերում աղբանոթների միջև հեռավորությունը ընդունվում է 40 մ-ից ոչ ավելի: Լողափերում աղբանոթները տեղադրվում են ջրեզրից 10 մ հեռավորության վրա, 1600 մ² մակերեսին 1 աղբանոթի կամ 50 մարդու համար՝ 1 աղբանոթի հաշվարկով:
- Աղբանոթները ունենում են մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ և տեղափոխման համար ապամոնտաժման հնարավորություն: Աղբանոթները լվացվում և ախտահանվում են (18 կետում նշված ախտահանիչ լուծույթներով) ամիսը 1 անգամ՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից:
- Աղբանոթների տեղադրումը պարտադիր է մետրոյի, ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, ստորգետնյա անցումների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգիներում, պուրակներում, կայարաններում, շուկաներում, տոնավաճառներում, լողափերում, հանգստի գոտիներում և այլն:

Սպառման թափոնների մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, թաղմանը եվ վնասագերծմանը ներկայացվող հիգիենիկ պահանջների համաձայն՝ սպառման թափոնների թաղումը (տեղադրումը) և վնասագերծումը իրականացվում է հատուկ հատկացված տեղերում՝ սպառման թափոնների աղբավայրերում (պոլիգոններում) կամ վնասագերծման գործարաններում:

Նոր կառուցվող, վերակառուցվող սպառման թափոնների աղբավայրերին (պոլիգոններին) ներկայացվում են հետևյալ հիգիենիկ պահանջները՝

- Սպառման թափոնների պոլիգոնների հողամասի ընտրման ժամանակ հաշվի են առնվում հողի հիդրոերկրաբանական առանձնահատկությունները: Սպառման թափոնների պոլիգոնները չեն տեղակայվում ճահճակալած հողերում, ջրամատակարարման, հանքային ջրերի աղբյուրների սանիտարական պահպանման I, II և III գոտիներում, ջրատարների սանիտարական պահպանման շերտագծում, առողջարանների սանիտարական պահպանման I և II գոտիներում, ջրատար հորիզոնների ջրերի մակերևույթ դուրս գալու վայրերում, հատուկ պահպանվող տարածքներում, զբոսայգիների, պուրակների, այգիների և այլ կանաչ տարածքներում:
- Սպառման թափոնների պոլիգոնի հիմնական մասը զբաղեցնում է սպառման թափոնների պահեստավորման տեղամասը: Պահեստավորման տեղամասի ողջ տարածքով նախատեսվում է փոստրակի կառուցում՝ սպառման թափոնների շերտերով կուտակման, խտացման և հողով ծածկման համար: Հողը պահեստավորվում է փոստրակի շրջագծով: Փոստրակի հատակը լինում է գրունտային ջրերի մակարդակից առնվազն 1 մ բարձր:
- Ստորգետնյա ջրերը աղտոտումից զերծ պահելու նպատակով սպառման թափոնների պոլիգոնի պահեստավորման տեղամասը ապահովվում է կուտակված սպառման թափոնների խտացված ծավալի խորությունում առաջացող կեղտաջրերի հեռացման համակարգով:
- Աղբի կուտակման տեխնոլոգիական գործընթացը կարող է ներառել կուտակված սպառման թափոնների խտացված ծավալի խորությունում առաջացող գազերի հեռացման հնարավորությունը՝

բացառելով խտացված սպառման թափոնների ինքնայրումը /սպառման թափոնների խոնավացում, հողի շերտով մեկուսացում, խտացում/:

- Սպառման թափոնների պոլիգոնը ունենում է տնտեսակենցադային գոտի, կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, տեխնիկական ջրի պահուստային տարողություն:
- Տնտեսակենցադային գոտում տեղակայվում են աշխատող անձնակազմի վարչա-կենցադային շենքերը իրենց սանիտարակենցադային սենքերով (հանդերձարան, ցնցուղարան, սննդի ընդունման սենք):
- Սպառման թափոնների պոլիգոնի տարածքը շրջապատից մեկուսացվում է ցանկապատով:
- Աղբատար փոխադրամիջոցների թափքերը և անվաղողերը լվացվում և ախտահանվում են յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո:
- Սպառման թափոնների պոլիգոնում թափոնները չեն այրում:

Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները հետևյալն են՝

- Շենքերի բակերը, միջբակային տարածքները, փողոցները, ճանապարհները, հրապարակները, զբոսայգիները, պուրակները ենթարկում են սանիտարական մաքրման, իսկ ամռան ամիսներին փողոցները ենթակա են նաև ջրման: Բնակավայրերը պահվում են պատշաճ սանիտարական վիճակում՝ սպառման թափոններից, շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող աղբից, կենցադային ավելորդ իրերից, փոշու կուտակումներից զերծ:
- Բնակավայրերի շենքերի բակերի, միջբակային տարածքների, փողոցների, ճանապարհների հետիոտնի համար նախատեսված և երթևեկելի մասերը, հրապարակների, զբոսայգիների հետիոտնի մասերը մաքրվում են ձյունից և սառույցից:

1.3 Հետազոտության նպատակ եվ խնդիրներ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ընտրված 6 խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների մատուցման ոլորտը և գնահատել համայնքների բնակիչների բավարարվածությունը համայնքապետարանների կողմից մատուցվող աղբահանության ծառայությունների որակից:

Հետազոտության առջև դրված են հետևյալ խնդիրները՝

- **Բնակչության բավարարվածությունը աղբահանության ծառայություններից՝**
 - Պարզել, թե բնակավայրում ինչպես է կազմակերպվում աղբահանությունը
 - Պարզել, թե որքանով են համայնքի բնակիչները բավարարված աղբահանության ծառայությունների որակից
 - Պարզել, թե որքանով են աղբահանության ծառայությունների մատուցումը ֆինանսապես մատչելի բնակիչների համար
- **Աղբի կոնտեյներներ**
 - Բացահայտել աղբի կոնտեյներների տարողունակությունը և խտությունն ըստ բնակիչների թվի,
 - Պարզել աղբի կոնտեյներների տեղակայման վայրերի համապատասխանությունը օրենքով սահմանված նորմերին,
 - Պարզել աղբի կոնտեյներների տեղադրման սանիտարական նորմերի պահպանությունը,
 - Բացահայտել աղբի կոնտեյներների հարակից տարածքներում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանության աստիճանը,
 - Բացահայտել՝ արդյոք համայնքում առկա է պլաստիկ շշերի համար տարբերակված աղբահանություն:
- **Սպասարկող անձնակազմ և աղբատար մեքենաներ**
 - 3) Դիտարկել սպասարկող անձնակազմի համար սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի պահպանությունը,
 - 4) Դիտարկել աղբատար մեքենաների կողմից սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի պահպանությունը,
- **Բնակավայրերի տարածքում գործող չարտոնված աղբանոցներ**
 - Բացահայտել բնակավայրերի ներսում առկա չարտոնված աղբավայրերի քանակը,
 - Բացահայտել բնակավայրերի ներսում չարտոնված աղբավայրերի առկայության կապը կոնտեյներների բացակայության հետ:
 - Ուսումնասիրել բնակավայրերի տարածքով անցնող գետերի կամ ջրատար առուների աղտոտվածությունը կենցաղային աղբով:
- **Քաղաքային բնակավայրերում բակերի, միջբակավային տարածքների, փողոցների, հրապարակների, զբոսայգիների և պուրակների սանիտարական մաքրություն**

- Բացահայտել, թե քաղաքային բնակավայրերում որքանով են պահպանվում բակերի, միջբակավային տարածքների, փողոցների, հրապարակների, զբոսայգիների և պուրակների սանիտարական մաքրությունը,
- Բացահայտել, թե քաղաքային բնակավայրերի փողոցները, հրապարակները, զբոսայգիները և պուրակները որքանով են ապահովված աղբանոթներով:
- **Բնակավայրերը սպասարկող աղբավայրեր**
 - Պարզել, թե որքանով են պահպանվում աղբավայրերի նկատմամբ սահմանված իրավական նորմերը:
 - Պարզել, թե արդյոք առկա են շրջակա միջավայրի զգայուն ընկալիչների վրա բնապահպանական ազդեցությունների ռիսկեր:

1.4 Հետազոտության մեթոդ և գործիքներ

Հետազոտության իրականացման համար կիրառվել են երկու մեթոդներ՝ բնակչության շրջանում քանակական դեմ առ դեմ հարցման մեթոդը և աղբահանության ոլորտի տարբեր բաղադրիչների դիտարկումը:

Աղբահանության ոլորտից բնակչության բավարարվածության գնահատման համար ընտրվել է բնակչության շրջանում **քանակական դեմ առ դեմ հարցման մեթոդը**: Մեթոդը նպատակահարմար է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտությունն ուղղված է խոշորացված համայնքների բնակչության լայն շերտերի կարծիքի ուսումնասիրությանը: Քանակական դեմ առ դեմ հարցումների իրականացման համար մշակվել և կիրառվել է կիսաձևայնացված հարցաթերթ (Հավելված 1): Հարցումներն անցկացվել են ծրագրի իրականացման շրջանակներում վերապատրաստված շուրջ 34 քաղաքացի-մոնիթորների կողմից:

Աղբահանության ոլորտի այս կամ այն բաղադրիչի որակից բնակչության բավարարվածությունը չափվել է հարցաթերթային հարցերի հնարավորինս միասնական ձևակերպումներով և կիրառվել է միասնական սանդղակ, ինչը հնարավորություն է տալիս դուրս բերել բավարարվածության մեկ միասնական ինդեքս: Հարցվողների բավարարվածության չափման համար հետազոտությունում կիրառվել է Լայկերտի սանդղակի տիպի քառաստիճան, առանց միջին կետի սանդղակներ: Մասնավորապես, աղբահանության այս կամ այն բաղադրիչից բնակչության բավարարվածության աստիճանի գնահատման համար կիրառվել է. «Որքանով եք բավարարված/որքանով եք գոհ ծառայություն/իրավիճակ/» հարցը, իսկ սանդղակը ստացել է հետևյալ բառային ձևակերպումը. 1. «Ընդհանրապես բավարարված չեմ», 2. «Ավելի շուտ բավարարված չեմ», 3. «Ավելի շուտ բավարարված եմ», 4. «Լիովին բավարարված եմ»: Համայնքնապետարանի աշխատանքի գնահատման համար կիրառվել է «ինչպես կգնահատեիք համայնքապետարանի աշխատանքը ոլորտ/իրավիճակ», իսկ որպես գնահատման սանդղակ կիրառվել է 1-ից 10 բալանոց սանդղակը: Սանդղակի միջին արժեք չի կիրառվել, որպեսզի տրված պատասխանները չկենտրոնանան միջին արժեքի շուրջ և առավելագույնս հնարավոր լինի դուրս բերել այս կամ այն ոլորտի կամ ծառայության դրական կամ բացասական գնահատված արժեքը:

Հետազոտության համար մշակված նախնական հարցաթերթը ենթակվել է պիլոտավորման: Ընդհանուր առմամբ, իրականացվել է հետազոտության ընտրանքի 2%-ի չափով պիլոտավորում, որը կազմել է 18 հարցաթերթ: Ըստ պիլոտավորման արդյունքների՝ մշակված հարցաթերթը փոփոխվել և վերջնականացվել է:

Աղբահանության ոլորտի մաս կազմող բաղադրիչների ուսումնասիրության համար համայնքներում իրականացվել է դիտարկում: Դիտարկվել են բնակավայրերում առկա աղբի կոնտեյներները, բնակավայրերի ներսում պատահական առաջացած աղբանոցները, աղբատար մեքենաները և սպասարկող աշխատակիցներն՝ իրենց պարտականությունները կատարելիս, բնակավայրը սպասարկող աղբավայրերը, քաղաքային բնակավայրերում բակերի, միջբակային տարածքների, փողոցների, հրապարակների, զբոսայգիների և պուրակների սանիտարական մաքրությունը, բնակավայրերի տարածքով անցնող գետերի և ջրատար առուների հունը: Դիտարկումն իրականացվել է կիսաձևայնացված ստուգաթերթերի միջոցով (Հավելված 2):

1.5 Հետազոտության ընտրանք

Հետազոտությունն ընդգրկում է Շիրակի մարզի Ախուրյան և Աշոցք, Լոռվա մարզի Ստեփանավան և Թումանյան, Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքները: Այն ընդգրկում է խոշորացված համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը: Գլխավոր համախմբությունը ներառում է հետազոտության շրջանակներում ընդգրկված խոշորացված համայնքներում մշտական բնակվող (նվազագույնը մեկ տարի) 18 և ավելի տարիքի բնակչությունը: Կիրառվել է քվոտային ընտրանքի տիպը: Այն **համամասնական** է բնակչության թվին **ըստ սեռի, տարիքի, մարզերի, խոշորացված համայնքի**:

Մահմանելով գլխավոր համախմբությունը որպես ընտրված համայնքներում մշտական բնակություն հաստատած 18 և ավելի տարիքի բնակչությանը, գլխավոր համախմբության ծավալը կկազմի 137.698 բնակիչ³: Երբ $N=137.698$, $\gamma=95\%$ և $\Delta=\pm 3.255$, իսկ 50%՝ պատասխանների բաշխման համար, ապա ընտրանքի ծավալը կկազմի՝ $n=900$: Ընտրանքի հաշվարկը կատարվել է այն ենթադրությամբ, որ խոշորացված համայնքներում բնակչության սեռատարիքային բաշխվածությունը նույնն է բոլոր համայնքներում: Որպեսզի հնարավոր լիներ ապահովել բոլոր խոշորացված համայնքներում հարցումների հնարավորինս համաչափ բաշխվածություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիլիջան, Նոյեմբերյան և Ստեփանավան քաղաքներում բնակչության թիվը առավել մեծ է և հարցումների առյուծի բաժինը անհրաժեշտ կլիներ իրականացնել հենց այս համայնքներում, ընտրանքի թվերը ըստ առանձին խոշորացված համայնքների հաշվվել է խոշորացված համայնքների բնակչության թվերի բնական հիմքով լոգարիթմի ցուցանիշին համամասնական: Խոշորացված համայնքների ներսում հարցումների քանակը չի բաշխվել առանձին բնակավայրերում բնակչության թվին համամասնորեն, քանի որ այդ դեպքում առավել փոքր բնակչություն ունեցող բնակավայրերին բաժին կհասներ 3-4 հարցում, ինչը հնարավորություն չէր տա օբյեկտիվորեն վերհանել տվյալ համայնքներում առկա պատկերը: Հետազոտության շրջանակներում խոշորացված համայնքը դիտարկվել է որպես մեկ միասնական համայնք, որի ներսում հարցումների քանակը բաշխվել է այնպես, որ առավելագույնս ներգրավված լինեն բոլոր բնակավայրերը, իսկ առանձին բնակավայրերի

³ Բնակչության թիվը դուրս է բերվել ընտրված մարզերի մարզպետարանների պաշտոնական կայք էջերում ներկայացված տվյալների հիման վրա

ներսում՝ բոլոր թաղամասերը: Համապատասխանաբար ընտրանքի բաշխումն ըստ առանձին խոշորացված համայնքների ներկայացված է Աղյուսակ 1.5.1-ում:

Բնակավայր	Համայնքում բնակչության թիվը (1)	բնակչության թվի բնական հիմքով լոգարիթմը (2)=ln(1)	բնակչության թվի բնական հիմքով լոգարիթմի %-ային բաշխվածությունը	Ընտրանքի նախնական բաշխումն ըստ համայնքների	Փաստացի ընտրանքի ծավալը
Ախուրյան	14321	9.57	17.32%	156	162
Աշոցք	5778	8.66	15.68%	141	137
Թումանյան	3676	8.21	14.86%	134	156
Ստեփանավան	14685	9.59	17.37%	156	134
Դիլիջան	18789	9.84	17.82%	160	160
Նոյեմբերյան	11600	9.36	16.94%	153	153
Ընդամենը	68849	-	100%	900	902

Աղյուսակ 1.5.1: Ընտրանքի բաշխումն ըստ խոշորացված համայնքների

Կիրառվել է քվոտային ընտրանքի մեթոդը՝ ըստ երկու չափորոշիչների. **տարիք և սեռ**: Ըստ տարիքի և սեռի քվոտաների տարաբաժանումն իրականացվել է բնակավայրի մակարդակում: Ըստ տարիքի բաժանումն իրականացվել է հետևյալ տարիքային խմբերի միջոցով, որի հիմքում ընկած է մարդու կյանքի փուլերը՝

- **18-22** տարեկան (երիտասարդության կամ ուսանողական տարիք)
- **23-45** տարեկան (ընտանիքի կազմման և կայացման փուլ)
- **46-62** տարեկան (արդյունքները վայելելու և/կամ կայունության փուլ)
- **63+** տարեկան (հանգստի/թոշակի փուլ)

Ըստ սեռային և տարիքային խմբերի ընտրանքի բաշխումն ունի Աղյուսակ 1.5.2-ում բերված տեսքը, որի սահմանման համար հիմք է ծառայել բնակչության առ 2017թ. հունվար ամիսը եղած պատկերը, որը ստացվել է համայնքապետարանների կողմից:

Տարիքային խումբ	18-22 տարեկան խումբ		23-45 տարեկան խումբ		46-62 տարեկան խումբ		63 և ավելի տարեկան խումբ		Ընդամենը հարցումներ
	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական	
Ախուրյան	10	7	37	36	26	25	8	13	162
Աշոցք	5	6	31	44	16	20	6	9	137
Թումանյան	2	7	21	33	22	22	10	17	134
Ստեփանավան	4	12	31	36	24	24	11	14	156

Դիլիջան	4	8	21	63	15	26	7	16	160
Նոյեմբերյան	5	7	31	38	15	25	11	21	153

Աղյուսակ 1.5.2. Փաստացի ընտրանքի բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի

Ընտրանքային քայլ: Քանի որ հետազոտությունն անդրադառնում էր բնակավայրերում մատուցվող աղբահանության ծառայությունների ոլորտի գնահատմանը, ապա առավել կարևորություն է տրվել համայնքներում իրականացվող հարցումների այնպիսի բաշխման ապահովմանը, որ ներառված լինեն համայնքի բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերի ներսում՝ տարբեր փողոցներում և բնակավայրի տարբեր հատվածներում բնակվող բնակիչները՝ ներառելով և՛ գլխավոր փողոցները, և՛ երկրորդական, և՛ ծայրամասային հատվածները: Հարցազրուցավարներին նախօրոք տրվել են այն փողոցները (սկզբնակետերը), որտեղից վերջիններս սկսել են հարցումների իրականացումը: Որպես ընտրանքային քայլ սահմանվել է երեք քայլը սեփական տների փողոցների համար, ինչը նշանակում է, որ որևէ փողոցի ընտրության դեպքում հաջորդ տնային տնտեսությունը ընկած է եղել հարցման փորձ/հաջողված հարցում արված տնային տնտեսությունից երեք տուն հեռավորության վրա: Քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի դեպքում ընտրանքային քայլը սահմանվել է երկուսը (յուրաքանչյուր երկրորդ շենքը), շենքի ներսում բնականների ընտրության համար քայլը եղել է կրկին երեքը, իսկ յուրաքանչյուր շենքերում առավելագույնը թույլատրված է եղել իրականացնել 2 հարցում: Տնային տնտեսության ներսում ռեսպոնդենտի ընտրությունը իրականացվել է ըստ քվոտային համապատասխանելիության սկզբունքի: Յուրաքանչյուր տնային տնտեսությունում իրականացվել է միայն մեկ հարցում:

1.6 Բնակավայրերի ներսում փողոցների ընտրությունը

Աղբահանության բաղադրիչների դիտարկման համար յուրաքանչյուր բնակավայրում դիտարկման ենթակա փողոցների քանակը սահմանվել է կախված բնակավայրի մեծությունից: Քաղաքային համայնքների դեպքում դիտարկման են ենթակա նաև գլխավոր հրապարակները, զբոսայգիները, պուրակները (եթե այդպիսիք եղել են) և բակային տարածքները: Ըստ այս չափորոշիչի մշտադիտարկման ենթակա փողոցների քանակը սահմանվել է համաձայն Աղյուսակ 1.6.1-ում բերված ցուցանիշների: Յուրաքանչյուր բնակավայրում պարտադիր դիտարկման է ենթակվել բնակավայրի գլխավոր փողոցը/փողոցները, որը համարվում է ամենաբանուկը և որի երկայնքով կազմակերպված է կանոնավոր տրանսպորտային երթևեկություն: Երկրորդական փողոցները և բակային տարածքները ընտրվել են բնակավայրերի տարբեր հատվածներում, այնպես որ հնարավոր լինի ապահովել բնակավայրի տարբեր թաղամասերի ներգրավվածությունը ուսումնասիրությունում: Ընտրված փողոցներն ուսումնասիրվել են ամբողջ երկարությամբ:

Բնակավայրերի մեծությունն ըստ բնակչության թվի	Մշտադիտարկման ենթակա տարածքներ			
	գլխավոր փողոց	երկրորդական փողոց	բակային տարածք	հրապարակ/զբոսայգի
Մինչև 300 բնակչություն ունեցող	1	3	0	0
301-ից 700	2	4	0	0

700-1500	2	5	0	0
1500-5000	3	6	0	0
5000-10000 բնակչություն	4	8	6	1
10.000 բնակչություն և ավելի	6	10	8	2*

Աղյուսակ 1.6.1. Մշտադիտարկման ենթակա փողոցների քանակն ըստ բնակավայրի մեծության

Ուսումնասիրության են ենթակվել նաև բնակավայրերի միջով հոսող գետերի կամ ջրատար առուների հունը, եթե այդպիսիք եղել են և տեղանքը մատչելի է եղել դիտարկման համար: Համակարգողների կողմից այցելություն է կատարվելու նաև բնակավայրերը սպասարկող աղբավայրեր, որոնք օրենքով սահմանված կարգով հատկացված են բնակավայրերին որպես աղբավայրեր և ծառայում են այդ նպատակին:

Ընդհանուր առմամբ, դիտարկման են ենթարկվել 249 փողոցներ, որոնցից 85-ը եղել են գլխավոր փողոցներ, 164-ը՝ երկրորդական: Դիտարկման ենթարկված փողոցների թիվն ունի Աղյուսակ 1.6.2-ում ներկայացված պատկերը:


Բնակավայր	Դիտարկված փողոցների թիվը	Որից գլխավոր	Որից երկրորդական
Ախուրյան	59	18	41
Աշոցք	57	18	39
Թումանյան	35	12	23
Ստեփանավան	30	10	20
Դիլիջան	26	9	17
Նոյեմբերյան	42	18	24
Ընդամենը	249	85	164

Աղյուսակ 1.6.2. Խոշորացված համայնքներում դիտարկված փողոցների թիվը

1.7 Հարցման ենթարկված բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը

Քանակական դեմ առ դեմ հարցմանը մասնակցել են 902 բնակիչներ խոշորացված համայնքներից, ընդ որում հարցման ենթարկված բնակիչների 41%-ը եղել են արական սեռի ներակայացուցիչներ, 59%-ը՝ իգական:


Ըստ առանձին համայնքների հարցման ենթարկված բնակչության սեռային կազմը ներկայացված է Գրաֆիկ 1-ում:




Գրաֆիկ 1. Հարցման ենթարկված բնակչության սեռային կազմն ըստ խոշորացված համայնքների

Ինչ վերաբերում է հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմին, ապա քանակական դեմ առ դեմ հարցումներում ներգրավված բնակչության 9%-ը եղել է 18-ից 22 տարեկանների տարիքային խմբից, 47%-ը՝ 23-45 տարեկանների խմբից, 29%-ը՝ 46-62, իսկ 16%-ը՝ 63 տարեկան և ավելի տարիքային խմբից: Հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմն ըստ խոշորացված համայնքների ներկայացված է Գրաֆիկ 2-ում:

Ըստ կրթական խմբերի հարցման ենթարկված բնակչության կազմը առանձին համայնքների համար ներկայացված է Գրաֆիկ 3-ում: Համաձայն արդյունքների հարցման ենթարկված բնակիչների 1%-ն ունեցել է տարրական կրթություն, 5%-ը՝ հիմնական, իսկ 39%-ը՝ միջնակարգ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն է ստացել հարցման ենթարկված բնակիչների 3%-ը, իսկ 24%-ը ստացել է միջին մասնագիտական կրթություն: Բարձրագույն (բակալավր, մագիստրոս) և հետբուհական կրթություն ունեցել է հարցման ենթարկված բնակիչների 27%-ը:




Գրաֆիկ 2. Հարցման ենթարկված բնակչության տարիքային կազմն ըստ խոշորացված համայնքների



Գրաֆիկ 3. Բնակչության կազմն ըստ կրթական մակարդակի


Հարցման ենթարկված ընտանիքների միջին ամսական եկամուտը 34% դեպքերում կազմում է 50.000 ՀՀԴ-ից պակաս, իսկ 35% դեպքերում կազմում է 50,000-ից 100,000 ՀՀԴ: Ընդհանուր առմամբ հարցման ենթարկված

ընտանիքների միայն 30%-ի միջին ամսական եկամուտն է կազմում 100,000-ից ավել, ընդ որում, այստեղ մեծ կշիռ են կազմում 100,000-ից 200,000 ՀՀԴ սահմաններում եկամուտ ունեցող ընտանիքները, որոնք կազմում են ընդհանուր առմամբ հարցման ենթարկված տնային տնտեսությունների 14%-ը: Տնային տնտեսությունների միայն 6%-ն է ամսական կտրվածքով ստանում 200,000 ՀՀԴ-ից ավել եկամուտ: Բնակչության կազմն ըստ եկամուտների մակարդակի ներկայացված է Գրաֆիկ 4-ում:



Գրաֆիկ 4. Հարցման ենթարկված տնային տնտեսությունների կազմն ըստ եկամուտների մակարդակի

Հարցման ենթարկված բնակչության 20%-ը նշել է, որ իրենց «ընտանիքի եկամուտը չի բավականացնում սնունդ գնելու համար», 39%-ը, որ «ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար»: Բնակչության 37%-ը նշել է, որ իրենց ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ և հագուստ, բայց ոչ թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար, մինչդեռ 4%-ը համարում է, որ ընտանիքի եկամուտը բավականացնում է թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար: Հարցման ենթարկված բնակչության միայն 0,2%-ն է նշել, որ ընտանիքի եկամուտը բավականացնում է մեքենա կամ բնակարան գնելու համար:



Գրաֆիկ 5. Հարցման ենթարկված տնային տնտեսությունների կազմն ըստ եկամուտների մակարդակի

1.8 Դաշտային աշխատանքների կազմակերպում և որակի ստուգում

Դաշտային աշխատանքներում ներգրավված են եղել երեք մարզային համակարգողներ և շուրջ 34 վերապատրաստված քաղաքացի-մոնիթորներ: Համակարգողները պատասխանատու են եղել բնակավայրի ներսում հարցումների այնպիսի բաշխման համար, որ հնարավոր լիներ ապահովել բնակավայրերի բոլոր թաղամասերի, կենտրոնական և երկրորդական փողոցների ներգրավվածությունը:

Հավաքագրված տվյալների որակի բարձրացման և տվյալների նկատմամբ վստահելիության ապահովման համար իրականացված հարցաթերթերի 10%-ը պատահականության սկզբունքով ենթարկվեն են ստուգման հեռախոսային ստուգիչ զանգերի միջոցով (շուրջ 45 հարցաթերթ):

1.9 Հետազոտության սահմանափակումներ

Հետազոտությունն ունի հետևյալ սահմանափակումները՝

- Քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքները մեկնաբանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տվյալները ներկայացուցչական չեն առանձին բնակավայրերի և խոշորացված համայնքների համար, թեև յուրաքանչյուր խոշորացված համայնքի համար հարցումների քանակը բաշխված է եղել այնպես, որ հնարավորություն է տվել վերհանել համայնքներում աղբահանության ոլորտի հետ կապված առկա պատկերը:
- Թեև համայնքներից ստացված տեղեկատվության համաձայն մի շարք խոշորացված համայնքներում իրականացվում էր աղբահանություն աղբատար մեքենաների միջոցով, սակայն դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում մոնիթորները որոշ համայնքների դեպքում չեն հանդիպել այդպիսիք, ինչի պատճառով աղբատար մեքենաների դիտարկման հատվածում տեղեկատվությունը թերի է:
- Քանի որ Նոյեմբերյան համայնքի մի շարք բնակավայրեր սահմանամերձ են, մոնիթորինգ հնարավոր է եղել իրականացնել առավել քիչ թվով փողոցներում՝ հաշվի առնելով քաղաքացի-մոնիթորների անվտանգության պահպանման պահանջը:

Գլուխ 2. Հետազոտության արդյունքների վերլուծությունը ըստ առանձին խոշորացված համայնքների

2.1 Աղբահանության իրականացումն ախուրյան խոշորացված համայնքում

2.1.1 Աղբահանության ոլորտում ախուրյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը

Աղբահանության ոլորտում խոշորացված համայնքների տեխնիկական հնարավորությունների բացահայտման համար համայնքապետարաններին ուղարկվել է տեղեկատվության հարցում, որի համաձայն համայնքները տրամադրել են տեղեկատվություն համայնքում առկա աղբատար մեքենաների, աղբարկղերի և հատկացված աղբավայրերի վերաբերյալ:

Ախուրյան համայնքում կենտրոնացված աղբահանություն իրականացվում է միայն Ախուրյան բնակավայրում համայնքում գործող «Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից: Համայնքն ունի առանց կողային բարձման ինքնաթափ 2 մեքենաներ (ԴԱ3)՝ 1988թ և 1989 թվականների արտադրության: Համայնքում աղբարկղերով ապահովված է միայն Ախուրյան բնակավայրը, որտեղ տեղակայված են 0,5-1մ³ տարողությամբ շուրջ 80 մետաղական աղբարկղեր: Այս աղբարկղերից 30-ը ցանցապատ են և նախատեսված են պլաստիկ շշերի համար (Աղյուսակ 2.1.1): Մեկական մետաղական աղբարկղեր են առկա Արևիկ, Բասեն և Կառնուտ բնակավայրերում, որոնք տեղադրված են համապատասխանաբար համայնքապետարանի, մանկապարտեզի և համայնքի կենտրոնի հարակից տարածքներում: Համաձայն համայնքապետարանի կողմից տրամադրված տվյալների այս աղբարկղերից աղբը պարբերաբար հեռացվում է աղբատար մեքենաներով, իսկ Կամո բնակավայրում գյուղապետարանը տեխնիկա է տրամադրում տարվա մեջ երկու-երեք անգամ տնային տնտեսությունների կուտակած աղբը հեռացնելու համար:

Բնակավայր	Բնակչության թիվը բնակավայրում	Աղբարկղերի առկայություն		
		Աղբարկղերի քանակ բնակավայրում	Աղբարկղերի տիպը (պլաստմասե, մետաղական, ներկված, փակվող կափարիչներով /չփակվող)	Աղբարկղերի տարողունակությունը
Ախուրյան	9246	50	մետաղական	0.8-1 խմ
		30	մետաղական, ցանցապատ	0.5 խմ
Այգաբաց	743	0	-	-
Արևիկ	1801	1	մետաղական	0.8-1 խմ
Բասեն	1725	1	մետաղական	0.8-1 խմ
Կամո	1475	0	-	-
Կառնուտ	999	1	մետաղական	0.8-1 խմ
Հովիտ	534	0	-	-

Ջրառատ	1071	0	-	-
Ընդամենը	17594	83		

Աղյուսակ 2.1.1: Ախտության խոշորացված համայնքի բնակավայրերում առկա աղբարկղերը

2.1.2 Ախտության համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից Ախտության համայնքում իրականացվել է 162 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.1.2-ում:

Բնակավայր	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Ախտության	57	35%
Այգաբաց	12	7%
Արևիկ	17	10%
Բասեն	17	10%
Կամո	16	10%
Կառնուտ	19	12%
Հովիտ	9	6%
Ջրառատ	15	9%
Ընդամենը	162	100%

Աղյուսակ 2.1.2. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Ախտության համայնքում

Համաձայն հարցման արդյունքների՝ կենտրոնացված աղբահանություն իրականացվում է միայն Ախտության գյուղում, համայնքի մաս կազմող մյուս բնակավայրերում բնակիչներն աղբը կուտակում և հեռացնում են ինքնուրույն (Աղյուսակ 2.1.3):

Ախտության բնակավայրում հարցման ենթարկված բնակիչներն իրենց տանը կուտակված կենցաղային աղբը հեռացնում են հիմնականում երկու եղանակով՝ կա՛մ թափում են մոտակա աղբարկղերի մեջ (հարցման ենթարկված բնակիչների 22,8%-ը), կա՛մ հանձնում են շրջիկ աղբատար մեքենային (հարցման ենթարկված բնակիչների 85,9%-ը): Բնակիչներից մեկն էլ նշել է, որը աղբը տեղափոխում է կենտրոնացված աղբավայր սեփական տրանսպորտային միջոցով:

Համայնքի մաս կազմող մյուս բնակավայրերում բնակիչները աղբը հիմնականում կա՛մ այրում են, կա՛մ կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում են կենտրոնացված աղբավայր: Որոշ բնակավայրերում բնակիչները նշել են, որ ունեն տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրեր, որտեղ թափում են աղբը, ինչպես օրինակ Արևիկում (հարցման ենթարկված բնակիչների 12%-ը), Կամոյում (հարցման ենթարկված բնակիչների 6%-ը), Կառնուտում (հարցման ենթարկված բնակիչների 11%-ը) և Ջրառատում (հարցման ենթարկված բնակիչների 60%-ը): Կառնուտում հարցման ենթարկված բնակչության 31%-ը նշել է, որ աղբը նետում են ջրատար առվի մեջ: Որոշ համայնքներում էլ բնակիչները նշել են, որ աղբը նետում են ցանկացած պատահական վայրում (Արևիկ, Կառնուտ, Կամո, Ջրառատ):

Տնային տնտեսությունում կուտակված կենցաղային աղբի հեռացման եղանակներ	Կիրառվում է	Չի կիրառվում
Ախուրյան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	13	44
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	49	8
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	1	56
Այգաբաց		
Աղբը այրում ենք	11	1
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	7	5
Արևիկ		
Աղբը այրում ենք	10	7
Ունենք ՏՏ-ին կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	2	15
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	1	16
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	6	11
Աղբը թաղում ենք հողի մեջ	1	16
Բասեն		
Աղբը այրում ենք	6	11
Ունենք ՏՏ-ին կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	2	15
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	5	12
Կամո		
Աղբը այրում ենք	6	10
Ունենք ՏՏ-ին կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	1	15
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	1	15
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	2	14
Կառնուտ		
Աղբը այրում ենք	16	3
Ունենք ՏՏ-ին կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	2	17
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	1	18
Աղբը նետում ենք ջրատար առուների կամ գետի մեջ	5	11
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	2	17
Հովիտ		
Աղբը այրում ենք	2	7
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	7	2
Ջրառատ		
Աղբը այրում ենք	11	4

Ունենք ՏՏ-ին կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	9	6
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	1	14

Աղյուսակ 2.1.3: Կենցաղային աղբի հեռացումը տնային տնտեսությունների կողմից ըստ նշված պատասխանների բաշխման

«Արդյոք Ձեր համայնքապետարանը Ձեր բնակավայրում իրականացնում է աղբահանություն» հարցին դրական պատասխան են տվել միայն Ախուրյան բնակավայրի բնակիչները, որոնց 22,8%-ը նշել է, որ առկա են աղբարկղեր, որտեղ կուտակվում է կենցաղային աղբը, այնուհետև հեռացվում է աղբատար մեքենաներով, իսկ 84.2%-ը, որ առկա է աղբատար մեքենա, որը շրջում է փողոցներով և տներից հավաքում է աղբը:

Ախուրյան բնակավայրի այն տնային տնտեսությունները, որոնք նշել են, որ համայնքապետարանն աղբահանություն իրականացնում է աղբարկղերի միջոցով, համարում են, որ առկա աղբարկղերը քիչ են և/կամ տարողունակ չեն և չեն բավարարում իրենց և իրենց հարևանությամբ գտնվող տնային տնտեսությունների կենցաղային աղբի սպասարկման համար: Այս պատասխանը նշվել է նրանց կողմից 80% դեպքերում: Մնացած դեպքերում բնակիչները համարում են, որ աղբարկղերը բավարար քանակի են և տարողունակ են: Բնակիչների 58%-ը համարում է, որ աղբամանները տեղադրված են անհարմար վայրում: Բնակիչները նշել են, որ համայնքում աղբամանները քիչ են և տներից էլ բավականին հեռու են տեղակայված, ուստի իրենք նախընտրում են աղբը հավաքել և շաբաթը մեկ անգամ հանձնել աղբատար մեքենային: Ինչ վերաբերում է աղբամանների հարակից տարածքի մաքրությանը, ապա բնակիչների⁴ 8%-ը նշել է, որ «աղբամանների հարակից տարածքը ընդհանրապես մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում մշտապես առկա է կուտակված աղբ», 50%-ը նշել է, որ «աղբամանների հարակից տարածքում աղբ կուտակված է լինում ժամանակ առ ժամանակ»: Բնակիչների 25%-ը համարում է, որ աղբամանների հարակից տարածքը ավելի շուտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ, իսկ 17%-ը նշել է, աղբամանների հարակից տարածքը միշտ մաքուր է և աղբարկղերից դուրս աղբ կուտակված չի լինում:

Ինչ վերաբերում է աղբատար մեքենաներին, ապա Ախուրյան բնակավայրում հարցման ենթարկված բնակչության 8%-ը համարում է, որ աղբատար մեքենաների կողմից աղբահանության աշխատանքների համար շրջայցերի հաճախականությունը բնակավայրում «ավելի շուտ բավարար չէ», 79%-ը համարում է, որ «ավելի շուտ բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար», այնինչ 13%-ը համարում է, շրջայցերը «լիովին բավարար են և աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ»: Հարցման ենթարկված բնակչության մոտ 20%-ը երբևէ առնչվել է աղբահանություն իրականացնող աշխատակիցների հետ իրենց պարտականությունները կատարելիս: Այս բնակիչների 16%-ը նշել է, որ նրանց վերաբերմունքը իրենց հանդեպ եղել է լիովին դրական, 73%-ը՝ ավելի շուտ դրական, 5%-ը՝ ավելի շուտ բացասական, իսկ մնացած 5%-ը՝ լիովին բացասական:


Աղբահանության ծառայության դիմաց վճարում են Ախուրյան բնակավայրում հարցման ենթարկված բոլոր տնային տնտեսությունները: Հարցման ենթարկված տնային տնտեսությունների 29%-ը համարում է, որ աղբահանության դիմաց վարձավճարը իրենց ընտանիքի համար «ավելի շուտ մատչելի չէ», հարցման

⁴Այս հարցին պատասխանել են միայն այն բնակիչները, ովքեր նշել են, որ բնակավայրում առկա են աղբարկղեր, որտեղ կուտակվում է կենցաղային աղբը, այնուհետև է հեռացվում աղբատար մեքենաներով

ենթարկված բնակչության մնացած մասի համար վարձավճարը մատչելի է. 56%-ը նշել է, որ վարձավճարը «ավելի շուտ մատչելի է», իսկ 15%-ի համար ծառայության վճարը միանգամայն մատչելի է:

«Արդյո՞ք Ձեր բնակավայրում առկա են փողոցային աղբանոթներ» հարցին հարցման ենթարկված բնակչության 53%-ը պատասխանել է, որ «ոչ, առկա չեն»: 31%-ը նշել է, որ փողոցային աղբանոթներ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում՝ քիչ քանակությամբ, 9%-ը՝ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ, իսկ 7%-ի կարծիքով աղբանոթներ առկա են ամբողջ համայնքի տարածքում սակայն քիչ քանակությամբ:

Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ (Հավելված 3): Գնահատումն իրականացվել է միայն Ախուրյան բնակավայրի համար, քանի որ մյուս բնակավայրերում կենտրոնացված աղբահանության ծառայություններն ընդհանրապես բացակայել են: Գրաֆիկ 6-ում ներկայացված են Ախուրյան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները⁵: Համաձայն գնահատման արդյունքների, բնակիչներն առավել բավարարված են աղբահանության և աղբանոթների մաքրման հաճախությունից: Մյուս բաղադրիչների մասով, գնահատականները միջինից ցածր են: Բնակիչներն առավել դժգոհ են աղբարկղերի քանակից և տարողունակությունից, ինչպես նաև աղբանոթների քանակից:




Գրաֆիկ 6. Աղբահանության ծառայության որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը Ախուրյան բնակավայրի բնակիչների կողմից:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը:

⁵ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:

Միջինից բարձր գնահատական է տրվել միայն Ախուրյան բնակավայրի բնակիչների կողմից՝ 6,93 միավոր: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է 3,36 միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 7):



Գրաֆիկ 7. Աղբահանության ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ախուրյան համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված աղբահանության ծառայության որակի բարելավմանը: Այն բնակավայրերում, որտեղ կենտրոնացված աղբահանություն չի իրականացվում, բնակիչներից շատերն իրենց դժգոհությունն են հայտնել առ այն, որ աղբամաններ չլինելու պատճառով ստիպված են աղբը ինքնուրույն հեռացնել և շատ հաճախ չիմանալով թե որտեղ այն կարելի է թափել, ստիպված են եղել այն կա՛մ թաղել հողի մեջ, կա՛մ այրել: Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ և Ջրառատ բնակավայրերի բնակիչներն առաջարկել են, որ բնակավայրերում տեղադրվեն աղբամաններ, իսկ Բասենում բնակիչներն առաջարկել են նաև շրջիկ աղբատար մեքենա ունենալու տարբերակը (Աղյուսակ 2.1.4):

Առաջարկություններ	Բասեն	Կամո	Կառնուտ	Հովիտ	Ջրառատ
Բնակավայրում սկսել իրականացնել աղբահանության աշխատանքներ	1	0	3	0	2
Տեղադրվեն աղբամաններ	9	2	13	7	1
Աղբամաններ տեղադրված լինեն գոնե դպրոցի մոտ	0	0	1	0	0
Համայնքին տրամադրվի աղբատար մեքենա	1	0	1	0	2
Համայնքում լինի շրջիկ աղբատար մեքենա	2	0	0	0	0

Աղյուսակ 2.1.4: Բնակավայրերը, որտեղից ստացվել են աղբահանության ծառայության ներդրման հետ կապված առաջարկներ

Ախուրյան գյուղում բնակիչներն առաջարկել են ավելացնել աղբամանների թիվը, առավել հաճախ իրականացնեն աղբի հեռացում աղբամաններից, սպասարկեն առավել լավ սանիտարահիգիենիկ վիճակում գտնվող աղբատար մեքենաներ, իսկ շրջիկ աղբատար մեքենան տարածք այցելի շաբաթը մի քանի անգամ:

2.1.3 Ախուրյան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքները

Աղբի կոնտեյներներ: Ախուրյան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 59 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցները և փակուղիները: Բացի Ախուրյան բնակավայրից մնացած բնակավայրերում աղբամաններ առկա չեն եղել: Ախուրյան բնակավայրում դիտարկվել են թվով 11 փողոցներ, որոնցից 3-ը գլխավոր փողոցներ են, 8-ը՝ երկրորդական: Դիտարկված 11 փողոցներից միայն 3 է եղել աղբարկղերի կետեր՝ Չարենց փողոցում 3 կետերում, Ախուրյանի խճուղում՝ 2 կետերում և Եկեղեցու փողոցում՝ 1 կետում (Աղյուսակ 2.1.5):

Դիտարկված փողոցը	Փողոցի տեղադիրքը բնակավայրում	Փողոցի տիպը	Աղբամանների կետի առկայություն	Փողոցում աղբամանների կետերի քանակ
Պ. Սևակ 2-րդ փողոց	Ծայրամաս	Երկրորդ. փ.	Ոչ	-
Չարենցի փողոց	Կենտրոն	Գլխավոր փ.	Այո	3
Չարենց 2-րդ փողոց	Կենտրոն	Երկրորդ. փ.	Ոչ	-
Ջրաշինարարների 1-ին փ.	Ծայրամաս	Երկրորդ. փ.	Ոչ	-
Կառնուտի խճուղի	Ծայրամաս	Գլխավոր փ.	Ոչ	-
Ջրաշինարարներ 2-րդ փ.	Ծայրամաս	Նրբ., փակուղի	Ոչ	-
Ախուրյանի խճուղի 2-րդ փ.	Կենտրոն	Երկրորդ. փ.	Ոչ	-
Կառնուտի խճուղի 2-րդ փ.	Ծայրամաս	Երկրորդ. փ.	Ոչ	-
Ախուրյանի խճուղի	Կենտրոն	Գլխավոր փ.	Այո	2
Եկեղեցու փողոց	Ծայրամաս	Երկրորդ. փ.	Այո	1
Պ. Սևակ փողոց	Ծայրամաս	Երկրորդ. փ.	Ոչ	-

Աղյուսակ 2.1.5. Ախուրյան բնակավայրում դիտարկված փողոցների ցանկը

Չարենց փողոցի երկու կետերում առկա են եղել ոչ թե աղբի կոնտեյներներ, այլ ցանկապատված աղբահավաք կետեր (Նկար 1): Դիտարկված բոլոր կետերում առկա են եղել պլաստիկ շշերի համար նախատեսված տարբերակված աղբամաններ: Ոչ մի կետում աղբամանները տեղադրված չեն եղել պատվանդանի վրա (բետոնե կամ երկաթյա): Միայն ցանկապատված աղբահավաք կետերն են եղել հողից բետոնե շերտով մեկուսացված: Դիտարկված կետերում աղբի կոնտեյներները երեք կողմից առանձնացված չեն եղել ցանկապատով, աղբամանները տեղադրված են եղել մայթի վրա, փողոցի երթևեկելի հատվածում կամ սիգամարզերի վրա: Պահպանված են եղել բնակելի տներից աղբամանների տեղակայման վայրի համար սահմանված նվազագույն 15 մետր հեռավորությունը: Արձանագրվել է հենց 15-16 մետր հեռավորություն, մնացած դեպքերում հեռավորությունը եղել է ավելի շատ՝ 20 և 50 մետր: Աղբի կոնտեյներների վրա առկա չի եղել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ որևէ այլ կոնտակտային տվյալ: Պլաստիկ շշերի համար նախատեսված աղբամանների վրա առկա է եղել գրություն «միայն պլաստիկ շշերի համար»:

Բոլոր կոնտեյներները եղել են մետաղական: Դիտարկված բոլոր դեպքերում ցանկապատված աղբահավաք կետերը և աղբի կոնտեյներները եղել են կիսադատարկ (միջինում մոտ 20% լցվածություն), սակայն կենցաղային աղբը կուտակված է եղել հարակից տարածքում: Միայն մեկ դեպքում լցված է եղել նաև աղբի կոնտեյները: Աղբի կոնտեյներների հարակից տարածքում թափառող կենդանիներ չեն նկատվել, իսկ գարշահոտություն տարածված է եղել միայն մեկ դեպքում: Կոնտեյներների հարակից տարածքում աղբաջրերի հոսքեր չի նկատվել: Միայն մեկ աղբամանների կետ է ապահովված եղել լուսավորության հենապուճով, մնացած դեպքերում լուսավորությունը բացակայել է:



Նկար 1. Ցանկապատված աղբահավաք կետ Ախուրյան գյուղի Չարենց փողոցում



Նկար 2. Չարտոնված աղբանոցներ Ախուրյան գյուղի բնակելի տարածքում

Մոնիթորների կողմից արձանագրվել են նաև բնակավայրերի բնակելի տարածքներում «պատահական» առաջացած չարտոնված/ոչ օրինական աղբանոցները, որոնք համարվել են այդպիսին, եթե չեն առաջացել աղբի կոնտեյներների հարակից տարածքում: Ըստ արդյունքների, ընդհանուր առմամբ դիտարկված 59 փողոցներում այսպիսի աղբավայրեր են բացահայտվել միայն Ախուրյան և Կամո բնակավայրերում: Կամո բնակավայրի գլխավոր փողոցում մոնիթորը բացահայտել է երկու աղբանոց, իսկ Ախուրյան բնակավայրում՝ երեք (Նկար 2): Համաձայն մոնիթորի դիտարկումների բոլոր դեպքերում էլ ամենայն հավանականությամբ այս աղբանոցներն առաջացել են, քանի որ հարակից տարածքում առկա չեն եղել աղբի կոնտեյներներ:

Նկար 3

Սպասարկող աշխատակիցներ եվ աղբատար մեքենաներ: Առանձին ստուգաթերթով գնահատվել են նաև սպասարկող աշխատակիցների աշխատանքը և աղբատար մեքենաները, եթե մոնիթորները դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում նկատել են այդպիսիք: Ախուրյան համայնքում արձանագրվել է մեկ այդպիսի դեպք: Աղբահանությունն իրականացվել է Ախուրյանի գլխավոր փողոցում՝ բաց թափքով ինքնաթափ մեքենայի միջոցով: Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս և այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է բաց, ինչը համարվում է սահմանված նորմատիվների խախտում: Մոնիթորն արձանագրել է աղբատար մեքենայի թափքից աղբաջրերի բացթողնում փողոցի երկայնքով: Աղբատար մեքենայի վրա առկա չի եղել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալ: Աղբահանություն իրականացնող աշխատակիցները չէին կրում արտահագուստ և/կամ սանիտարական ձեռնոցներ: Մոնիթորն արձանագրել է, որ աղբահանություն իրականացնող աշխատակիցները մաքրել են նաև աղբի կոնտեյներների հարակից տարածքը և աշխատանքներն իրականացնելուց հետո ընդհանուր առմամբ տարածքը եղել է մաքուր:



Ախուրյան համայնքի կենտրոնացված աղբավայր: Ախուրյան համայնքն ունի աղբավայր, որը տեղակայված է գյուղի վարչական տարածքում և գտնվում է բնակավայրից 7կմ հեռավորության վրա: Աղբավայրի տարածքի հատկացման վերաբերյալ առկա է ավագանու որոշում: Աղբավայր մոնիթորինգային այցի արդյունքում պարզվել է, որ թափոնների պոլիգոնը ցանկապատված չէ, չունի կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, աղբատար փոխադրամիջոցների թափքերը և անվադողերը չեն լվացվում և ախտահանվում յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո

(Նկար 3): Աղբավայրի տարածքում և հարակից վայրերում չեն եղել կենդանիներ: Այցելության ընթացքում արձանագրվել է, որ աղբավայրի որոշ հատվածներում իրականացվել է սպառման թափոնների այրում: Աղբավայրը տեղակայված է ոռոգման համակարգի բաց ջրատարի հարևանությամբ, որոնց բաժանում է մոտ 4 մետր լայնությամբ գրունտային ճանապարհը (Նկար 3):

Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթ Ախուրյան համայնքի համար՝

Նորմատիվների պահանջներ	Արդյունք	Միավոր
Չի համապատասխանում-0 միավոր Մասամբ է համապատասխանում – 1 միավոր Լիովին համապատասխանում է – 2 միավոր		
Աղբի կոնտեյներներ		
Աղբամանները տեղադրված են պատվանդանի վրա (բետոնե, երկաթյա)	Մասամբ	1
Աղբամանի/աղբամանների շուրջ երեք կողմից պատնեշի/ցանկապատի առկայություն	Ոչ	0
Աղբամանը տեղադրված չեն մայթի, սիգամարգերի վրա կամ փողոցի երթևեկելի հատվածում	Մասամբ	1
Պահպանված է մոտակա բնակելի տնից/շենքից աղբամանների կետի նվազագույն հեռավորությունը	Այո	2
Կոնտեյներների վրա առկա էին աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ ցանկացած այլ կոնտակտային տվյալ	Ոչ	0
Ընդհանուր առմամբ լցված էր աղբամանների 2/3-ից ոչ ավելին	Այո	2
Աղբի կոնտեյներների հարակից տարածքը եղել է մաքուր	Մասամբ	1
Աղբատար մեքենա		
Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս կամ այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ	Ոչ	0
Աղբատար մեքենայի թափքից առկա չէ աղբաջրերի բացթողում	Ոչ	0
Աղբատար մեքենայի վրա առկա էր աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ:	Ոչ	0
Աղբահանություն իրականացնող աշխատակիցները կրում էին արտահագուստ և սանիտարական ձեռնոցներ	Ոչ	0
Կենտրոնացված աղբավայր		
Աղբավայրը ցանկապատված է	Ոչ	0
Ընդամենը արդյունք	7 միավոր	

2.2 Աղբահանության իրականացումն Աշոցք խոշորացված համայնքում

2.2.1 Աղբահանության ոլորտում Աշոցք համայնքի տեխնիկական ապահովվածությունը

Աշոցք խոշորացված համայնքում, համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների, աղբահանություն իրականացվում է միայն Աշոցք բնակավայրում, իսկ համայնքի մաս կազմող բնակավայրերում աղբահանություն չի իրականացվում: Համայնքն ունի 2017 թվականի արտադրության կողային բարձամաբ մեկ աղբատար մեքենա, որը սպասարկում է միայն Աշոցք բնակավայրը: Բնակավայրում տեղակայված են 0,8 մ³ տարողությամբ մետաղական ներկված չփակվող 43 աղբարկղեր:

2.2.2 Աշոցք համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից

Աշոցքում իրականացվել է 137 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.2.1-ում:

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Աշոցք	2888	40	29%
Բավրա	596	14	10%
Զույգաղբյուր	562	11	8%
Թավշուտ	372	9	7%
Կարմրավան	234	7	5%
Կրասար	527	6	4%
Ղազանչի	604	12	9%
Մեծ Սեպասար	933	17	13%
Սարագյուղ	233	6	4%
Սիգավետ	378	9	7%
Փոքր Սեպասար	241	6	4%
Ընդամենը	7568	137	100%

Աղյուսակ 1.2.1. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակն Աշոցք համայնքում

Ինչպես Ախուրյան համայնքի դեպքում, այստեղ նույնպես համաձայն հարցման արդյունքների կենտրոնացված աղբահանություն իրականացվում է միայն Աշոցք գյուղում, համայնքի մաս կազմող մյուս բնակավայրերում բնակիչներն աղբը կուտակում և հեռացնում են սեփական միջոցներով (Աղյուսակ 2.2.2):

Աշոցք գյուղում հարցման ենթարկված բոլոր բնակիչներն իրենց տանը կուտակված կենցաղային աղբը հեռացնում են միայն մեկ եղանակով՝ թափում են մոտակա աղբարկղերի մեջ: Համայնքի մաս կազմող մյուս բնակավայրերում բնակիչները աղբը հիմնականում կա՛մ այրում են, կա՛մ ունեն տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում են աղբը, կա՛մ կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում են կենտրոնացված աղբավայր: Բոլոր բնակավայրերում (բացի Աշոցք

բնակավայրից) բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 84%-ը, նշել է, որ աղբը այրում են: Համայնքի կենտրոնից դուրս բնակավայրերի բնակչության մոտ 35%-ն էլ հայտնել է, որ ունեն տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում են աղբը: Հարցման ենթարկված բնակչության մոտ 30%-ն էլ հայտնել է, որ կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում են կենտրոնացված աղբավայր (Աղյուսակ 2.2.2): Մարագյուղ և Սիզավետ բնակավայրերում բնակիչների մի մասը նշել է, որ աղբը թափում են ջրատար առվի կամ գետի մեջ:

Տնային տնտեսությունում կուտակված կենցաղային աղբի հեռացման տարբերակներ	Կիրառվում է	Չի կիրառվում
Աշոցք		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	40	0
Բավրա		
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	4	10
Աղբը այրում ենք	13	1
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	5	9
Զույգաղբյուր		
Աղբը այրում ենք	9	2
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	2	9
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	2	9
Աղբը թաղում ենք հողի մեջ	1	10
Թավշուտ		
Աղբը այրում ենք	6	3
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	5	4
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	3	6
Կարմրավան		
Աղբը այրում ենք	7	0
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	5	2
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	3	4
Կրասար		
Աղբը այրում ենք	5	1

Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	5	1
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	3	3
Ղազանչի		
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	3	9
Աղբը այրում ենք	7	5
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	3	9
Մեծ Մեպասար		
Աղբը այրում ենք	13	4
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	3	14
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	4	13
Սարագյուղ		
Աղբը այրում ենք	6	0
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	1	5
Աղբը նետում ենք ջրատար առուների կամ գետի մեջ	1	5
Սիզավետ		
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	1	8
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	5	4
Աղբը այրում ենք	9	0
Աղբը նետում ենք ջրատար առուների կամ գետի մեջ	2	7
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	3	6
Փոքր Մեպասար		
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	2	4
Աղբը այրում ենք	6	0
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	3	6

Աղյուսակ 2.2.2. Կենցաղային աղբի հեռացումը տնային տնտեսությունների կողմից ըստ նշված պատասխանների բաշխման

Համաձայն հարցման արդյունքների համայնքապետարանի կողմից կենտրոնացված աղբահանություն իրականացվում է միայն Աշոցք բնակավայրում: Առկա են աղբարկղեր, որտեղ կուտակվում է կենցաղային

աղբը, այնուհետև հեռացվում է աղբատար մեքենաներով: Շրջիկ մեքենաներով աղբի հավաքման պրակտիկան այստեղ չի գործում:

Աշոցք բնակավայրում հարցման ենթարկված բնակչության 90%-ը համարում է, որ առկա աղբարկղերը բավարար քանակի և տարողունակ են և բավարարում են իրենց և իրենց հարևանությամբ գտնվող տնային տնտեսությունների կենցաղային աղբի սպասարկման համար, իսկ 95%-ի կարծիքով հարմար է նաև աղբարկղերի տեղադիրքը: Հարցման ենթարկված բնակիչներից միայն երկուսն են նշել, որ աղբամանների տեղադիրքը հարմար չէ այն պատճառով, որ տեղադրված են իրենց տներին բավականին մոտ: Հարցման ենթարկված բնակիչների 92%-ը նաև նշել է, որ աղբամանների հարակից տարածքը հիմնականում լինում է մաքուր, և աղբամաններից դուրս աղբ կա՛մ կուտակված աղբ չի լինում, կա՛մ կուտակված է լինում շատ հազվադեպ: Մնացած 8%-ի կարծիքով աղբամանների հարակից տարածքը հիմնականում մաքուր չէ և աղբամաններից կուտակված է լինում կենցաղային աղբ:

Բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 98%-ը համարում է, որ աղբատար մեքենաների կողմից աղբահանության աշխատանքների համար շրջայցերի հաճախականությունը բնակավայրում բավարար է. 20%-ը համարում է, որ «ավելի շուտ բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար», իսկ 78%-ը՝ շրջայցերը «լիովին բավարար են և աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ»:


Հարցման ենթարկված բնակչության մոտ 95%-ը երբևէ առնչվել է աղբահանություն իրականացնող աշխատակիցների հետ իրենց պարտականությունները կատարելիս: Այս բնակիչների 63%-ը նշել է, որ նրանց վերաբերմունքը իրենց հանդեպ եղել է լիովին դրական, 31%-ը՝ ավելի շուտ դրական, 6%-ը՝ լիովին բացասական:

Աշոցք բնակավայրում հարցման ենթարկված բնակիչների 22%-ը նշել է, որ իրենց տնային տնտեսությունը վճարում է աղբահանության ծառայության դիմաց, որոնց կազմում 25%-ը համարում է, աղբահանության դիմաց վարձավճարը իրենց ընտանիքի համար «ընդհանրապես մատչելի չէ», իսկ մնացած մասի համար վարձավճարը մատչելի է. 13%-ը նշել է, որ վարձավճարը «ավելի շուտ մատչելի է», իսկ 63%-ի համար ծառայության վճարը «միանգամայն մատչելի է»:

Ինչ վերաբերում է փողոցային աղբանոթներին, ապա հարցման ենթարկված բնակչության 78%-ը պատասխանել է, որ «փողոցային աղբանոթներ համայնքում առկա չեն»: 17%-ը նշել է, որ փողոցային աղբանոթներ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում բավարար քանակությամբ, իսկ 5%-ի կարծիքով աղբանոթներ առկա են ամբողջ համայնքի տարածքում, սակայն քիչ քանակությամբ:

Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ: Գնահատումն իրականացվել է միայն Աշոցք բնակավայրի համար, քանի որ մյուս բնակավայրերում կենտրոնացված աղբահանության ծառայություններն ընդհանրապես բացակայել են: Գրաֆիկ 8-ում ներկայացված են Աշոցք բնակավայրի


համար գնահատման միջինացված ցուցանիշները⁶: Համաձայն գնահատման արդյունքների, բնակիչները հիմնականում բավարարված են աղբահանության իրականացման հաճախությունից, աղբարկղերի քանակից և տարողունակությունից, տեղադրիքից և հասանելիությունից, հարակից տարածքի մաքրությունից, հարակից տարածքում տհաճ հոտերի բացակայությունից: Բնակիչները հիմնականում բավարարված չեն բնակավայրի տարածքում առկա աղբանոթների քանակից:



Գրաֆիկ 8 Աղբահանության ծառայության որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը Ախուրյան բնակավայրի բնակիչների կողմից:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Միջինից բավականին բարձր գնահատական է տրվել միայն Աշոցք բնակավայրի բնակիչների կողմից՝ 8,75 միավոր: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **3,55** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 9):

⁶ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:



Գրաֆիկ 9. Աղբահանության ծառայություններից բնակչության բավարարվածությունը Աշոցք համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված աղբահանության ծառայության որակի բարելավմանը: Այն բնակավայրերում, որտեղ կենտրոնացված աղբահանություն չի իրականացվում, բնակիչների հիմնական առաջարկն է եղել տրամադրել շրջիկ աղբատար մեքենա, տեղադրել աղբամաններ և իրականացնել աղբահանություն (Աղյուսակ 2.2.3): Աշոցք բնակավայրում բնակիչներից երկուսն առաջարկել են միայն աղբամանները ավելի մոտ տեղադրել, իսկ բնակիչներից մեկը՝ ավելացնել աղբամանների քանակը: Աշոցք գյուղի բնակիչները նաև առաջարկել են տեղադրել փակվող կափարիչներով աղբամաններ:

Առաջարկություններ	աղբատար մեքենաների տրամադրում	աղբահանության կազմակերպում	աղբամաններ տեղադրել	ստեղծել աղբի վերամշակման կենտրոն
Բավրա	1	2	12	0
Զույգաղբյուր	4	0	4	0
Թավշուտ	1	1	7	0
Կարմրավան	1	0	5	0
Կրասար		2	0	0
Ղազանչի	3	0	1	0
Մեծ Սեպասար	1	0	0	0
Սարագյուղ	0	4	0	1
Սիգավետ	5	3	4	0
Փոքր Սեպասար	3	2	0	0

Աղյուսակ 2.2.3: Բնակավայրերը, որտեղից ստացվել են աղբահանության ծառայության ներդրման հետ կապված առաջարկներ

2.2.3 աշոցք խաշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Աղբի կոնտեյներներ: Աշոցք խաշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 57 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցները և փակուղիները: Բացի Աշոցք բնակավայրից մնացած բնակավայրերում աղբամաններ առկա չեն եղել: Աշոցք բնակավայրում դիտարկվել են թվով 9 փողոցներ, որոնցից 2-ը գլխավոր փողոցներ են, 7-ը՝ երկրորդական: Դիտարկված 9 փողոցներում արձանագրվել են 6 աղբարկղերի կետեր՝ յուրաքանչյուր կետում տեղադրված է եղել մեկ աղբաման:

Դիտարկված ոչ մի կետում պլաստիկ շշերի համար նախատեսված տարբերակված աղբամաններ առկա չեն եղել: Ոչ մի կետում աղբամանները տեղադրված չեն եղել պատվանդանի վրա (բետոնե կամ երկաթյա), այլ տեղադրված են եղել հողի վրա: Միևնույն ժամանակ աղբամաններից և ոչ մեկը տեղադրված չի եղել փողոցի երթևեկելի մասում: Դիտարկված կետերում աղբի կոնտեյներները երեք կողմից առանձնացված չեն եղել ցանկապատով: Պահպանված են եղել բնակելի տներից աղբամանների տեղակայման վայրի համար սահմանված նվազագույն 15 մետր հեռավորությունը: Աղբի կոնտեյներների վրա առկա չեն եղել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ որևէ այլ կոնտակտային տվյալ:

Նկար 4. Աղբամաններ Աշոցք գյուղում



Բոլոր կոնտեյներները եղել են մետաղական: Դիտարկված բոլոր դեպքերում աղբի կոնտեյներները եղել են կիսադատարկ (միջինում մոտ 10% լցվածություն), իսկ հարակից տարածքը եղել է մաքուր: Միայն մեկ դեպքում է աղբի կոնտեյների հարակից տարածքը եղել աղտոտված կենցաղային աղբով (Նկար 4): Աղբի կոնտեյներների հարակից տարածքում թափառող կենդանիներ չեն նկատվել և զարշահոտություն տարածված չի եղել, ինչպես նաև չեն նկատվել կոնտեյներների հարակից տարածքում աղբաջրերի հոսքեր: Աղբամանների կետերը ապահովված չեն եղել լուսավորության հենասյունով:

Ընդհանուր առմամբ բոլոր բնակավայրերում դիտարկված 57 փողոցներից ոչ մեկում չի բացահայտվել պատահական առաջացած ոչ օրինական աղբանոցներ:

Նկար 5. Չարտոնված աղբանոցներ Աշոցք համայնքում



Միայն Կրասար համայնքի մոտ տարածքում է բացահայտվել մեկ ոչ օրինական աղբանոց (Նկար 5): Դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում մոնիթորինգը չեն նկատել աղբատար մեքենաներ և սպասարկող աշխատակիցներ՝ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, ուստի գնահատում չի իրականացվել:

Աշոցք համայնքի կենտրոնացված աղբավայր:

Աղբավայրը Աշոցք բնակավայրից տեղակայված է 2 կմ հեռավորության վրա: Աղբավայրի տարածքի հատկացման վերաբերյալ առկա է ավագանու որոշում: Աղբավայր այցելության ընթացքում պարզվել է, որ սպառման թափոնների պոլիգոնը չունի կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, աղբատար փոխադրամիջոցների թափերը և անվադողերը չեն լվացվում և ախտահանվում յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո: Աղբավայրի տարածքը ցանկապատված չէ: Այցելության ընթացքում արձանագրվել է, որ սպառման թափոնների մի մասը որոշ հատվածներում այրում են (Նկար 6): Այցելության ընթացքում աղբավայրի տարածքում չեն եղել խոշոր կամ մանր եղջերավոր կենդանիներ: Աղբավայրը տեղակայված չէ բնապահպանական կամ մշակութային ժառանգության առումով զգայուն ընկալիչների հարևանությամբ:



Նկար 6. Աշոցք համայնքի կենտրոնացված աղբավայրը

Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Աշոցք համայնքի համար՝

Նորմատիվների պահանջներ	Արդյունք	Միավոր
Չի համապատասխանում-0 միավոր Մասամբ է համապատասխանում – 1 միավոր Լիովին համապատասխանում է – 2 միավոր		
Աղբի կոնտեյներներ		
Աղբամանները տեղադրված են պատվանդանի վրա (բետոնե, երկաթյա)	Ոչ	0
Աղբամանի/աղբամանների շուրջ երեք կողմից պատնեշի/ցանկապատի առկայություն	Ոչ	0
Աղբամանը տեղադրված չեն մայթի, սիգամարգերի վրա կամ փողոցի երթևեկելի հատվածում	Այո	2
Պահպանված է մոտակա բնակելի տնից/շենքից աղբամանների կետի նվազագույն հեռավորությունը	Այո	2
Կոնտեյներների վրա առկա էին աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ ցանկացած այլ կոնտակտային տվյալ	Ոչ	0
Ընդհանուր առմամբ լցված էր աղբամանների 2/3-ից ոչ ավելին	Այո	2
Աղբի կոնտեյներների հարակից տարածքը եղել է մաքուր	Այո	2
Աղբատար մեքենա		
Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս կամ այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ	-	-
Աղբատար մեքենայի թափքից առկա չէ աղբաջրերի բացթողնում	-	-
Աղբատար մեքենայի վրա առկա էր աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ:	-	-
Աղբահանություն իրականացնող աշխատակիցները կրում էին արտահագուստ և սանիտարական ձեռնոցներ	-	-
Կենտրոնացված աղբավայր		
Աղբավայրը ցանկապատված է	Ոչ	0
Ընդամենը արդյունք	4 միավոր <i>պայմանական</i>	

2.3 Աղբահանության իրականացումը թունանյան խոշորացված համայնքում

2.3.1 Աղբահանության ոլորտում թունանյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը

Համաձայն համայնքի կողմից տրամադրված տվյալների՝ Թունանյան համայնքում կենտրոնացված աղբահանություն իրականացվում է համայնքի բոլոր բնակավայրերում, իսկ Թունանյան քաղաքում աղբահանություն իրականացվում է շրջիկ աղբատար մեքենայի միջոցով: Համայնքն ունի 2017 թվականի արտադրության կողային բարձամաբ մեկ աղբատար մեքենա և 2008թ. արտադրության ՄԿԶ- ԶԻԼ 43362 մեկ մեքենա: Համայնքում ընդհանուր առմամբ առկա են 1.2 մ³ տարողունակությամբ 84 աղբարկղեր, որոնք տեղակայված են համայնքի բոլոր բնակավայրերում բացի Թունանյան քաղաքից: Բոլոր աղբարկղերն էլ մետաղական են և փակվող կափարիչներով (Աղյուսակ 2.3.1):

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը Թունանյան համայնքում	Աղբարկղերի առկայություն		
		Աղբարկղերի քանակ բնակավայրում	Աղբարկղերի տիպը (պլաստմասե, մետաղական, ներկված, փակվող կափարիչներով /չփակվող)	Աղբարկղերի տարողունակությունը
Թունանյան	1866	0	-	-
Աթան	202	15	Մետաղական, փակվող կափարիչով	1.2 մ ³
Ահնիձոր	182	18	Մետաղական, փակվող կափարիչով	1.2 մ ³
Լորուտ	1012	15	Մետաղական, փակվող կափարիչով	1.2 մ ³
Շամուտ	230	9	Մետաղական, փակվող կափարիչով	1.2 մ ³
Քարինջ	634	12	Մետաղական, փակվող կափարիչով	1.2 մ ³
Մարց	495	15	Մետաղական, փակվող կափարիչով	1.2 մ ³
Ընդամենը	4621	84		

Աղյուսակ 2.3.1. Թունանյան խոշորացված համայնքի բնակավայրերում առկա աղբարկղերը

2.3.2 Թունանյան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից

Թունանյան համայնքում իրականացվել է 134 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.3.2-ում:

Բնակավայր	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Թումանյան	46	34%
Աթան	9	7%
Ահնիձոր	8	6%
Լորուտ	30	22%
Շամուտ	16	12%
Քարինջ	9	7%
Մարց	16	12%
Ընդամենը	134	100%

Աղյուսակ 3.3.2. Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Թումանյան համայնքում

Համաձայն հարցման արդյունքների՝ կենտրոնացված աղբահանություն իրականացվում է Թումանյան համայնքի բոլոր բնակավայրերում (Աղյուսակ 2.3.3): Թումանյան բնակավայրում հարցման ենթարկված բնակիչներն իրենց տանը կուտակված կենցաղային աղբը հեռացնելու համար հանձնում են շրջիկ աղբատար մեքենային (հարցման ենթարկված բնակիչների 98%-ը): Բնակիչներից միայն մեկն է, որը աղբը այրում է:

Համայնքի մաս կազմող մյուս բնակավայրերում բնակիչները աղբը հիմնականում հեռացնում են աղբարկղերի մեջ թափելու միջոցով, իսկ Քարինջում նաև շրջիկ աղբատար մեքենային հանձնելու միջոցով (հարցման ենթարկված բնակիչների 44%): Նշենք, որ բնակիչներից ոչ մեկը չի նշել, որ ունեն տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրեր, որտեղ թափում են աղբը: Այնուամենայնիվ կան բնակավայրեր, որտեղ բնակիչների մի մասը նշել են, որ աղբը նետում են ջրատար առվի կամ գետի մեջ, ինչպես օրինակ Աթանում (հարցման ենթարկված բնակիչների 33%-ը), Ահնիձորում (հարցման ենթարկված բնակիչների 13%-ը), Լորուտում (հարցման ենթարկված բնակիչների 13%-ը): Որոշ համայնքներում էլ բնակիչները նշել են, որ աղբը այրում են (Ահնիձոր, Լորուտ, Շամուտ, Քարինջ):

Տնային տնտեսությունում կուտակված կենցաղային աղբի հեռացման եղանակներ	Կիրառվում է	Չի կիրառվում
Թումանյան		
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	45	1
Աղբը այրում ենք	1	45
Աթան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	6	3
Աղբը նետում ենք ջրատար առուների կամ գետի մեջ	3	6
Ահնիձոր		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	8	0
Աղբը այրում ենք	2	6
Աղբը նետում ենք ջրատար առուների կամ գետի մեջ	1	7
Կերակրում ենք անասուններին	1	7
Լորուտ		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	23	7
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	1	29
Աղբը այրում ենք	2	28

Աղբը նետում ենք ջրատար առուների կամ գետի մեջ	4	26
Շամուտ		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	14	2
Աղբը այրում ենք	3	13
Քարինջ		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	7	2
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	4	5
Աղբը այրում ենք	2	7
Մարց		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	16	0

Աղյուսակ 2.3.4: Կենցաղային աղբի հեռացումը տնային տնտեսությունների կողմից ըստ նշված պատասխանների բաշխման

Այն բնակավայրերում, որտեղ համայնքապետարանն աղբահանություն իրականացնում է աղբարկղերի միջոցով, բնակիչներին առաջարկվել է գնահատել, թե արդյոք առկա աղբարկղերը բավարար քանակի և տարողունակ են իրենց և իրենց հարևանությամբ գտնվող տնային տնտեսությունների կենցաղային աղբի սպասարկման համար: Ընդհանուր առմամբ Ահնիձոր, Շամուտ, Քարինջ և Մարց բնակավայրերի բնակիչների մեծամասնությունը համարում է, որ առկա աղբամանները բավարար քանակի և տարողունակ են: Աթանում հարցման ենթարկված բնակչության 50%-ը համարում է որ բավարար քանակի և տարողունակ են, իսկ մնացած 50%-ը, որ բավարար չեն: Առավել քիչ թվով բնակիչներ են Լորուտ համայնքում համարում, որ առկա աղբամանները բավարար քանակի և տարողունակ են (21%): Եթե համադրենք համայնքապետարանի կողմից տրամադրված աղբամանների քանակի վերաբերյալ տվյալները բնակչության թվի հետ, ապա ակնհայտ է, որ այստեղ բնակչության թիվը կրկնակի անգամ ավել է այլ բնակավայրերի բնակչության թվից, սակայն այստեղ տեղակայված աղբամանների թիվը շատ դեպքերում հավասար է այլ բնակավայրերում տեղակայված աղբամանների թվին (Աղյուսակ 2.3.4):

Բնակավայր	Բնակչության թիվը	Աղբամանների քանակ	Այո, աղբարկղերը բավարար քանակի են և տարողունակ	Ոչ, աղբարկղերը քիչ են և/կամ տարողունակ չեն
Աթան	202	15	50%	50%
Ահնիձոր	182	18	63%	38%
Լորուտ	1012	15	21%	79%
Շամուտ	230	9	75%	25%
Քարինջ	634	12	86%	14%
Մարց	495	15	63%	38%
Ընդամենը/միջինում	2755	84	58%	42%

Աղյուսակ 2.3.4: Աղբամանների քանակի և տարողունակության գնահատում բնակիչների կողմից

Եթե ընդհանրացնենք բոլոր բնակավայրերի տվյալները, որտեղ տեղակայված են աղբավայրեր, ապա հարցման ենթարկված բնակիչների մեծամասնությունը՝ 75%-ը, համարում է, որ աղբամանները տեղադրված են հարմար վայրերում: Աթան, Ահնիձոր, Լորուտ և Շամուտ բնակավայրերում բնակիչների մի մասը, սակայն, նշել է, որ աղբամանները տեղակայված են անհարմար վայրերում (Աղյուսակ 2.3.5): Այս բնակիչների հիմնական մասը նշել են, որ աղբամանները տեղադրված են իրենց տներից շատ հեռու՝ մոտ 200-300 մետր հեռավորության վրա:

Բնակավայր	Տեղադրված են հարմար վայրում	Տեղադրված են անհարմար վայրում
Աթան	75%	25%
Ահնիձոր	63%	37%
Լորուտ	79%	21%
Շամուտ	75%	25%
Քարինջ	100%	0%
Մարց	94%	6%
Ընդամենը/միջինում	75%	25%

Աղյուսակ 2.3.5: Աղբամանների տեղադիրքի գնահատում բնակիչների կողմից

Ինչ վերաբերում է աղբամանների հարակից տարածքի մաքրությանը, ապա բնակիչների⁷ 50%-ը նշել է, որ «հարակից տարածքը միշտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված չի լինում», 38%-ը նշել է, որ «հարակից տարածքը հիմնականում մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ»: Բնակիչների միայն 13%-ն է համարում, որ աղբամանների «հարակից տարածքը հիմնականում մաքուր չէ, հարակից տարածքում ժամանակ առ ժամանակ կուտակված է լինում կենցաղային աղբ»: Այսպես համարող բնակիչների թիվը առավել մեծ է Լորուտ և Մարց բնակավայրերում (Աղյուսակ 2.3.6):

Բնակավայր	Հարակից տարածքը միշտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված չէ	Հարակից տարածքը հիմնականում մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ	Հարակից տարածքը հիմնականում մաքուր չէ, հարակից տարածքում ժամանակ առ ժամանակ կուտակված է լինում կենցաղային աղբ
Աթան	50%	50%	0%
Ահնիձոր	88%	13%	0%
Լորուտ	29%	43%	29%
Շամուտ	25%	69%	6%
Քարինջ	83%	17%	0%
Մարց	63%	19%	19%
Ընդամենը/միջինում	50%	38%	13%

Աղյուսակ 2.3.6: Աղբամանների հարակից տարածքի մաքրության գնահատում բնակիչների կողմից

⁷Այս հարցին պատասխանել են միայն այն բնակիչները, ովքեր նշել են, որ բնակավայրում առկա են աղբարկղեր, որտեղ կուտակվում է կենցաղային աղբը, այնուհետև է հեռացվում աղբատար մեքենաներով

Ինչ վերաբերում է աղբատար մեքենաներին, ապա Թումանյան համայնքում հարցման ենթարկված բնակչության միայն 6%-ն է համարում, որ աղբատար մեքենաների կողմից աղբահանության աշխատանքների համար շրջայցերի հաճախականությունը իրենց բնակավայրում «ընդհանրապես բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են շատ հազվադեպ», 18%-ը համարում է, որ շրջայցերի թիվը «ավելի շուտ բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են երբեմն-երբեմն»: Բնակչության մեծամասնությունը՝ 76%-ը, շրջայցերի թիվը համարում են բավարար, ընդ որում 48%-ը համարում է, որ «ավելի շուտ բավարար են, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար», իսկ 28%-ը համարում է, որ շրջայցերը «լիովին բավարար են և աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ» (Աղյուսակ 2.3.7):

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են շատ հազվադեպ	Ավելի շուտ բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են երբեմն-երբեմն	Ավելի շուտ բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար	Լիովին բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ
Թումանյան	7%	9%	39%	46%
Աթան	0%	40%	60%	0%
Ահնիձոր	13%	25%	50%	13%
Լորուտ	4%	16%	72%	8%
Շամուտ	6%	31%	56%	6%
Քարինջ	0%	14%	29%	57%
Մարց	6%	25%	31%	38%
Ընդամենը/միջինում	6%	18%	48%	28%

Աղյուսակ 2.3.7: Աղբատար մեքենաների շրջայցերի գնահատում բնակիչների կողմից

Թումանյան համայնքում հարցման ենթարկված բնակչության 44%-ը երբևէ առնչվել է աղբահանություն իրականացնող աշխատակիցների հետ իրենց պարտականությունները կատարելիս: Այս բնակիչների 74%-ը նշել է, որ նրանց վերաբերմունքը իրենց հանդեպ եղել է լիովին դրական, 19%-ը՝ ավելի շուտ դրական, և միայն բնակչության 8%-ն որ նշել, որ աշխատակիցների վերաբերմունքն իրենց նկատմամբ եղել է բացասական (Աղյուսակ 2.3.8):

Բնակավայր	Լիովին դրական	Ավելի շուտ դրական	Ավելի շուտ բացասական	Լիովին բացասական
Թումանյան	77%	23%	0%	0%
Ահնիձոր	100%	0%	0%	0%
Լորուտ	25%	0%	50%	25%
Շամուտ	67%	0%	0%	33%
Քարինջ	50%	50%	0%	0%
Մարց	100%	0%	0%	0%
Ընդամենը/միջինում	74%	19%	4%	4%

Աղյուսակ 2.3.8: Աղբահանություն իրականացնող աշխատակիցների վերաբերմունքի գնահատում բնակիչների կողմից

Աղբահանության ծառայության դիմաց վճարում են Թումանյան բնակավայրում հարցման ենթարկված տնային տնտեսությունների 85%-ը, ընդ որում Լորուտ համայնքում հարցման ենթարկված բնակչության միայն 52%-ն է նշել, որ վճարում է աղբահանության ծառայությունների դիմաց, իսկ Աթանում այդպիսի ընտանիքներ չեն եղել (Աղյուսակ 2.3.9):

Բնակավայր	Վճարում է աղբահանության համար	Չի վճարում աղբահանության համար
Թումանյան	98%	2%
Աթան	0%	100%
Ահնիձոր	100%	0%
Լորուտ	52%	48%
Շամուտ	100%	0%
Քարինջ	100%	0%
Մարց	94%	6%
Ընդամենը/միջինում	85%	15%

Աղյուսակ 2.3.9: Աղբահանության ծառայությունների դիմաց վճարումը բնակիչների կողմից

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների 11%-ը համարում է, որ աղբահանության դիմաց վարձավճարը իրենց ընտանիքի համար մատչելի չէ, հարցման ենթարկված բնակչության մնացած մասի համար վարձավճարը մատչելի է. 49%-ը նշել է, որ վարձավճարը «ավելի շուտ մատչելի է», իսկ 40%-ի համար ծառայության վճարը միանգամայն մատչելի է (Աղյուսակ 2.3.10):

Բնակավայր	Ընդհանրապես մատչելի չէ	Ավելի շուտ մատչելի չէ	Ավելի շուտ մատչելի է	Լիովին մատչելի է
Թումանյան	0%	9%	42%	49%
Ահնիձոր	0%	13%	25%	63%
Լորուտ	0%	7%	50%	43%
Շամուտ	6%	25%	56%	13%
Քարինջ	0%	0%	78%	22%
Մարց	0%	7%	53%	40%
Ընդամենը/միջինում	1%	10%	49%	40%

Աղյուսակ 2.3.10: Աղբահանության ծառայությունների մատչելիությունը բնակիչների համար


«Արդյո՞ք Ձեր բնակավայրում առկա են փողոցային աղբանոթներ» հարցին հարցման ենթարկված բնակչության 86%-ը պատասխանել է, որ «ոչ, առկա չեն»: 10%-ը նշել է, որ փողոցային աղբանոթներ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում՝ քիչ քանակությամբ, 1%-ը՝ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ, իսկ 2%-ի կարծիքով աղբանոթներ առկա են ամբողջ համայնքի տարածքում սակայն քիչ քանակությամբ և միայն 1%-ի կարծիքով աղբանոթներ առկա են ամբողջ համայնքի տարածքում բավարար քանակությամբ (Աղյուսակ 2.3.11): :

Բնակավայր	Ոչ, առկա չեն	Առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում քիչ քանակությամբ	Առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ	Առկա են ամբողջ համայնքի տարածքում քիչ քանակությամբ	Առկա են ամբողջ համայնքի տարածքում բավարար քանակությամբ
Թումանյան	80%	17%	0%	2%	0%
Աթան	89%	11%	0%	0%	0%
Ահնիձոր	100%	0%	0%	0%	0%
Լորուտ	90%	10%	0%	0%	0%
Շամուտ	94%	0%	0%	0%	6%
Քարինջ	78%	0%	0%	22%	0%
Մարց	81%	13%	6%	0%	0%
Ընդամենը/միջինում	86%	10%	1%	2%	1%

Աղյուսակ 2.3.11: Աղբանոթների առկայությունը համայնքի տարածքում ըստ բնակիչների գնահատականների


Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ (Հավելված 3, մաս 3): Գնահատումն իրականացվել է միայն Թումանյան համայնքի ողջ բնակավայրի համար: Աղբարկղերին վերաբերող հարցերը չեն գնահատվել Թումանյան համայնքում, քանի որ այստեղ աղբահանությունն իրականացվում է շրջիկ աղբատար մեքենաների միջոցով:

Ըստ գնահատման արդյունքների՝ աղբահանության իրականացման հաճախությունից գոհ են գրեթե բոլոր բնակավայրերում, բացի Աթանից և Լորուտից (Գրաֆիկ 10): Գրաֆիկ 11-ում ներկայացված են Թումանյան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները⁸: Համաձայն գնահատման արդյունքների, բնակիչներն առավել բավարարված են աղբահանության իրականացման հաճախությունից և որակից: Առավել ցածր է գնահատվել աղբանոթների առկայությունից բնակչության բավարարվածությունը:




Գրաֆիկ 10: Աղբահանության իրականացման հաճախություն

⁸ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:



Գրաֆիկ 11 Աղբահանության ծառայության որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը Թումանյան բնակավայրի բնակիչների կողմից:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Բացի Աթան և Լորուտ բնակավայրերից, մնացած բնակավայրերի դեպքում աղբահանության ծառայությունից իրենց բավարարվածությունը բնակիչները միջինում գնահատել են 7 միավորից բարձր: Առավել բարձր են եղել Ահնիձոր, Քարինջ, Շամուտ բնակավայրերի կողմից տրված գնահատականները: Ի հակադրություն՝ Աթան և Լորուտ բնակավայրերի կողմից տրվել են միջինից ցածր գնահատականներ՝ համապատասխանաբար 3.22 միավոր և 3.47 միավոր: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **6,59** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 12):



Գրաֆիկ 12. Աղբահանության ծառայություններից բնակչության բավարարվածությունը Թումանյան համայնքի բնակավայրերի համար

Հարցման այն մասում, երբ բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել առաջարկություններ ուղղված աղբահանության ծառայությունների որակի բարելավմանը, բնակիչներից շատերն են նշել, որ իրենք գոհ են աղբահանության ծառայությունների մատուցման որակից և առաջարկություններ չունեն: Բնակիչների մի մասն էլ նշել է, որ առավել առաջնային հիմնախնդիր իրենց համայնքի համար ճանապարհների անբարեկարգ վիճակն է, և ճանապարհների բարեկարգումից հետո աղբատար մեքենաների համար առավել հեշտ կլինի իրականացնել աղբահանություն: Թումանյան քաղաքում, որտեղ աղբահանությունն իրականացվում է շրջիկ աղբատար մեքենաների միջոցով, բնակիչների մի մասն առաջարկել է տեղադրել աղբամաններ: Իսկ մեծ թվով բնակիչներ Լորուտ գյուղում առաջարկել են ավելացնել աղբամանների քանակը իրենց բնակավայրի տարածքում: Ընդ որում այս երկու բնակավայրերում նաև առավել շատն են առաջարկել ավելացնել շրջիկ աղբատար մեքենաների շրջայցերի քանակը (Աղյուսակ 2.3.13):

Առաջարկություններ	Թումանյան	Աթան	Ահնիձոր	Լորուտ	Շամուտ	Քարինջ	Մարց
Տեղադրվեն աղբամաններ համայնքի տարածքում/ավելացվեն աղբամանները/աղբամաններ լինեն ամբողջ բնակավայրի տարածքում	11	4	1	23	0	0	5
Առավել հաճախ իրականացնեն աղբահանություն	5	2	0	5	3	0	4
Աղբարկղերը առավել մոտ տեղադրված լինեն	0	1	0	1	0	0	0

Աղյուսակ 2.3.13: Աղբահանության ոլորտի հետ կապված առավել հաճախ հնչած առաջարկները բնակավայրերի կողմից

Աղբահանության ոլորտի հետ կապված մյուս առաջարկները ներառում են հետևյալը. Թումանյան համայնքում առաջարկվել է վերահսկողություն սահմանել գետի մեջ աղբի նետման դեպքերը կանխելու համար, մաքրել բակային տարածքները, Ահնիձորում առաջարկել են մաքրել աղբով լցված ձորերը, որը նախկինում կենտրոնացված աղբահանության բացակայության հետևանքով է առաջացել, Մարցում առաջարկվել է փոխել աղբատար տեխնիկան, քանի որ ճանապարհները շատ նեղ են Մարցում, Լորուտում առաջարկվել է հիզիենիկ նյութերով մաքրել աղբամանները և աղբատար մեքենաները, ինչպես նաև ավելացնել աղբատար մեքենաների թիվը: Թումանյան բնակավայրում նաև բնակիչներից երկուսը նշել են, որ կենտրոնացված աղբավայրում աղբը այրելու հետևանքով բնակավայրի տարածքը պատվում է ծուխով, ինչը վտանգավոր է բնակիչների առողջության համար:

2.3.3 Թումանյան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Աղբի կոնտեյներներ: Թումանյան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 35 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցքները և փակուղիները: Դիտարկված 35 փողոցներից 12-ը եղել են գլխավոր, իսկ 23-ը՝ երկրորդական: Թումանյան բնակավայրում դիտարկվել են թվով 9 փողոցներ, որոնցից 3-ը գլխավոր փողոցներ են, 6-ը՝ երկրորդական: Բացի Թումանյան բնակավայրից մնացած բնակավայրերում առկա են եղել աղբամանների կետեր (Աղյուսակ 2.3.14):

Դիտարկված փողոցը	Բնակավայրում դիտարկված փողոցների թիվը	Աղբամանների կետի առկայություն	Դիտարկված աղբամանների կետերի քանակ	Տվյալ կետում առկա աղբամանների քանակ
Թումանյան	9	Ոչ	-	-
Աթան	4	Այո	3	3
Ահնիձոր	2	Այո	3	1-ին կետ՝ 1 2-րդ կետ՝ 2 3-րդ կետ՝ 3
Լորուտ	7	Այո	2	2
Շամուտ	2	Այո	3	1-ին կետ՝ 3 2-րդ կետ՝ 3 3-րդ կետ՝ 1
Քարինջ	6	Այո	2	1
Մարց	5	Այո	7	5 կետում՝ 1 հատ 2 կետում՝ 2 հատ
Ընդամենը	35		20	

Աղյուսակ 2.3.14. Թումանյան բնակավայրում դիտարկված աղբի կոնտեյներների կետերի քանակը

Աթանում դիտարկվել է 4 փողոց՝ մեկ գլխավոր և երեք երկրորդական: Դիտարկված փողոցներից երեքում առկա է եղել մեկական աղբամանների կետ՝ յուրաքանչյուրում երեք հատ աղբարկղ՝ 120 մ³ տարողունակությամբ: Դիտարկված փողոցների թվին համամասնական առավել քիչ թվով աղբամանների կետեր են առկա եղել Լորուտում և Քարինջում:

Դիտարկված 20 աղբամանների ոչ մի կետում առկա չեն եղել պլաստիկ շշերի համար նախատեսված տարբերակված աղբամաններ: 12 դեպքում աղբամանները տեղադրված են եղել բետոնե կամ երկաթյա պատվանդանի վրա, մնացած դեպքերում՝ ոչ: Ոչ մի դեպքում դիտարկված կետերում աղբի կոնտեյներները երեք կողմից առանձնացված չեն եղել ցանկապատով, 15 դեպքերում աղբամանները տեղադրված են եղել մայթի վրա, փողոցի երթևեկելի հատվածում կամ սիգամարգերի վրա: Որոշ դեպքերում պահպանված չի եղել բնակելի տներից աղբամանների տեղակայման վայրի համար սահմանված նվազագույն 15 մետր

հեռավորությունը՝ կազմելով 5-7 մետր: Աղբի կոնտեյներների վրա առկա չի եղել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ որևէ այլ կոնտակտային տվյալ:

Բոլոր կոնտեյներները եղել են մետաղական, ներկված, փակվող կափարիչներով (Նկար 7): 18 դեպքերում դիտարկված աղբի կոնտեյներները եղել են կիսադատարկ (միջինում մոտ 20-30% լցվածություն),և աղբամանների հարակից տարածքը եղել է մաքուր: Միայն երկու դեպքում են աղբամանները եղել ամբողջությամբ լցված, սակայն այդ դեպքերում նույն հարակից տարածքը եղել է մաքուր: Աղբի կոնտեյներների հարակից տարածքում թափառող կենդանիներ չեն նկատվել բացի մեկ դեպքից, գարշահոտություն տարածված չի եղել: Կոնտեյներների հարակից տարածքում աղբաջրերի հոսքեր չի նկատվել: 7 աղբամանների կետ ապահովված են եղել լուսավորության հենասյունով, մնացած դեպքերում լուսավորությունը բացակայել է:



Նկար 7. Փակ մետաղական աղբարկղ Քարինջ գյուղում



Նկար 8. Թումանյան համայնքում բնակիչները կուտակված աղբը դուրս են բերել փողոց՝ շրջիկ աղբատար մեքենային հանձնելու համար

Մոնիթորների կողմից արձանագրվել են նաև բնակավայրերի բնակելի տարածքներում «պատահական» առաջացած չարտոնված/ոչ օրինական աղբանոցները, որոնք համարվել են այդպիսին, եթե չեն առաջացել աղբի կոնտեյներների հարակից տարածքում: Ըստ արդյունքների, ընդհանուր առմամբ դիտարկված 35 փողոցներում այսպիսի աղբավայր բացահայտվել է միայն Թումանյան բնակավայրերում: Համաձայն մոնիթորի դիտարկումների բոլոր

դեպքերում էլ ամենայն հավանականությամբ այս աղբանոցներն առաջացել են, քանի որ հարակից տարածքում առկա չեն եղել աղբի կոնտեյներներ:

Մպասարկող աշխատակիցներ եվ աղբատար մեքենաներ: Մոնիթորները դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում նկատել են մեկ կողային բարձիչով աղբատար մեքենա Թումանյան քաղաքում՝ որպես շրջիկ աղբատար մեքենա աղբահանության աշխատանքներ իրականացնելիս: Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս և այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ, աղբատար մեքենայի թափքից աղբաջրերի բացթողնում փողոցի երկայնքով չի արձանագրվել: Աղբատար մեքենայի վրա առկա է եղել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը: Աղբահանություն իրականացնող աշխատակիցները չէին կրում արտահագուստ և/կամ սանիտարական ձեռնոցներ:

Թումանյան համայնքի կենտրոնացված աղբավայր: Թումանյան համայնքն ունի աղբավայր, որը տեղակայված է գյուղի վարչական տարածքում և գտնվում է բնակավայրից 7կմ հեռավորության վրա: Աղբավայրի տարածքի հատկացման վերաբերյալ առկա է ավագանու որոշում: Աղբավայր մոնիթորինգային այցի արդյունքում պարզվել է, որ թափոնների պոլիգոնը ցանկապատված չէ, չունի կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, աղբատար փոխադրամիջոցների թափքերը և անվաղողերը չեն լվացվում և ախտահանվում յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո: Աղբավայրի տարածքում և հարակից վայրերում չեն եղել կենդանիներ: Այցելության ընթացքում արձանագրվել է, որ աղբավայրի որոշ հատվածներում իրականացվել է սպառման թափոնների այրում: Աղբավայրը տեղակայված է ոռոգման համակարգի բաց ջրատարի հարևանությամբ, որոնց բաժանում է մոտ 4 լայնությամբ գրունտային ճանապարհը (Նկար 9):



Նկար 9. Թումանյանի քաղաքային աղբավայրը

մետր

Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Թումանյան համայնքի համար՝

Նորմատիվների պահանջներ	Արդյունք	Միավոր
Չի համապատասխանում-0 միավոր Մասամբ է համապատասխանում – 1 միավոր Լիովին համապատասխանում է – 2 միավոր		
Աղբի կոնտեյներներ		
Աղբամանները տեղադրված են պատվանդանի վրա (բետոնե, երկաթյա)	Ոչ	0
Աղբամանի/աղբամանների շուրջ երեք կողմից պատնեշի/ցանկապատի առկայություն	Ոչ	0
Աղբամանը տեղադրված չեն մայթի, սիգամարգերի վրա կամ փողոցի երթևեկելի հատվածում	Մասամբ	1
Պահպանված է մոտակա բնակելի տնից/շենքից աղբամանների կետի նվազագույն հեռավորությունը	Մասամբ	1
Կոնտեյներների վրա առկա էին աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ ցանկացած այլ կոնտակտային տվյալ	Ոչ	0
Ընդհանուր առմամբ լցված էր աղբամանների 2/3-ից ոչ ավելին	Այո	2
Աղբի կոնտեյներների հարակից տարածքը եղել է մաքուր	Այո	2
Աղբատար մեքենա		
Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս կամ այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ	Այո	2
Աղբատար մեքենայի թափքից առկա չէ աղբաջրերի բացթողնում	Այո	2
Աղբատար մեքենայի վրա առկա էր աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ:	Այո	2
Աղբահանություն իրականացնող աշխատակիցները կրում էին արտահագուստ և սանիտարական ձեռնոցներ	Ոչ	0
Կենտրոնացված աղբավայր		
Աղբավայրը ցանկապատված է	Ոչ	0
Ընդամենը արդյունք	12 միավոր	

2.4 Աղբահանության իրականացումը ստեփանավան խոշորացված համայնքում

2.4.1 Աղբահանության ոլորտում ստեփանավան համայնքի տեխնիկական ապահովվածությունը

Համաձայն համայնքի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Ստեփանավան խոշորացված համայնքում կենտրոնացված աղբահանություն իրականացվում է միայն Ստեփանավան քաղաքում, իսկ համայնքի մաս կազմող Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերում աղբահանությունն իրականացվում է շրջիկ աղբատար մեքենաների միջոցով: Համայնքն ունի կողային բարձամար 2 աղբատար մեքենա, առանց կողային բարձման

2 ինքնաթափ մեքենա՝ բոլորն էլ 1990թ. արտադրության, աղբահանություն իրականացմանը հարմարեցված կցորդով տրակտոր՝ 1982թ. արտադրության և 2006թ. արտադրության «Ռենո» տիպի երկֆունկցիոնալ աղբատար 1 մեքենա 12մ³ տարողությամբ: Աղբարկղեր տեղակայված են միայն Ստեփանավան քաղաքում: Այստեղ տեղակայված են թվով 181 աղբարկղեր և աղբանոթներ, որոնցից 67-ը մետաղական են՝ 0,7 մ³ տարողությամբ և 114 պլաստմասե աղբանոթներ՝ 0,45 մ³ տարողությամբ:

2.4.2 Ստեփանավան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից
 Ստեփանավան համայնքում իրականացվել է 156 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ, որից 117-ը Ստեփանավան բնակավայրում, 17-ը Ուրասարում և 22-ը Կաթնաղբյուրում (Աղյուսակ 2.4.1-ում):

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Ստեփանավան	19141	117	75%
Ուրասար	399	17	11%
Կաթնաղբյուր	987	22	14%
Ընդամենը	20527	156	100%

Աղյուսակ 5.4.1 Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Ստեփանավան համայնքում

Համաձայն հարցման արդյունքների՝ կենտրոնացված աղբահանություն իրականացվում է միայն Ստեփանավան քաղաքում, համայնքի մաս կազմող մյուս բնակավայրերում բնակիչներն աղբը կուտակում և հեռացնում են ինքնուրույն (Աղյուսակ 2.4.2):

Ստեփանավան բնակավայրում հարցման ենթարկված բնակիչներն իրենց տանը կուտակված կենցաղային աղբը հեռացնում են հիմնականում երկու եղանակով՝ կա՛մ թափում են մոտակա աղբարկղերի մեջ (հարցման ենթարկված բնակիչների 61%-ը), կա՛մ հանձնում են շրջիկ աղբատար մեքենային (հարցման ենթարկված բնակիչների 37%-ը): Բնակիչներից երկուսն էլ նշել են, որ աղբը տեղափոխում են կենտրոնացված աղբավայր սեփական տրանսպորտային միջոցով:

Համայնքի մաս կազմող մյուս երկու բնակավայրերում՝ Ուրասարում և Կաթնաղբյուրում, բնակիչները աղբը հիմնականում հեռացնում են սեփական միջոցներով, այդ թվում կա՛մ այրում են, կա՛մ կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում են կենտրոնացված աղբավայր, կա՛մ աղբը թաղում են հողի մեջ: Մտահոգիչ է այն, որ այս երկու բնակավայրերում էլ բնակիչների մի մասը աղբը նետում են ջրատար առվի կամ գետի մեջ, մասնավորապես Ուրասարում հարցման ենթարկված բնակչության 12%-ը, Կաթնաղբյուրում՝ 46%-ը:

Տնային տնտեսությունում կուտակված կենցաղային աղբի հեռացման եղանակներ	Կիրառվում է	Չի կիրառվում
Ստեփանավան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	72	46
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	43	74
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	2	115
Ուրասար		

Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	1	16
Աղբը այրում ենք	9	8
Ունենք SS-ին կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	1	16
Աղբը նետում ենք ջրատար առվի կամ գետի մեջ	2	15
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	11	6
Աղբը թաղում ենք հողի մեջ	6	11
Կաթնաղբյուր		
Աղբը այրում ենք	18	4
Ունենք SS-ին կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	1	21
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	1	21
Աղբը նետում ենք ջրատար առվի կամ գետի մեջ	10	12
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	8	14
Աղբը թաղում ենք հողի մեջ	5	17

Աղյուսակ 2.4.2: Կենցաղային աղբի հեռացումը տնային տնտեսությունների կողմից ըստ նշված պատասխանների բաշխման

«Արդյոք Ձեր համայնքապետարանը Ձեր բնակավայրում իրականացնում է աղբահանություն» հարցին դրական պատասխան են տվել միայն Ստեփանավան բնակավայրի բնակիչները: Այստեղ բնակիչները նշել են, որ աղբահանությունն իրականացվում է երկու եղանակով՝ կա՛մ հեռացվում է աղբամանների միջոցով, կամ հանձնվում է շրջիկ աղբատար մեքենային:

Ստեփանավան բնակավայրի այն տնային տնտեսությունները, որոնք նշել են, որ համայնքապետարանն աղբահանություն իրականացնում է աղբարկղերի միջոցով, համարում են, որ առկա աղբարկղերը հիմնականում բավարար քանակի և/կամ տարողունակ են իրենց և իրենց հարևանությամբ գտնվող տնային տնտեսությունների կենցաղային աղբի սպասարկման համար: Այս պատասխանը նշվել է նրանց կողմից 79% դեպքերում: Մնացած դեպքերում բնակիչները համարում են, որ աղբարկղերը բավարար քանակի և/կամ տարողունակ չեն: Ընդ որում բնակիչների 92%-ը համարում է, որ աղբամանները տեղադրված են հարմար վայրում: Այն բնակիչները, ովքեր նշել են, որ աղբամանների տեղադիրքը անհարմար է մի դեպքում նշել են, որ աղբամանները տեղադրված են իրենց տանը շատ մոտ, մյուս դեպքերում՝ տանից շատ հեռու կամ իրենց փողոցի վրա բացակայում է: Ինչ վերաբերում է աղբամանների հարակից տարածքի մաքրությանը, ապա բնակիչների⁹ 8%-ը նշել է, որ «աղբամանների հարակից տարածքը ընդհանրապես մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում մշտապես առկա է կուտակված աղբ», 24%-ը նշել է, որ «հարակից տարածքը հիմնականում մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում աղբ կուտակված է լինում ժամանակ առ ժամանակ»: Բնակիչների 37%-ը համարում է, որ «աղբամանների հարակից տարածքը ավելի շուտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ», իսկ 32%-ը նշել է, «աղբամանների հարակից տարածքը միշտ մաքուր է և աղբարկղերից դուրս աղբ կուտակված չի լինում»:

Ինչ վերաբերում է աղբատար մեքենաներին, ապա Ստեփանավան բնակավայրում հարցման ենթարկված բնակչության 9%-ը համարում է, որ աղբատար մեքենաների կողմից աղբահանության աշխատանքների համար շրջայցերի հաճախականությունը բնակավայրում «ընդհանրապես բավարար չէ, մեքենաները

⁹Այս հարցին պատասխանել են միայն այն բնակիչները, ովքեր նշել են, որ բնակավայրում առկա են աղբարկղեր, որտեղ կուտակվում է կենցաղային աղբը, այնուհետև է հեռացվում աղբատար մեքենաներով

տարածք այցելում են շատ հազվադեպ», իսկ 18%-ը համարում է, որ «շրջայցերը ավելի շուտ բավարար չեն, մեքենաները տարածք այցելում են երբեմն-երբեմն»: Հարցման ենթարկված բնակչության 45%-ի կարծիքով շրջայցերը «ավելի շուտ բավարար են, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար», իսկ 27%-ը շրջայցերի քանակը համարում է լիովին բավարար:


Հարցման ենթարկված բնակչության 39%-ը երբևէ առնչվել է աղբահանություն իրականացնող աշխատակիցների հետ իրենց պարտականությունները կատարելիս: Այս բնակիչների 49%-ը նշել է, որ նրանց վերաբերմունքը իրենց հանդեպ եղել է լիովին դրական, 47%-ը՝ ավելի շուտ դրական, և միայն բնակչության 4%-ն է նշել, որ աշխատակիցների վերաբերմունքն իրենց հանդեպ եղել է բացասական:

Աղբահանության ծառայության դիմաց վճարում է Ստեփանավան բնակավայրում հարցման ենթարկված տնային տնտեսությունների 98%-ը: Հարցման ենթարկված տնային տնտեսությունների 8%-ը համարում է, որ աղբահանության դիմաց վարձավճարը իրենց ընտանիքի համար «ընդհանրապես մատչելի չէ», 28%-ը՝ «ավելի շուտ մատչելի չէ»: հարցման ենթարկված բնակչության մնացած մասի համար վարձավճարը մատչելի է. 55%-ը նշել է, որ վարձավճարը «ավելի շուտ մատչելի է», իսկ 9%-ի համար ծառայության վճարը միանգամայն մատչելի է:

«Արդյո՞ք Ձեր բնակավայրում առկա են փողոցային աղբանոթներ» հարցին Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի հարցման ենթարկված բոլոր բնակիչները նշել են, որ առկա չեն: Միայն Ստեփանավան քաղաքի բնակչության 78%-ն է նշել, որ իրենց բնակավայրում առկա են փողոցային աղբանոթներ: Նրանց 53%-ը նշել է, որ փողոցային աղբանոթներ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում՝ քիչ քանակությամբ, 24%-ը՝ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ, իսկ 1%-ի կարծիքով աղբանոթներ առկա են ամբողջ համայնքի տարածքում սակայն քիչ քանակությամբ:


Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ (Հավելված 1): Գնահատումն իրականացվել է միայն Ստեփանավան բնակավայրի համար քանի որ մյուս բնակավայրերում կենտրոնացված աղբահանության ծառայություններն ընդհանրապես բացակայել են: Գրաֆիկ 13-ում ներկայացված են Ստեփանավան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները¹⁰: Համաձայն գնահատման արդյունքների, բնակիչներն առավել բավարարված են աղբահանության իրականացման և աղբանոթների մաքրման հաճախությունից: Մյուս բաղադրիչների մասով, գնահատականները միջինից ցածր են: Բնակիչներն առավել դժգոհ են աղբարկղերի քանակից և տարողունակությունից, ինչպես նաև աղբանոթների քանակից:

¹⁰ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:



Գրաֆիկ 13 Աղբահանության ծառայության որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը Ստեփանավան բնակավայրի բնակիչների կողմից:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Միջինից բարձր գնահատան է տրվել միայն Ստեփանավան բնակավայրի բնակիչների կողմից՝ 6,74 միավոր: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է 5,3 միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 14):



Գրաֆիկ 14. Աղբահանության ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ստեփանավան համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված աղբահանության ծառայության որակի բարելավմանը:

Այն բնակավայրերում, որտեղ կենտրոնացված աղբահանություն չի իրականացվում, բնակիչներն առաջարկել են, որ իրականացվի աղբահանություն և բնակավայրերում տեղադրվեն աղբամաններ: Կաթնաղբյուրում առաջարկել են նաև շրջիկ աղբատար մեքենայի շահագործման տարբերակը (Աղյուսակ 2.4.3): Ստեփանավան քաղաքում բնակիչներն առաջարկել են ավելացնել իրենց փողոցներում աղբամանների թիվը, առավել հաճախ իրականացնեն աղբի հեռացում աղբամաններից, սպասարկի առավել լավ սանիտարահիգիենիկ վիճակում գտնվող աղբատար մեքենա, իսկ շրջիկ աղբատար մեքենան տարածք այցելի ավելի հաճախ: Ստեփանավան քաղաքում հատկապես Դեսին, Չարենց, Րաֆֆի և Մուրբ Նշան փողոցների բնակիչներն առաջարկել են ավելացնել աղբամանների քանակը իրենց փողոցներում: Առաջարկվել է նաև նվազեցնել աղբահանության համար գանձվող գումարի չափը, առավել լավ իրականացվի աղբամանների հարակից տարածքի մաքրությունը և այլն:

Առաջարկություններ	Ստեփանավան	Ուրասար	Կաթնաղբյուր
Իրականացնել աղբահանություն բնակավայրում	0	4	3
Աղբատար մեքենան շրջայցեր կատարի ավելի հաճախ	15	0	0
Տեղադրվեն աղբամաններ	0	11	13
Ավելացնել աղբամանների քանակը իրենց փողոցում	14	0	0
Տեղադրել փակվող կափարիչներով աղբամաններ	2	0	0
Տրամադրել շրջիկ աղբատար մեքենա	0	0	4
Նվազեցվի աղբահանության համար գանձվող գումարի չափը	2	0	0
Հաստակ ժամանակացույց սահմանել աղբատար մեքենաների շրջայցերի և իրազեկել այդ մասին բնակիչներին	2	0	0
Ավելացնեն աղբանոթների քանակը	2	0	0
Սպասարկումն իրականացվի նոր տեխնիկայի միջոցով	2	0	0
Իրականացվի նաև աղբամանների հարակից տարածքի մաքրում	5	0	0

Աղյուսակ 2.4.3: Բնակավայրերը, որտեղից ստացվել են աղբահանության ծառայության հետ կապված առաջարկներ

2.4.3 Ստեփանավան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Աղբի կոնտեյներներ: Ստեփանավան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 30 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցքները և փակուղիները: Դիտարկված փողոցների մեջ 10-ը եղել են գլխավոր փողոցներ, 20-ը՝ երկրորդական: Բացի Ստեփանավան բնակավայրից մնացած բնակավայրերում աղբամաններ առկա չեն եղել: Ստեփանավան քաղաքում դիտարկվել են թվով 17 փողոցներ՝ քաղաքի տարբեր ծայրերում ներառելով Ռումինական, Վիրահայոց, Չարենցի, Բաղրամյան, Իսահակյան, Շահումյան և այլ փողոցներ:

Ընդհանուր առմամբ դիտարկված փողոցներում արձանագրվել են աղբամանների 98 կետեր, որտեղ հիմնականում տեղադրված է եղել մեկ աղբաման (84 դեպքերում): Երկու աղբաման տեղադրված է եղել 10 դեպքում, իսկ 4 դեպքում տեղադրված է եղել 3 աղբաման: Ընդհանուր առմամբ դիտարկված աղբամանների քանակը կազմել է 116: 91 աղբամաններ եղել են պլաստմասե (Նկար 10), որոնցից 85-ը փակվող կափարիչներով, 7 կոնտեյներներ եղել են մետաղական (Նկար 11):

Դիտարկված աղբամանների կետերից ոչ մեկում առկա չի եղել պլաստիկ շշերի համար նախատեսված տարբերակված աղբաման: Դիտարկված կետերից ոչ մեկում աղբի կոնտեյներները երեք կողմից առանձնացված չեն եղել ցանկապատով, ոչ մի կետում աղբամանները տեղադրված չեն եղել պատվանդանի վրա (բետոնե կամ երկաթյա): Մոտ 80% դեպքերում աղբամանները տեղադրված են եղել մայթի վրա, փողոցի երթևեկելի հատվածում կամ սիզամարգերի վրա: Գրեթե բոլոր աղբամանների կետերի համար պահպանված չեն եղել բնակելի տներից աղբամանների տեղակայման վայրի համար սահմանված նվազագույն 15 մետր հեռավորությունը: Աղբի կոնտեյներների վրա առկա չի եղել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ որևէ այլ կոնտակտային տվյալ, բացառությամբ երեք դեպքի:

Դիտարկված բոլոր դեպքերում ցանկապատված աղբահավաք կետերը և աղբի կոնտեյներները եղել են կիսով չափ լցված (միջինում մոտ 50% լցվածություն): Գրանցվել է աղբամանի 2/3-րդից ավել լցված լինելու 12 դեպք (30%): Կենցաղային աղբը հարակից տարածքում կուտակված է եղել 11 դեպքում, ընդ որում 9 դեպքում կենցաղային աղբ հարակից տարածքում կուտակված է եղել այն դեպքում, երբ աղբամանները եղել են կիսադատարկ: Դիտարկված 98 կետերից 81-ի դեպքում աղբի կոնտեյներները եղել են կիսադատարկ և հարակից տարածքը զերծ է եղել աղբից, 4 դեպքում՝ աղբի կոնտեյներները եղել են լցված, սակայն հարակից տարածքը եղել է մաքուր: Աղբի կոնտեյներների հարակից տարածքում թափառող կենդանիներ նկատվել են երեք դեպքում, երեքն էլ 90%-ից ավել լցված աղբամանների դեպքում: 10 դեպքում աղբամանների հարակից տարածքում տարածված է եղել գարշահոտություն: 6 դեպքում աղբի կոնտեյներների հարակից տարածքում առկա է եղել աղբաջրերի արտահոսք: 87 աղբամանների կետեր ապահովված են եղել լուսավորության հենասյունով, մնացած դեպքերում լուսավորությունը բացակայել է:



Նկար 10. Պլաստմասե փակվող աղբամանները Ստեփանավան քաղաքում



Նկար 11. Մետաղական չփակվող լցված աղբամանները Ստեփանավան քաղաքում

Մոնիթորների կողմից արձանագրվել են նաև բնակավայրերի բնակելի տարածքներում «պատահական» առաջացած չարտոնված/ոչ օրինական աղբանոցները, որոնք համարվել են այդպիսին, եթե չեն առաջացել աղբի կոնտեյներների հարակից տարածքում: Ըստ արդյունքների, ընդհանուր առմամբ դիտարկված 30 փողոցներում այսպիսի աղբավայրեր չեն բացահայտվել: Մոնիթորները դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում աղբատար մեքենա չեն նկատել:

Մտեփանավանի քաղաքային աղբավայրը սպասարկում է Մտեփանավան քաղաքը, Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերը: Աղբավայրը Մտեփանավան քաղաքից տեղակայված է 0,6 կմ հեռավորության վրա: Ուրասարից հեռավորությունը 7,6 կմ է, իսկ Կաթնաղբյուրից՝ 18,6 կմ: Աղբավայրի տարածքի հատկացման վերաբերյալ առկա է ավագանու որոշում: Քաղաքային աղբավայր այցելության ընթացքում պարզվել է, որ սպառման թափոնների պոլիգոնը չունի կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, աղբատար փոխադրամիջոցների թափքերը և անվադողերը չեն լվացվում և ախտահանվում յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո:



Նկար 12. Մտեփանավանի քաղաքային աղբավայրը

Աղբավայրի տարածքը ցանկապատված չէ: Այցելության ընթացքում արձանագրվել է, որ սպառման թափոնները այրում են և մոնիթորինգի իրականացման ընթացքում ամբողջ տարածքը պատված է եղել ծխով (Նկար 12):

Այցելության ընթացքում աղբավայրի տարածքում խոշոր կամ մանր եղջերավոր կենդանիներ չեն նկատվել: Աղբավայրը տեղակայված է զգայուն ընկալիչների մոտ տարածքում: Աղբավայրից անմիջապես ներքև՝ ձորակի հատվածում հոսում է Չորագետը:

Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Ստեփանավան համայնքի համար՝

Նորմատիվների պահանջներ	Արդյունք	Միավոր
Չի համապատասխանում-0 միավոր Մասամբ է համապատասխանում – 1 միավոր Լիովին համապատասխանում է – 2 միավոր		
Աղբի կոնտեյներներ		
Աղբամանները տեղադրված են պատվանդանի վրա (բետոնե, երկաթյա)	Ոչ	0
Աղբամանի/աղբամանների շուրջ երեք կողմից պատնեշի/ցանկապատի առկայություն	Ոչ	0
Աղբամանը տեղադրված չեն մայթի, սիգամարզերի վրա կամ փողոցի երթևեկելի հատվածում	Մասամբ	1
Պահպանված է մոտակա բնակելի տնից/շենքից աղբամանների կետի նվազագույն հեռավորությունը	Մասամբ	1
Կոնտեյներների վրա առկա էին աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ ցանկացած այլ կոնտակտային տվյալ	Մասամբ	1
Ընդհանուր առմամբ լցված էր աղբամանների 2/3-ից ոչ ավելին	Մասամբ	1
Աղբի կոնտեյներների հարակից տարածքը եղել է մաքուր	Այո	2
Աղբատար մեքենա		
Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս կամ այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ	-	-
Աղբատար մեքենայի թափքից առկա չէ աղբաջրերի բացթողնում	-	-
Աղբատար մեքենայի վրա առկա էր աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ:	-	-
Աղբահանություն իրականացնող աշխատակիցները կրում էին արտահագուստ և սանիտարական ձեռնոցներ	-	-
Կենտրոնացված աղբավայր		
Աղբավայրը ցանկապատված է	Ոչ	0
Ընդամենը արդյունք	6 միավոր <i>Հնարավոր 16-ից</i>	

2.5 Աղբահանության իրականացումը դիլիջան խոշորացված համայնքում

2.5.1 Աղբահանության ոլորտում դիլիջան համայնքի տեխնիկական ապահովվածությունը

Դիլիջան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերն ապահովված են աղբի կոնտեյներներով: Վերազինված է նաև համայնքի աղբատար մեքենաների պարկը: Համայնքն ունի կողային բարձամար 4 աղբատար մեքենա, որոնցից երկուսը՝ 2012թ. արտադրության, մյուս երկուսը՝ 2016թ.-ի: Համայնքն ունի նաև առանց կողային բարձման 5 ինքնաթափ, որոնցից մեկը՝ 1980թ. արտադրության, մեկը՝ 2012թ., իսկ մյուս երեքը՝ 2016թ., ինչպես նաև աղբահանություն իրականացնող 2 TERREX ամբարձիչ էքսկավատոր երկուսն էլ 2016թ. արտադրության: Ընդհանուր առմամբ համայնքն ունի 0,65 մ³ տարողունակության 503 մետաղական աղբամաններ, որոնք տեղակայված են համայնքի ամբողջ տարածքում: Ամենամեծ թվով աղբամաններ տեղակայված են Դիլիջան քաղաքում՝ թվով 340 հատ, այնուհետև Հաղարծին և Թեղուտ գյուղերում՝ համապատասխանաբար 62 և 41 հատ: Համայնքի մաս կազմող մնացած բնակավայրերում տեղակայված են 15-ական աղբամաններ յուրաքանչյուրում (Աղյուսակ 2.5.1):

Բնակավայր	Բնակչության թիվը	Աղբարկղերի առկայություն		
		Աղբարկղերի քանակ բնակավայրում	Աղբարկղերի տիպը (պլաստմասե, մետաղական, ներկված, փակվող կափարիչներով /չփակվող)	Աղբարկղերի տարողունակությունը
Դիլիջան	18667	340	Մետաղական	0,65 մ ³
Թեղուտ	4085	41	Մետաղական	0,65 մ ³
Հաղարծին	1572	62	Մետաղական	0,65 մ ³
Գոշ	1129	15	Մետաղական	0,65 մ ³
Խաչարձան	430	15	Մետաղական	0,65 մ ³
Աղավնավանք	336	15	Մետաղական	0,65 մ ³
Հովք	372	15	Մետաղական	0,65 մ ³
Ընդամենը	26591	503	-	-

Աղյուսակ 2.5.1: Դիլիջան խոշորացված համայնքի բնակավայրերում առկա աղբարկղերը

2.5.2 Դիլիջան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից

Տնային տնտեսությունների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների շրջանակներում Դիլիջան համայնքում իրականացվել է թվով 160 հարցումներ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Առավել մեծ թվով հարցումներ իրականացվել են Դիլիջան քաղաքում (համայնքում արված հարցումների 49%-ը) և Հաղարծին գյուղում (համայնքում արված հարցումների 19%-ը): Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.5.2-ում:

Բնակավայր	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
-----------	-------------------	----------------------------

Դիլիջան	79	49%
Հաղարծին	31	19%
Թեղուտ	8	5%
Գոշ	11	7%
Հովք	11	7%
Աղավնավանք	11	7%
Խաչարձան	9	6%
Ընդամենը	160	100%

Աղյուսակ 6.5.2 Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակի բաշխումը Դիլիջան համայնքի բնակավայրերում

Համաձայն հարցման արդյունքների՝ կենտրոնացված աղբահանություն իրականացվում է Դիլիջան համայնքի բոլոր բնակավայրերում: Այնուամենայնիվ, Դիլիջան քաղաքում հարցման ենթարկված բնակչության 13%-ը նշել է, որ իրենց բնակավայրում կենտրոնացված աղբահանություն չի իրականացվում: Ի տարբերություն Հաղարծին, Թեղուտ, Հովք, Աղավնավանք, Խաչարձան բնակավայրերի, որտեղ հարցման ենթարկված գրեթե ամբողջը բնակչությունն օգտվում է կենտրոնացված աղբահանության ծառայություններից, Դիլիջան քաղաքում և Գոշ գյուղում բնակչության մի մասը կուտակված աղբը հեռացնում է սեփական միջոցներով՝ հարցման ենթարկված բնակչության 13%-ը Դիլիջան քաղաքում և 36%-ը՝ Գոշում (Աղյուսակ 2.5.3): Կենտրոնացված աղբահանության ծառայություններից չօգտվող այս բնակիչները աղբը հեռացնում են մի քանի եղանակներով. Դիլիջան քաղաքում առավել տարածված մեթոդներն են՝ աղբը նետում են ջրատար ատվի կամ գետի մեջ (հարցման ենթարկված բնակչության 4%-ը), կուտակված աղբը սեփական միջոցներով տեղափոխում են կենտրոնացված աղբավայր (հարցման ենթարկված բնակչության 9%-ը), իսկ Գոշում՝ առավել հաճախ աղբը այրում են (հարցման ենթարկված բնակչության 27%-ը) կամ աղբը թաղում են հողի մեջ (հարցման ենթարկված բնակչության 18%-ը):

Տնային տնտեսությունում կուտակված կենցաղային աղբի հեռացման եղանակներ	Կիրառվում է	Չի կիրառվում
Դիլիջան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	69	10
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	4	74
Ունենք SS-ին կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	1	77
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	1	77
Աղբը նետում ենք ջրատար առունների կամ գետի մեջ	3	75
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	7	71
Հաղարծին		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	31	0
Թեղուտ		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	8	0
Գոշ		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	6	5
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	1	10
Աղբը այրում ենք	3	8
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	1	10
Աղբը նետում ենք ջրատար առունների կամ գետի մեջ	1	10
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	1	10

Աղբը թաղում ենք հողի մեջ	2	9
Հովք		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	10	1
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	1	10
Աղավնավանք		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	11	0
Խաչարձան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	9	0

Աղյուսակ 2.5.3: Կենցաղային աղբի հեռացումը տնային տնտեսությունների կողմից ըստ նշված պատասխանների բաշխման

Դիլիջան քաղաքում հարցման ենթարկված բնակչության կեսը համարում է, որ առկա աղբարկղերը բավարար են և/կամ տարողունակ են և բավարարում են իրենց և իրենց հարևանությամբ գտնվող տնային տնտեսությունների կենցաղային աղբի սպասարկման համար, մինչդեռ բնակչության մյուս մասը այս կարծիքը չի կիսում: Աղբամանների քանակը և/կամ տարողունակությունը բավարար չեն համարել Գոշ գյուղի բնակիչները, ովքեր մասնավորեցրել են, աղբամաններ տեղակայված են միայն գլխավոր փողոցում: Համայնքի մյուս բնակավայրերում բնակիչները հիմնականում համարում են, որ առկա աղբամանները բավարար քանակի և տարողունակ են բնակչությանը պատշաճ սպասարկելու համար (Աղյուսակ 2.5.4):

Բնակավայր	Բնակչության թիվը	Աղբամանների քանակ	Այո, աղբարկղերը բավարար քանակի են և տարողունակ	Ոչ, աղբարկղերը քիչ են և/կամ տարողունակ չեն
Դիլիջան	18667	340	50%	50%
Հաղարծին	4085	41	87%	13%
Թեղուտ	1572	62	100%	0%
Գոշ	1129	15	27%	73%
Հովք	430	15	91%	9%
Աղավնավանք	336	15	100%	0%
Խաչարձան	372	15	78%	22%
Ընդամենը/միջինում	26591	503	67%	33%

Աղյուսակ 2.5.4: Աղբամանների քանակի և տարողունակության գնահատում բնակիչների կողմից

Այս նույն բնակավայրի բնակիչները հիմնականում նաև համարում են, որ աղբամանների տեղակայման վայրը հարմար է (Աղյուսակ 2.5.5): Աղբամանների տեղակայման վայրերը ոչ հարմար են համարում հիմնականում Գոշ գյուղի բնակիչները, ովքեր նշել են, որ աղբամանները տեղակայված են իրենց ՏՏ-ից հեռու կամ իրենց թաղամասում առհասարակ չկան: Հովքում նշել են, որ աղբամաններ չկան գյուղի ծայրամասերում: Իսկ Դիլիջան քաղաքում մի դեպքում բնակիչները դժգոհություն են հայտնել, որ աղբամանները տեղակայված են իրենց տներին շատ մոտ:

Բնակավայր	Այո, տեղակայված են հարմար վայրում	Ոչ, տեղակայված են անհարմար վայրում
Դիլիջան	72%	28%
Հաղարծին	97%	3%
Թեղուտ	100%	0%
Գոշ	45%	55%
Հովք	82%	18%
Աղավնավանք	100%	0%
Խաչարձան	78%	22%
Ընդամենը/միջինում	80%	20%

Աղյուսակ 2.5.5: Աղբամանների տեղադիրքի գնահատում բնակիչների կողմից

Բնակիչների¹¹ 7%-ը նշել է, որ «աղբամանների հարակից տարածքը ընդհանրապես մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում մշտապես առկա է կուտակված աղբ», 40%-ը նշել է, որ «աղբամանների հարակից տարածքում աղբ կուտակված է լինում ժամանակ առ ժամանակ»: Բնակիչների 27%-ը համարում է, որ աղբամանների հարակից տարածքը ավելի շուտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ, իսկ 26%-ը նշել է, աղբամանների հարակից տարածքը միշտ մաքուր է և աղբարկղերից դուրս աղբ կուտակված չի լինում (Աղյուսակ 2.5.6):

Բնակավայր	Հարակից տարածքը միշտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված չէ	Հարակից տարածքը հիմնականում մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ	Հարակից տարածքը հիմնականում մաքուր չէ, հարակից տարածքում ժամանակ առ ժամանակ կուտակված է լինում կենցաղային աղբ	Հարակից տարածքը ընդհանրապես մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում մշտապես առկա է կուտակված աղբ
Դիլիջան	6%	21%	58%	15%
Հաղարծին	13%	55%	32%	0%
Թեղուտ	0%	38%	63%	0%
Գոշ	9%	45%	36%	9%
Հովք	100%	0%	0%	0%
Աղավնավանք	91%	0%	9%	0%
Խաչարձան	89%	11%	0%	0%
Ընդամենը/միջինում	26%	27%	40%	7%

Աղյուսակ 2.5.6: Աղբամանների հարակից տարածքի մաքրության գնահատում բնակիչների կողմից

¹¹Այս հարցին պատասխանել են միայն այն բնակիչները, ովքեր նշել են, որ բնակավայրում առկա են աղբարկղեր, որտեղ կուտակվում է կենցաղային աղբը, այնուհետև է հեռացվում աղբատար մեքենաներով

Ինչ վերաբերում է աղբատար մեքենաներին, ապա Դիլիջան բնակավայրում հարցման ենթարկված բնակչության 18%-ը համարում է, որ աղբատար մեքենաների կողմից աղբահանության աշխատանքների համար շրջայցերի հաճախականությունը բնակավայրում «ավելի շուտ բավարար չէ», իսկ 8%-ի կարծիքով ընդհանրապես բավարար չէ: 68%-ը համարում է, որ «ավելի շուտ բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար», այնինչ 9%-ը համարում է, շրջայցերը «լիովին բավարար են և աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ» (Աղյուսակ 2.5.7):

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են շատ հազվադեպ	Ավելի շուտ բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են երբեմն-երբեմն	Ավելի շուտ բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար	Լիովին բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ
Դիլիջան	10%	29%	55%	6%
Հաղարծին	3%	17%	80%	0%
Թեղուտ	0%	13%	88%	0%
Գոշ	0%	9%	73%	18%
Հովք	0%	0%	73%	27%
Աղավնավանք	0%	0%	82%	18%
Խաչարձան	0%	0%	78%	22%
Ընդամենը/միջինում	5%	18%	68%	9%

Աղյուսակ 2.5.7: Աղբատար մեքենաների շրջայցերի գնահատում բնակիչների կողմից

Հարցման ենթարկված բնակչության մոտ 46%-ը երբևէ առնչվել է աղբահանությունն իրականացնող աշխատակիցների հետ իրենց պարտականությունները կատարելիս: Այս բնակիչների 45%-ը նշել է, որ նրանց վերաբերմունքը իրենց հանդեպ եղել է լիովին դրական, 49%-ը՝ ավելի շուտ դրական, 3%-ը՝ ավելի շուտ բացասական, իսկ մնացած 3%-ը՝ լիովին բացասական (Աղյուսակ 2.5.8):

Բնակավայր	Լիովին դրական	Ավելի շուտ դրական	Ավելի շուտ բացասական	Լիովին բացասական
Դիլիջան	35%	50%	10%	5%
Հաղարծին	50%	42%	0%	8%
Թեղուտ	100%	0%	0%	0%
Գոշ	20%	80%	0%	0%
Հովք	67%	33%	0%	0%
Աղավնավանք	45%	55%	0%	0%
Խաչարձան	44%	56%	0%	0%
Ընդամենը/միջինում	45%	49%	3%	3%

Աղյուսակ 2.5.8: Աղբահանություն իրականացնող աշխատակիցների վերաբերմունքի գնահատում բնակիչների կողմից

Աղբահանության ծառայության դիմաց վճարում են Դիլիջան համայնքում հարցման ենթարկված տնային տնտեսությունների 73%-ը, ընդ որում վճարում է Դիլիջան քաղաքի տնային տնտեսությունների 96%-ը:

Հարցման ենթարկված տնային տնտեսությունների 23%-ը համարում է, որ աղբահանության դիմաց վարձավճարը իրենց ընտանիքի համար «ավելի շուտ մատչելի չէ», 4%-ի համար՝ ընդհանրապես մատչելի չէ: Հարցման ենթարկված բնակչության մնացած մասի համար վարձավճարը մատչելի է. 49%-ը նշել է, որ վարձավճարը «ավելի շուտ մատչելի է», իսկ 25%-ի համար ծառայության վճարը միանգամայն մատչելի է(Աղյուսակ 2.5.7):

Բնակավայր	Այո վճարում են	Ընդհանրապես մատչելի չէ	Ավելի շուտ մատչելի չէ	Ավելի շուտ մատչելի է	Լիովին մատչելի է
Դիլիջան	96%	6%	31%	45%	17%
Հաղարծին	71%	0%	16%	84%	0%
Թեղուտ	75%	0%	0%	100%	0%
Գոշ	9%	0%	0%	50%	50%
Հովք	27%	0%	0%	0%	100%
Աղավնավանք	64%	0%	14%	0%	86%
Խաչարձան	56%	0%	0%	0%	100%
Ընդամենը/միջինում	73%	4%	23%	49%	25%

Աղյուսակ 2.5.9: Աղբահանության ծառայությունների մատչելիությունը բնակիչների համար


«Արդյո՞ք Ձեր բնակավայրում առկա են փողոցային աղբանոթներ» հարցին հարցման ենթարկված բնակչության 78%-ը պատասխանել է, որ «ոչ, առկա չեն»: 17%-ը նշել է, որ փողոցային աղբանոթներ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում՝ քիչ քանակությամբ, 2%-ը՝ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ, 3%-ի կարծիքով աղբանոթներ առկա են ամբողջ համայնքի տարածքում սակայն քիչ քանակությամբ: Հարցման ենթարկված բնակչության միայն 1%-ն է համարում, որ աղբանոթներ առկա են ամբողջ համայնքի տարածքում բավարար քանակությամբ (Աղյուսակ 2.5.10):

Բնակավայր	Ոչ, առկա չէն	Առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում քիչ քանակությամբ	Առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ	Առկա են ամբողջ համայնքի տարածքում քիչ քանակությամբ	Առկա են ամբողջ համայնքի տարածքում բավարար քանակությամբ
Դիլիջան	58%	35%	4%	3%	0%
Հաղարծին	97%	0%	0%	0%	3%
Թեղուտ	100%	0%	0%	0%	0%
Գոշ	82%	0%	0%	18%	0%
Հովք	100%	0%	0%	0%	0%
Աղավնավանք	100%	0%	0%	0%	0%
Խաչարձան	100%	0%	0%	0%	0%
Ընդամենը/ միջինում	78%	17%	2%	3%	1%

Աղյուսակ 2.5.10: Աղբանոթների առկայությունը համայնքի տարածքում ըստ բնակիչների գնահատականների


Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ (Հավելված 1): Գրաֆիկ 15-ում ներկայացված են Դիլիջան բնակավայրի համար գնահատման միջինացված ցուցանիշները¹²: Համաձայն գնահատման արդյունքների, բնակիչներն առավել բավարարված են աղբամանների տեղադիրքից և հասանելիությունից, աղբահանության իրականացման հաճախությունից և աղբարկղերի բավարար քանակից և տարողունակությունից: Բնակիչներն առավել դժգոհ են աղբանոթների բացակայությունից, մաքրման հաճախությունից, աղբարկղերի հարակից տարածքներում թափառող կենդանիների առկայությունից:

¹² Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:



Գրաֆիկ 15 Աղբահանության ծառայության որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը Դիլիջան բնակավայրի բնակիչների կողմից:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: 7 միավորից բարձր գնահատան է տրվել միայն Հովք, Աղավնավանք, Խաչարձան բնակավայրերի բնակիչների կողմից: Մյուս չորս բնակավայրերի դեպքում աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունները բնակիչների կողմից գնահատվել են միջինից էլ ցածր: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **4.93** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 2):



Գրաֆիկ 16. Աղբահանության ծառայություններից բնակչության բավարարվածությունը Դիլիջան համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված աղբահանության ծառայության որակի բարելավմանը: Բնակիչներն առաջարկել են ավելացնել

աղբամանների թիվը և հատկապես տեղադրել փակվող կափարիչներով աղբամաններ կամ եղած աղբամանների համար կիրառել ցանցեր: Դիվիզան քաղաքի բնակիչների կողմից առավել հաճախ առաջարկվել է աղբահանության աշխատանքները կատարել ժամանակին և ավելացվեն աղբամանների թիվը (Աղյուսակ 2.5.11):

Առաջարկություններ	Դիվիզան	Հաղարծին	Թեղուտ	Գոշ	Հովք	Աղավնավանք	Խաչարձան
Աղբահանության աշխատանքները կատարեն ժամանակին	24	7	0	0	0	0	0
Տեղադրեն նոր աղբամաններ/ավելացնեն աղբամանների թիվը	12	1	0	1	1	0	3
Տեղադրեն աղբանոթներ	4	0	0	0	0	0	0
Աղբամանները լինեն ավելի տարողունակ և փակվող	5	1	0	0	0	0	0
Ուշադրություն դարձնեն երկրորդական փողոցների և ծայրամասային թաղամասերի աղբահանությանը	2	0	0	1	0	0	0

Աղյուսակ 2.5.11: Բնակավայրերը, որտեղից ստացվել են աղբահանության ծառայության բարելավման հետ կապված առաջարկներ

2.5.3 Դիլիջան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Աղբի կոնտեյներներ: Դիլիջան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 26 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր փողոցները (թվով 9-ը), այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցները և փակուղիները (թվով 17): Դիտարկված փողոցներից 19-ում առկա են եղել աղբի կոնտեյներների կետեր: Դիլիջան քաղաքում դիտարկվել են Կալինինի, Գետափնյա, Սայաթ-Նովա, Այգեստան, Մյասնիկյան, Շահումյան և այլ փողոցներ: Բոլոր բնակավայրերում առկա են եղել աղբամաններ (Աղյուսակ 2.5.12):

Ընդհանուր առմամբ դիտարկված փողոցներում արձանագրվել են աղբամանների 104 կետեր, որտեղ հիմնականում տեղադրված է եղել մեկ աղբաման (102 դեպքերում), իսկ երկու դեպքում՝ 2 աղբաման: Ընդհանուր առմամբ դիտարկված աղբամանների քանակը կազմել է 108: 91 աղբամաններ եղել են պլաստմասե, որոնցից 85-ը փակվող կափարիչներով, 7 կոնտեյներներ եղել են մետաղական:

Դիտարկված փողոցը	Դիտարկված փողոցների քանակը, որտեղ առկա են եղել աղբամանների կետեր	Ընդհանուր առմամբ դիտարկված աղբամանների կետերի քանակ	Ընդհանուր առմամբ դիտարկված աղբամանների քանակ
Դիլիջան	8	52	52
Հաղարծին	1	9	10
Թեղուտ	1	5	6
Գոշ	1	1	1
Հովք	3	14	16
Աղավնավանք	3	18	18
Խաչարձան	2	6	6

Աղյուսակ 2.5.12. Դիլիջան բնակավայրում դիտարկված աղբամանների կետերի քանակը

Դիտարկված աղբամանների կետերից ոչ մեկում առկա չի եղել պլաստիկ շշերի համար նախատեսված տարբերակված աղբաման: Մոտ 70% դեպքերում աղբամանները տեղադրված են եղել պատվանդանի վրա (բետոնե կամ երկաթյա), իսկ 32% դեպքերում աղբի կոնտեյներները երեք կողմից առանձնացված չեն եղել ցանկապատով: Մոտ 42% դեպքերում աղբամանները տեղադրված են եղել մայթի վրա, փողոցի երթևեկելի հատվածում կամ սիզամարգերի վրա: Գրեթե բոլոր աղբամանների կետերի համար պահպանված են եղել բնակելի տներից աղբամանների տեղակայման վայրի համար սահմանված նվազագույն 15 մետր հեռավորությունը: Աղբի կոնտեյներների վրա առկա չի եղել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ որևէ այլ կոնտակտային տվյալ: Դիտարկված աղբամանները եղել են տարբեր տեսակի՝ մետաղական, փակվող և չփակվող կափարիչներով, առկա են եղել նաև վնասված աղբամաններ:

Դիտարկված բոլոր դեպքերում ցանկապատված աղբահավաք կետերը և աղբի կոնտեյներները եղել են կիսով չափ լցված (միջինում մոտ 50% լցվածություն): Աղբամանի 2/3-րդից ավել լցված լինելու դեպքերը կազմել են

ընդհանուրի մոտ 15%-ը: Դիտարկված դեպքերի 50%-ի դեպքում «աղբի կոնտեյներները կիսադատարկ էին, հարակից տարածքը զերծ էր աղբից», 17% դեպքում՝ «աղբի կոնտեյներները կիսադատարկ էին, սակայն կենցաղային աղբը կուտակված էր հարակից տարածքում», 28% դեպքերում «աղբի կոնտեյներները լցված էին, սակայն հարակից տարածքը մաքուր էր» և միայն 6% դեպքերում է «աղբի կոնտեյներները եղել լցված և աղբը կուտակված էր հարակից տարածքում»:

Աղբի կոնտեյներների հարակից տարածքում թափառող կենդանիներ նկատվել են հինգ դեպքում, բոլորն էլ այն աղբամանների դեպքում, որոնք եղել են առավել լցված և հարակից տարածքը եղել է աղտոտված: 4 դեպքում աղբամանների հարակից տարածքում տարածված է եղել գարշահոտություն: 6 դեպքում աղբի կոնտեյներների հարակից տարածքում առկա է եղել աղբաջրերի արտահոսք: 20% աղբամանների կետեր ապահովված են եղել լուսավորության հենասյունով, մնացած դեպքերում լուսավորությունը բացակայել է:

Մոնիթորների կողմից արձանագրվել են նաև բնակավայրերի բնակելի տարածքներում «պատահական» առաջացած չարտոնված/ոչ օրինական աղբանոցները, որոնք համարվել են այդպիսին, եթե չեն առաջացել աղբի կոնտեյներների հարակից տարածքում: Ըստ արդյունքների, ընդհանուր առմամբ դիտարկված 26 փողոցներում այսպիսի աղբավայրեր չեն բացահայտվել: Համայնքում մոնիթորինգային աշխատանքների իրականացման ընթացքում մոնիթորները աղբատար մեքենաներ չեն նկատել:

Դիլիջան համայնքի կենտրոնացված աղբավայր: Դիլիջան համայնքն ունի աղբավայր, որը գտնվում է խոշորացված Դիլիջան համայնքի տարածքում և տեղակայված է Հաղարծին և Գոշ բնակավայրերի միջև ընկած տարածքում: Հաղարծին բնակավայրից գտնվում է մոտ 3 կմ հեռավորության վրա: Աղբավայրի տարածքի հատկացման վերաբերյալ առկա է ավագանու որոշում: Աղբավայր մոնիթորինգային այցի արդյունքում պարզվել է, որ աղբավայրը չունի կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, աղբատար փոխադրամիջոցների թափքերը և անվաղողերը չեն լվացվում և ախտահանվում յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո (Նկար 3): Աղբավայրի տարածքում և հարակից վայրերում եղել են թափառող կենդանիներ: Այցելության ընթացքում արձանագրվել է, որ աղբավայրի տարածքում իրականացվել է սպառման թափոնների այրում: Ամբողջ աղբավայրը տեղակայված է բնապահպանական առումով զգայուն տարածքում՝ անտառային կանաչապատ տարածքում (Նկար 13): Աղբավայրը ցանկապատված չէ, ինչի պատճառով աղբը տարածված է եղել հարակից ծառերի

վրա:



Նկար 13. Դիլիջանի աղբավայրը՝ տեղակայված անտառային տարածքում

Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը Դիլիջան համայնքի համար՝

Նորմատիվների պահանջներ	Արդյունք	Միավոր
Չի համապատասխանում-0 միավոր Մասամբ է համապատասխանում – 1 միավոր Լիովին համապատասխանում է – 2 միավոր		
Աղբի կոնտեյներներ		
Աղբամանները տեղադրված են պատվանդանի վրա (բետոնե, երկաթյա)	Մասամբ	1
Աղբամանի/աղբամանների շուրջ երեք կողմից պատնեշի/ցանկապատի առկայություն	Մասամբ	1
Աղբամանը տեղադրված չեն մայթի, սիգամարգերի վրա կամ փողոցի երթևեկելի հատվածում	Մասամբ	1
Պահպանված է մոտակա բնակելի տնից/շենքից աղբամանների կետի նվազագույն հեռավորությունը	Այո	2
Կոնտեյներների վրա առկա էին աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ ցանկացած այլ կոնտակտային տվյալ	Ոչ	0
Ընդհանուր առմամբ լցված էր աղբամանների 2/3-ից ոչ ավելին	Այո	2
Աղբի կոնտեյներների հարակից տարածքը եղել է մաքուր	Այո	2
Աղբատար մեքենա		
Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս կամ այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ	-	-
Աղբատար մեքենայի թափքից առկա չէ աղբաջրերի բացթողում	-	-
Աղբատար մեքենայի վրա առկա էր աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ:	-	-
Աղբահանություն իրականացնող աշխատակիցները կրում էին արտահագուստ և սանիտարական ձեռնոցներ	-	-
Կենտրոնացված աղբավայր		
Աղբավայրը ցանկապատված է	Ոչ	0
Ընդամենը արդյունք	12 միավոր	

2.6 Աղբահանության իրականացումը նոյեմբերյան խոշորացված համայնքում

2.6.1 Աղբահանության ոլորտում նոյեմբերյան համայնքի տեխնիկական ապահովվածությունը

Համայնքում առկա աղբատար մեքենաների, աղբարկղերի և հատկացված աղբավայրերի վերաբերյալ տեղեկատվության հարցմանն ի պատասխան նոյեմբերյան համայնքը ներկայացրել է, որ համայնքն ունի կողային բարձամաք մեկ աղբատար մեքենա՝ 2007թ. արտադրության և առանց կողային բարձման 2 ինքնաթափ մեքենա՝ 1989 և 1990թ. արտադրության:

Համայնքում ընդհանուր թվով առկա են 155 տարբեր տարողունակության աղբարկղեր, որոնցից առավել մեծ թվով աղբարկղեր տեղակայված են Կոթի բնակավայրում (66 հատ), Ոսկեվանում (23 հատ) և Ջուջևանում (16 հատ): Աղբամաններ ընդհանրապես տեղակայված չեն Բարեկամավանում, իսկ նոյեմբերյան քաղաքում ընդհանուր առմամբ տեղակայված են թվով 10 աղբամաններ, իսկ աղբահանությունն այստեղ իրականացվում է շրջիկ աղբատար մեքենաների միջոցով (2.6.1):

Բնակավայր	Մշտական բնակչության թիվը բնակավայրում	Աղբարկղերի առկայություն		
		Աղբարկղերի քանակ բնակավայրում	Աղբարկղերի տիպը (պլաստմասե, մետաղական, ներկված, փակվող կափարիչներով /չփակվող)	Աղբարկղերի տարողունակությունը
Նոյեմբերյան	6082	10		0,7 մ ³
Բաղանիս	885	10		0,01 մ ³
Բարեկամավան	476	0		-
Բերդավան	3516	12		0,5 մ ³
Դովեղ	604	10		0,7 մ ³
Կոթի	2133	66		0,7 մ ³
Ոսկեպար	912	8		0,7 մ ³
Ոսկեվան	1397	23		0,7 մ ³
Ջուջևան	571	16		0,2 մ ³
Ընդամենը	16576	155		

Աղյուսակ 2.6.1. Նոյեմբերյան խոշորացված համայնքի բնակավայրերում առկա աղբարկղերը

2.6.2 Նոյեմբերյան համայնքի բնակչության բավարարվածությունն աղբահանության ծառայություններից
 Նոյեմբերյան համայնքում իրականացվել է 153 քանակական դեմ առ դեմ հարցումներ համայնքի բնակիչների հետ՝ ընդգրկելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ըստ առանձին բնակավայրերի հարցման ենթարկված բնակչության թվի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 2.6.2-ում:

Բնակավայր	Հարցումների քանակ	Ընդհանուրի մեջ մասնաբաժինը
Նոյեմբերյան	46	30%
Բաղանիս	10	7%
Բարեկամավան	6	4%
Բերդավան	31	20%
Դովեղ	7	4%
Կոթի	21	14%
Ոսկեպար	9	6%
Ոսկեվան	16	10%
Ջուջևան	7	5%
Ընդամենը	153	100%

Աղյուսակ 7.6.2 Իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների քանակ Ախուրյան համայնքում

«Արդյոք Ձեր համայնքապետարանը Ձեր բնակավայրում իրականացնում է աղբահանություն» հարցին դրական պատասխան են տվել բոլոր բնակավայրերի բնակիչները՝ բացի Բարեկամավան և Ջուջևան բնակավայրերից: Ջուջևանում 7 հարցվածներից 3-ը, իսկ Բարեկամավանում բոլոր հարցվածները նշել են, որն իրենց համայնքում կենտրոնացված աղբահանություն չի իրականացվում:

Նոյեմբերյան քաղաքում հարցման ենթարկված բնակիչներն իրենց տանը կուտակված կենցաղային աղբը հեռացնում են շրջիկ աղբատար մեքենայի միջոցով (հարցման ենթարկված բնակիչների 94%-ը): Բնակիչներից մեկն էլ նշել է, որը աղբը տեղափոխում է կենտրոնացված աղբավայր սեփական տրանսպորտային միջոցով, իսկ բնակիչներից երկուսը՝ թափում են մոտակա աղբամանի մեջ:

Համայնքի մաս կազմող մյուս բնակավայրերում բնակիչները աղբը հիմնականում կա՛մ թափում են մոտակա աղբամանի մեջ, կա՛մ հանձնում են շրջիկ աղբատար մեքենային: Դովեղում մասնավորապես բնակիչները նշել են, որ աղբամաններ չկան և աղբը հանձնում են շրջիկ աղբատար մեքենային: Չնայած նրան, որ որոշ համայնքներում իրականացվում է կենտրոնացված աղբահանություն, սակայն բնակիչների մի մասը աղբը հեռացնում է սեփական միջոցներով: Բարեկամավանում, որտեղ չի իրականացվում կենտրոնացված աղբահանություն, բնակիչները աղբը կա՛մ այրում են, կա՛մ թափում են ՏՏ-ներին կից անհատական աղբավայրերում, կա՛մ նետում են ցանկացած պատահական վայրում (Աղյուսակ 2.6.3):

Տնային տնտեսությունում կուտակված կենցաղային աղբի հեռացման եղանակներ	Կիրառվում է	Չի կիրառվում
Նոյեմբերյան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	2	45
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	43	3
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	1	46
Բաղանիս		

Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	6	4
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	7	3
Բարեկամական		
Աղբը այրում ենք	4	2
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	2	4
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	2	4
Բերդավան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	2	29
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	31	0
Դովեղ		
Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային	7	0
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	2	5
Կոթի		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	15	6
Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը	2	19
Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում	2	19
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	4	17
Ոսկեպար		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	4	5
Աղբը այրում ենք	1	8
Աղբը նետում ենք ջրատար առուների կամ գետի մեջ	1	8
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	1	8
Աղբը թաղում ենք հողի մեջ	2	7
Ոսկեվան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	16	0
Ջուջևան		
Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ	4	3
Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր	3	4

Աղյուսակ 2.6.3: Կենցաղային աղբի հեռացումը տնային տնտեսությունների կողմից ըստ նշված պատասխանների բաշխման

Նոյեմբերյան համայնքի այն տնային տնտեսությունները, որոնք նշել են, որ համայնքապետարանն աղբահանություն իրականացնում է աղբարկղերի միջոցով, 54% դեպքերում համարում են, որ առկա

աղբարկղերը քիչ են և/կամ տարողունակ չեն և չեն բավարարում իրենց և իրենց հարևանությամբ գտնվող տնային տնտեսությունների կենցաղային աղբի սպասարկման համար: Այս պատասխանը հատկապես նշվել է Նոյեմբերյան, Կոթի, Ջուջևան բնակավայրերի բնակիչների կողմից (Աղյուսակ 2.6.4):

Բնակավայր	Բնակչության թիվը	Աղբամանների քանակ	Այո, աղբարկղերը բավարար քանակի են և տարողունակ	Ոչ, աղբարկղերը քիչ են և/կամ տարողունակ չեն
Նոյեմբերյան	6082	10	0%	100%
Բաղանիս	885	10	83%	17%
Բերդավան	3516	12	67%	33%
Կոթի	2133	66	40%	60%
Ոսկեպար	912	8	57%	43%
Ոսկեվան	1397	23	75%	25%
Ջուջևան	571	16	0%	100%
Ընդամենը/միջինում	15496	145	46%	54%

Աղյուսակ 2.6.4: Աղբամանների քանակի և տարողունակության գնահատում բնակիչների կողմից

Բնակիչների 51%-ը համարում է, որ աղբամանները տեղադրված են անհարմար վայրում: Այս կարծիքը հատկապես շեշտվել է Նոյեմբերյան, Ոսկեպար, Ջուջևան, Կոթի բնակավայրերի բնակիչների կողմից (Աղյուսակ 2.6.5): Բնակիչները նշել են, որ համայնքում աղբամանները քիչ են, տեղակայված են հիմնականում գլխավոր փողոցներում և տներից էլ բավականին հեռու են գտնվում:

Բնակավայր	Այո, տեղակայված են հարմար վայրում	Ոչ, տեղակայված են անհարմար վայրում
Նոյեմբերյան	0%	100%
Բաղանիս	83%	17%
Բերդավան	67%	33%
Կոթի	45%	55%
Ոսկեպար	33%	67%
Ոսկեվան	88%	13%
Ջուջևան	0%	100%
Ընդամենը/միջինում	49%	51%

Աղյուսակ 2.6.5: Աղբամանների տեղադիրքի գնահատում բնակիչների կողմից

Ինչ վերաբերում է աղբամանների հարակից տարածքի մաքրությանը, ապա բնակիչների 13 17%-ը նշել է, որ «աղբամանների հարակից տարածքը ընդհանրապես մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում

¹³Այս հարցին պատասխանել են միայն այն բնակիչները, ովքեր նշել են, որ բնակավայրում առկա են աղբարկղեր, որտեղ կուտակվում է կենցաղային աղբը, այնուհետև է հեռացվում աղբատար մեքենաներով

մշտապես առկա է կուտակված աղբ», 33%-ը նշել է, որ «հարակից տարածքը հիմնականում մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում աղբ կուտակված է լինում ժամանակ առ ժամանակ»: Բնակիչների 25%-ը համարում է, որ աղբամանների հարակից տարածքը ավելի շուտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ, իսկ մնացած 25%-ը նշել է, աղբամանների հարակից տարածքը միշտ մաքուր է և աղբարկղերից դուրս աղբ կուտակված չի լինում (Աղյուսակ 2.6.6):

Բնակավայր	Հարակից տարածքը միշտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված չէ	Հարակից տարածքը հիմնականում մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ	Հարակից տարածքը հիմնականում մաքուր չէ, հարակից տարածքում ժամանակ առ ժամանակ կուտակված է լինում կենցաղային աղբ	Հարակից տարածքը ընդհանրապես մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում մշտապես առկա է կուտակված աղբ
Դիլիջան	25%	25%	33%	17%
Հաղարծին	17%	83%	0%	0%
Թեղուտ	17%	67%	17%	0%
Գոշ	0%	65%	35%	0%
Հովք	57%	29%	14%	0%
Աղավնավանք	25%	56%	6%	13%
Խաչարձան	0%	33%	33%	33%
Ընդամենը/միջինում	25%	25%	33%	17%

Աղյուսակ 2.6.6: Աղբամանների հարակից տարածքի մաքրության գնահատում բնակիչների կողմից

Ինչ վերաբերում է աղբատար մեքենաներին, ապա Նոյեմբերյան բնակավայրում հարցման ենթարկված բնակչության 11%-ը համարում է, որ աղբատար մեքենաների կողմից աղբահանության աշխատանքների համար շրջայցերի հաճախականությունը բնակավայրում Ընդհանրապես բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են շատ հազվադեպ, 11%-ը՝ «ավելի շուտ բավարար չէ», 62%-ը համարում է, որ «ավելի շուտ բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար», այնինչ 16%-ը համարում է, որ շրջայցերը «լիովին բավարար են և աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ» (Աղյուսակ 2.6.7): Աղբատար մեքենաների շրջայցերի հաճախությունից առավել դժգոհ են եղել Դովեղ և Ջուջևան բնակավայրերի բնակիչները:

Բնակավայր	Ընդհանրապես բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են շատ հազվադեպ	Ավելի շուտ բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են երբեմն-երբեմն	Ավելի շուտ բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար	Լիովին բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ
Նոյեմբերյան	15%	15%	54%	15%
Բաղանիս	10%	0%	80%	10%
Բերդավան	6%	0%	81%	13%
Դովեղ	29%	29%	43%	0%
Կոթի	5%	10%	60%	25%
Ոսկեպար	0%	14%	57%	29%
Ոսկեվան	6%	19%	56%	19%
Ջուջևան	25%	25%	50%	0%
Ընդամենը/միջինում	11%	11%	62%	16%

Աղյուսակ 2.6.7: Աղբատար մեքենաների շրջայցերի գնահատում բնակիչների կողմից

Հարցման ենթարկված բնակչության մոտ 84%-ը երբևէ առնչվել է աղբահանություն իրականացնող աշխատակիցների հետ իրենց պարտականությունները կատարելիս: Այս բնակիչների 78%-ը նշել է, որ նրանց վերաբերմունքը իրենց հանդեպ եղել է լիովին դրական, 21%-ը՝ ավելի շուտ դրական, և բնակչության միայն 1%-ն է իրենց հանդեպ աշխատակիցների վերաբերմունքը գնահատել ավելի շուտ բացասական:

Աղբահանության ծառայության դիմաց վճարում են միայն Նոյեմբերյան քաղաքի բնակիչները, ընդ որում վճարում է հարցման ենթարկված բնակչության 90%-ը: Հարցման ենթարկված տնային տնտեսությունների 7%-ը համարում է, աղբահանության դիմաց վարձավճարը իրենց ընտանիքի համար «մատչելի չէ», հարցման ենթարկված բնակչության մնացած 93%-ի համար վարձավճարը մատչելի է. 38%-ը նշել է, որ վարձավճարը «ավելի շուտ մատչելի է», իսկ 55%-ի համար ծառայության վճարը միանգամայն մատչելի է:


«Արդյո՞ք Ձեր բնակավայրում առկա են փողոցային աղբանոթներ» հարցին հարցման ենթարկված բնակչության 61%-ը պատասխանել է, որ «ոչ, առկա չեն»: 19%-ը նշել է, որ փողոցային աղբանոթներ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում՝ քիչ քանակությամբ, 17%-ը՝ առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ, իսկ 3%-ի կարծիքով աղբանոթներ առկա են ամբողջ համայնքի տարածքում սակայն քիչ քանակությամբ: Հարցման արդյունքների համաձայն փողոցային աղբանոթներ ընդհանրապես չկան Բարեկամավան և Դովեղ բնակավայրերում (Աղյուսակ 2.6.8):

Բնակավայր	Ոչ, առկա չեն	Առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում քիչ քանակությամբ	Առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ	Առկա են ամբողջ համայնքի տարածքում քիչ քանակությամբ
Նոյեմբերյան	89%	4%	4%	2%
Բաղանիս	40%	30%	10%	20%
Բարեկամավան	100%	0%	0%	0%
Բերդավան	16%	19%	65%	0%
Դովեղ	100%	0%	0%	0%
Կոթի	86%	10%	5%	0%
Ոսկեպար	63%	13%	13%	13%
Ոսկեվան	13%	81%	6%	0%
Ջուջևան	71%	29%	0%	0%
Ընդամենը/ միջինում	61%	19%	17%	3%

Աղյուսակ 2.6.8: Աղբահանություն իրականացնող աշխատակիցների վերաբերմունքի գնահատում բնակիչների կողմից


Հարցման ենթարկված բնակչությանն առաջարկվել է 1-ից 4 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ (Հավելված 1, մաս 6): Գրաֆիկ 17-ում ներկայացված են Նոյեմբերյան համայնքի համար գնահատման միջինացված ցուցանիշները¹⁴: Համաձայն գնահատման արդյունքների, բնակիչներն առավել բավարարված են աղբահանության իրականացման հաճախությունից և որակի և պակաս բավարարված են համայնքի տարածքում աղբամանների և աղբանոթների քանակից:

¹⁴ Այն դեպքերում, երբ գնահատման բաղադրիչը վերաբերում է ծառայության առկայությանը և բնակիչները նշել են, որ «ծառայությունը բացակայում է», միջինացված ցուցանիշում հաշվարկվել է որպես «0» միավոր: Այն դեպքերում, երբ բաղադրիչը վերաբերում է ծառայության որակից բնակչության բավարարվածությանը, միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվել է միայն այն բնակիչների տված գնահատականներից, ովքեր նշել են, որ ծառայությունն առկա է:



Գրաֆիկ 17. Աղբահանության ծառայության որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը Նոյեմբերյան բնակավայրի բնակիչների կողմից:

Համայնքի բնակիչներին առաջարկվել է 1-ից 10 բալանոց սանդղակով գնահատել աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից իրենց ընդհանուր բավարարվածությունը: Բացի Բարեկամավան և Ջուջևան բնակավայրից, մյուս բոլոր բնակավայրերի դեպքում տրվել են միջինից բարձր գնահատաններ: Առավել բարձր գնահատականներ են տրվել Բերդավան, Բաղանիս, Ոսկեվան և Ոսկեպար բնակավայրերի բնակիչների կողմից: Նոյեմբերյան քաղաքի բնակիչների կողմից տրված միջին գնահատականը կազմել է 5.87: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է **6,7** միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 18):



Գրաֆիկ 18. Աղբահանության ծառայություններից բնակչության բավարարվածությունը Նոյեմբերյան համայնքի բնակավայրերի համար

Համայնքի բնակիչներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց առաջարկություններն ուղղված աղբահանության ծառայության որակի բարելավմանը: Բնակիչներից շատերն են նշել, որ գոհ են աղբահանության ոլորտում մատուցվող ծառայություններից և առաջարկներ չունեն: Նոյեմբերյան քաղաքում բնակիչներն առաջարկել են ավելացնել աղբամանների թիվը, առավել հաճախ իրականացնեն աղբի հեռացում աղբամաններից (Աղյուսակ 2.6.9):

Առաջարկություններ	Նոյեմբերյան	Բաղանիս	Բարեկամավան	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկեվան	Ջուջևան
Աղբամաններ ավելացնեն	16	4	2	1	4	10	3	2	3
Աղբամանները տեղադրվեն տներից ավելի մոտ	1	0	0	0	0	3	1	1	1
Տեղադրվեն աղբանոթներ	3	1	1	0	0	6	0	5	0
Աղբատար մեքենան ավելի հաճախ իրականացնի շրջայցեր	7	2	0	3	3	1	2	4	1
Աղբատար մեքենաներ տրամադրվեն	0	0	5	0	0	1	1	1	2

Աղյուսակ 2.6.9: Բնակավայրերը, որտեղից ստացվել են աղբահանության ծառայության ոլորտի բարելավման հետ կապված առաջարկներ

2.6.3 Նոյեմբերյան խոշորացված համայնքում աղբահանության ոլորտի մոնիթորինգի արդյունքներ

Աղբի կոնտեյներներ: Նոյեմբերյան խոշորացված համայնքում մոնիթորինգ է իրականացվել ընդհանուր առմամբ 42 փողոցներում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը, իսկ բնակավայրերում դիտարկվել են ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական փողոցները, նրբանցները և փակուղիները: Ընդհանուր առմամբ դիտարկման են ենթարկվել 18 գլխավոր փողոցներ և 24 երկրորդական: Ընդհանուր առմամբ դիտարկված փողոցներից 10-ում եղել են աղբամանների կետեր, որտեղ հիմնականում տեղադրված է եղել մեկական աղբաման: Ընդհանուր առմամբ դիտարկված աղբամանների քանակը կազմել է 53 (Աղյուսակ 2.6.10):

Դիտարկված փողոցը	Դիտարկված փողոցների քանակ , որտեղ առկա են եղել աղբամաններ	Ընդհանուր առմամբ դիտարկված աղբամանների քանակ
Նոյեմբերյան	1	5
Բաղանիս	2	9
Բարեկամավան	0	0
Բերդավան	0	0
Դովեղ	0	0
Կոթի	2	12
Ոսկեպար	2	10
Ոսկեվան	2	12
Ջուջևան	1	5
Ընդամենը	10	53

Աղյուսակ 2.6.10. Նոյեմբերյան բնակավայրում դիտարկված աղբամանների քանակը

Դիտարկված աղբամանների կետերից ոչ մեկում առկա չի եղել պլաստիկ շշերի համար նախատեսված տարբերակված աղբաման: Մոտ 30% դեպքերում աղբամանները տեղադրված են եղել պատվանդանի վրա (բետոնե կամ երկաթյա), իսկ 20% դեպքերում աղբի կոնտեյներները երեք կողմից առանձնացված են եղել ցանկապատով: Դիտարկված դեպքերում աղբամանները տեղադրված են եղել մայթի վրա, փողոցի երթևեկելի հատվածում կամ սիզամարզերի վրա: Գրեթե բոլոր աղբամանների կետերի համար պահպանված է եղել բնակելի տներից աղբամանների տեղակայման վայրի համար սահմանված նվազագույն 15 մետր հեռավորությունը՝ միջինում կազմելով մոտ 30 մետր: Աղբի կոնտեյներների վրա առկա չի եղել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ որևէ այլ կոնտակտային տվյալ: Դիտարկված բոլոր աղբամանները եղել են մետաղական, չփակվող կափարիչներով, առկա են եղել նաև վնասված աղբամաններ:

Դիտարկված բոլոր դեպքերում ցանկապատված աղբահավաք կետերը և աղբի կոնտեյներները եղել են կիսով չափ լցված (միջինում մոտ 50% լցվածություն): Աղբամանի 2/3-րդից ավել լցված լինելու դեպքերը կազմել են ընդհանուրի մոտ 20%-ը: 90% դեպքերում աղբամանները եղել են ոչ ամբողջությամբ լցված և աղբամանների հարակից տարածքն էլ եղել է մաքուր: 10% դեպքերում աղբի կոնտեյներները եղել են կիսադատարկ, սակայն հարակից տարածքում առկա է եղել կենցաղային աղբ:



Նկար 14. Աղբամանների կետ Այգեստան գյուղում



Նկար 15. Աղբամանների կետ Նոյեմբերյան քաղաքում

Մոնիթորինգի կողմից արձանագրվել են նաև բնակավայրերի բնակելի տարածքներում «պատահական» առաջացած չարտոնված/ոչ օրինական աղբանոցները, որոնք համարվել են այդպիսին, եթե չեն առաջացել աղբի կոնտեյներների հարակից տարածքում: Այդպիսի երկու աղբավայրեր բացահայտվել են Կոթի և Ոսկեպար բնակավայրերում (Նկար 16): Համաձայն մոնիթորինգի ղիտարկումների բոլոր դեպքերում էլ ամենայն հավանականությամբ այս աղբանոցներն առաջացել են, քանի որ հարակից տարածքում առկա չեն եղել աղբի կոնտեյներներ: Դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում մոնիթորինգը աղբատար մեքենաներ չեն նկատել:



Նկար 16. Արտոնված աղբավայրեր Նոյեմբերյան համայնքում. ձախից` Կոթի գյուղ, Ոսկեպար գյուղ

Նոյեմբերյան համայնքի կենտրոնացված աղբավայր: Նոյեմբերյանի քաղաքային աղբավայրը գտնվում է խոշորացված Նոյեմբերյան համայնքի տարածքում, այն տեղակայված է Նոյեմբերյանի քաղաքային գերեզմանոցի հարևանությամբ: Աղբավայրի տարածքի հատկացման վերաբերյալ առկա է ավագանու որոշում: Աղբավայր մոնիթորինգային այցի արդյունքում պարզվել է, որ թափոնների պոլիգոնը ցանկապատված չէ, չունի կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, աղբատար փոխադրամիջոցների թափերը և անվադողերը չեն լվացվում և ախտահանվում յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո: Աղբավայրի տարածքում եղել են թափառող կենդանիներ: Այցելության ընթացքում արձանագրվել է, որ աղբավայրում իրականացվել է սպառման թափոնների այրում:



Նկար 17. Նոյեմբերյանի կենտրոնացված աղբավայրը

Աղբավայրը տեղակայված է բնապահպանական առումով զգայուն տարածքում՝ անտառային տարածքում (Նկար 17):

Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթեթը՝ Նոյեմբերյան համայնքի համար՝

Նորմատիվների պահանջներ	Արդյունք	Միավոր
Չի համապատասխանում-0 միավոր Մասամբ է համապատասխանում – 1 միավոր Լիովին համապատասխանում է – 2 միավոր		
Աղբի կոնտեյներներ		
Աղբամանները տեղադրված են պատվանդանի վրա (բետոնե, երկաթյա)	Մասամբ	1
Աղբամանի/աղբամանների շուրջ երեք կողմից պատնեշի/ցանկապատի առկայություն	Մասամբ	1
Աղբամանը տեղադրված չեն մայթի, սիգամարգերի վրա կամ փողոցի երթևեկելի հատվածում	Մասամբ	1
Պահպանված է մոտակա բնակելի տնից/շենքից աղբամանների կետի նվազագույն հեռավորությունը	Այո	2
Կոնտեյներների վրա առկա էին աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ ցանկացած այլ կոնտակտային տվյալ	Ոչ	0
Ընդհանուր առմամբ լցված էր աղբամանների 2/3-ից ոչ ավելին	Մասամբ	1
Աղբի կոնտեյներների հարակից տարածքը եղել է մաքուր	Այո	2
Աղբատար մեքենա		
Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս կամ այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ	-	-
Աղբատար մեքենայի թափքից առկա չէ աղբաջրերի բացթողնում	-	-
Աղբատար մեքենայի վրա առկա էր աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ:	-	-
Աղբահանություն իրականացնող աշխատակիցները կրում էին արտահագուստ և սանիտարական ձեռնոցներ	-	-
Կենտրոնացված աղբավայր		
Աղբավայրը ցանկապատված է	Ոչ	0

Գլուխ 3: Աղբահանության ոլորտում հանրային ծառայությունների մատուցման համեմատական վերլուծություն

3.1 Խոշորացված համայնքների միջեվ համեմատությունը ըստ աղբահանության ոլորտում համայնքների տեխնիկական ապահովվածության

Ի տարբերություն Լոռվա և Տավուշի մարզի համայնքների՝ Շիրակի մարզի համայնքներն ունեն առավել սակավաթիվ մասնագիտացված աղբահանության տեխնիկա: Աղբահանության համար ի սկզբանե նախատեսված տեխնիկա չունի Ախուրյան համայնքը. այստեղ աղբահանության նպատակով օգտագործում են առանց կողային բարձման ինքնաթափ մեքենաներ՝ 1988-1989 թթ արտադրության, իսկ Աշոցք համայնքն ունի միայն մեկ աղբատար մեքենա: Առավել մեծ թվով միավոր տեխնիկա ունեն Ստեփանավան և Դիլիջան համայնքները (Աղյուսակ 3.1.1):

Խոշորացված համայնք	Առկա տեխնիկա
Ախուրյան	Համայնքն ունի առանց կողային բարձման ինքնաթափ 2 մեքենաներ (ԴԱՅ)՝ 1988թ և 1989 թվականների արտադրության
Աշոցք	Համայնքն ունի կողային բարձմամբ մեկ աղբատար մեքենա՝ 2017 թվականի արտադրության
Թումանյան	Համայնքն ունի 2017 թվականի արտադրության կողային բարձմամբ մեկ աղբատար մեքենա և 2008թ. արտադրության ՄԿԶ- ՉԻԼ, 43362 մեկ մեքենա
Ստեփանավան	Համայնքն ունի կողային բարձմամբ 2 աղբատար մեքենա, առանց կողային բարձման 2 ինքնաթափ մեքենա՝ բոլորն էլ 1990թ. արտադրության, աղբահանություն իրականացմանը հարմարեցված կցորդով տրակտոր՝ 1982թ. արտադրության և 2006թ. արտադրության «Ռենո» տիպի երկֆունկցիոնալ աղբատար 1 մեքենա 12մ ³ տարողությամբ
Դիլիջան	Համայնքն ունի կողային բարձմամբ 4 աղբատար մեքենա, որոնցից երկուսը՝ 2012թ. արտադրության, մյուս երկուսը՝ 2016թ.-ի: Համայնքն ունի նաև առանց կողային բարձման 5 ինքնաթափ, որոնցից մեկը՝ 1980թ. արտադրության, մեկը՝ 2012թ., իսկ մյուս երեքը՝ 2016թ., ինչպես նաև աղբահանություն իրականացնող 2 TERREX ամբարձիչ էքսկավատոր՝ երկուսն էլ 2016թ. արտադրության
Նոյեմբերյան	Համայնքն ունի կողային բարձմամբ մեկ աղբատար մեքենա՝ 2007թ. արտադրության, առանց կողային բարձման 2 ինքնաթափ մեքենա՝ 1989 և 1990թ. արտադրության:

Աղյուսակ 3.1.1 Աղբահանության տեխնիկայի առկայությունը խոշորացված համայնքներում

1000 բնակչի հաշվով բաժին հասնող աղբարկղերի թիվը առավել բարձր է Թումանյան և Դիլիջան համայնքներում՝ կազմելով համապատասխանաբար 18,17 և 18,9 միավոր աղբաման: Ստեփանավան և Նոյեմբերյան համայնքներում այս թիվը միջին է: Այստեղ 1000 բնակչին բաժին է հասնում համապատասխանաբար 8,82 և 9,35 միավոր աղբաման: Ինչ վերաբերում է Շիրակի մարզի համայնքներին՝ Ախուրյանին և Աշոցքին, ապա այստեղ աղբամանների թիվը նշանակալի փոքր է՝ կազմելով համապատասխանաբար 4,55 և 5,68 միավոր աղբաման 1000 բնակչի համար (Աղյուսակ 3.1.2):

Խոշորացված համայնք	Մշտական բնակչության թիվը	Համայնքի տարածքում առկա աղբարկղերի թիվը	1000 բնակչի հաշվով բաժին հասնող աղբարկղերի թիվը
Ախուրյան	17594	80	4,55
Աշոցք	7568	43	5,68
Թումանյան	4621	84	18,17
Ստեփանավան	20527	181	8,82
Դիլիջան	26591	503	18,9
Նոյեմբերյան	16576	155	9,35

Աղյուսակ 3.1.2 Աղբամանների առկայությունը խոշորացված համայնքներում

Եթե այս նույն ցուցանիշը ներկայացնենք աղբամանների գումարային տարողունակությունների միջոցով, ապա 1000 բնակչի հաշվով ամենաբարձր ցուցանիշը կարձանագրվի Թումանյան համայնքում, որտեղ 1000 բնակչի սպասարկման համար աղբարկղերի տարողունակությունը կազմում է 21,8 մ³: Մյուս բարձր ցուցանիշն արձանագրվել է Դիլիջան համայնքում՝ 12,3 մ³ (Աղյուսակ 3.1.3):

Խոշորացված համայնք	Մշտական բնակչության թիվը	Համայնքի տարածքում առկա աղբարկղերի գումարային տարողունակությունը	1000 բնակչի հաշվով բաժին հասնող աղբարկղերի տարողունակությունը
Ախուրյան	17594	60մ ³	3,41 մ ³
Աշոցք	7568	34,4մ ³	4,55 մ ³
Թումանյան	4621	100,8մ ³	21,8 մ ³
Ստեփանավան	20527	98,2մ ³	4,78 մ ³
Դիլիջան	26591	326,95մ ³	12,3 մ ³
Նոյեմբերյան	16576	91,2մ ³	5,5 մ ³

Աղյուսակ 3.1.3 Աղբամանների տարողունակությունը խոշորացված համայնքներում

Թումանյան և Դիլիջան համայնքներում կենտրոնացված աղբահանության ծառայություններով են ապահովված բոլոր բնակավայրերը: Ստեփանավան համայնքում կենտրոնացված աղբահանություն իրականացվում է միայն Ստեփանավան քաղաքում, սակայն եթե ներկայացնենք բնակչության թվով, ապա կարող ենք ասել, որ համայնքի բնակչության 93.2%-ն ապահովված է այս ծառայությունով: Նոյեմբերյանում այս ցուցանիշը 97% է, քանի որ աղբահանություն չի իրականացվում միայն մեկ բնակավայրում՝ Բարեկամավանում: Կենտրոնացված աղբահանությամբ ապահովված բնակչության մասնաբաժինը


նշանակալի ցածր է Շիրակի մարզի համայնքներում: Այս երկու համայնքներում աղբահանություն իրականացվում է միայն համայնքների կենտրոններում՝ Ախուրյան և Աշոցք գյուղերում, սակայն ի տարբերություն Աշոցք գյուղի, որտեղ բնակիչները հիմնականում զոհ են մատուցվող ծառայություններից, Ախուրյանում աղբահանությունը թերի է իրականացվում (Աղյուսակ 3.1.5):

Խոշորացված համայնք	Համայնքի մաս կազմող բնակավայրերի թիվը	Բնակավայրեր, որտեղ իրականացվում է կենտրոնացված աղբահանություն	Կենտրոնացված աղբահանությամբ ապահովված բնակչության մասնաբաժինը
Ախուրյան	8	1	53%
Աշոցք	11	1	38%
Թումանյան	7	7	100%
Ստեփանավան	3	1	93.2%
Դիլիջան	7	7	100%
Նոյեմբերյան	9	8	97%

Աղյուսակ 3.1.4 Կենտրոնացված աղբահանությամբ ապահովված բնակչության մասնաբաժինը խոշորացված համայնքներում

3.2 Խոշորացված համայնքների համեմատություն ըստ օբյեկտիվ եվ սուբյեկտիվ ցուցանիշների համադրության

Աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից բնակչության բավարարվածությունը գնահատվել է 1-ից 10 բալանոց սանդղալով, որտեղ 1-ը նշանակում է լիովին բացասական, 10-ը՝ լիովին դրական: Համաձայն գնահատման արդյունքների՝ աղբահանության ծառայություններից առավել բավարարված են Թումանյան և Նոյեմբերյան համայնքների բնակիչները: Ստեփանավան և Դիլիջան համայնքները այս ցուցանիշով ստացել են միջին մոտ միավորներ: Բնակչության բավարարվածությունն առավել ցածր է Ախուրյան և Աշոցք համայնքներում՝ կազմելով համապատասխանաբար 3.36 և 3.55 միավոր հնարավոր 10-ից (Գրաֆիկ 7):



Գրաֆիկ 19: Աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից բնակչության բավարարվածությունը


Աղբահանության ոլորտի գնահատման օբյեկտիվ ցուցանիշները դուրս են բերվել համադրելով երեք բաղադրիչներ՝ նորմատիվների պահպանում, որը գնահատվել է մոնիթորինգային այցերի միջոցով, 1000 բնակչին բաժին հասնող աղբարկղերի տարողունակությունը և կենտրոնացված աղբահանությամբ ապահովված բնակչության մասնաբաժինը:

Ըստ գնահատման արդյունքների, օբյեկտիվ ցուցանիշներով ամենաբարձր միավորներ են ստացել Թումանյան և Դիլիջան համայնքները՝ 9 միավոր, որին հետևում է Նոյեմբերյան համայնքը՝ 8 միավոր և Ստեփանավան համայնքը՝ 6 միավոր: Առավել ցածր միավորներ են ստացել Ախուրյան և Աշոցք համայնքները՝ 5-ական միավոր (Աղյուսակ 3.1.5):

Խոշորացված համայնք	Նորմատիվների պահպանում	1000 բնակչի հաշվով բաժին հասնող աղբարկղերի տարողունակության համար տրվող միավոր	Կենտրոնացված աղբահանությամբ ապահովված բնակչության մասնաբաժնի համար տրվող միավոր	Ընդամենը միավորներ
Տրված միավորներ	[0%-25%]-1 միավոր [25%-50%]-2 միավոր [50%-75%]-3 միավոր [75%-100%]-4 միավոր	[0-5մ ³]-1 միավոր [5մ ³ -10մ ³]-2 միավոր [105մ ³ և ավելի]-3 միավոր	Մինչև 50% -1 միավոր [50%-75%]-2 միավոր [75%-100%]-3 միավոր	Առավել միավորը՝ 10
Ախուրյան	2	1	2	5
Աշոցք	3	1	1	5
Թումանյան	3	3	3	9
Ստեփանավան	2	1	3	6
Դիլիջան	3	3	3	9
Նոյեմբերյան	3	2	3	8

Աղյուսակ 3.1.5. Աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների գնահատումը ըստ օբյեկտիվ ցուցանիշների

Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների միջև առավել մեծ շեղում կա Դիլիջան համայնքում, որտեղ բնակչության բավարարվածությունը աղբահանության ոլորտից նշանակալիորեն ցածր է, սակայն ընդհանուր առմամբ աղբահանության ոլորտում ծառայություններն առկա են և գնահատվել են դրական (Գրաֆիկ 8): Սա նշանակում է, որ բնակիչներն ունեն ավելի մեծ ակնկալիքներ համայնքապետարանից, ուստի անհրաժեշտ է առավել լավ ուսումնասիրել բնակիչների կարիքները և մատուցել առավել բարձր որակի և թիրախային ծառայություններ: Այս տարբերությունը մեծ է նաև Թումանյան համայնքում: Ախուրյան, Աշոցք, Նոյեմբերյան և Ստեփանավան համայնքներում օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների միջև տարբերությունը մեծ չէ:



Գրաֆիկ 20. Աղբահանության ոլորտի գնահատման օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների համադրումը


Գլուխ 4 Ֆինանսական հետազոտության արդյունքներն ըստ խոշորացված համայնքների

4.1 Շիրակի մարզի Ախուրյան և Աշոցք խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում

Ախուրյան համայնք

Ախուրյան համայնքի վարչատարածքային սահմանների փոփոխությունը եղել է 2017 թ-ի նոյեմբերին՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՀ ՀՕ – 93 - Ն օրենքով:¹⁵ Նոր կազմավորված համայնքն իր մեջ ներառել է նախկին Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Ջրառատ և Ախուրյան համայնքները: Նոր կազմավորված համայնքի կենտրոնը համարվում է Ախուրյան համայնքը: Նշենք, որ համայնքների բյուջեներն ըստ մեր դիտարկած ժամանակաշրջանի՝ 2014-2018թթ, ունեցել են հետևյալ մեծությունը՝

Գծապատկեր 1. Ախուրյան խոշորացված համայնքի և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների փաստացի բյուջեները 2014-2017թթ-ի և 2018թ պլանային ցուցանիշները/հազ դրամ¹⁶




¹⁵ <http://shirak.mtad.am/about-communities/582/>

¹⁶ 2018թ-ի համար վերցված են տվյալ տարվա համար պլանավորված ցուցանիշների 2018թ հոկտեմբերի 1-ի դրությամբ ճշտված ցուցանիշները: Ցուցանիշները վերցված են ՀՀՇՄ պաշտոնական կայք էջում տեղադրված բյուջեներից <http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/>

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից մինչև խոշորանալը Ախուրյան համայնքի բյուջեն ավելի մեծ է եղել, քան մյուս բոլոր յոթ համայնքներինը միասին՝ համապատասխանաբար 2014-2016թթ՝ 83,8%, 96%, 79%: Հարկ է նշել, որ մինչ խոշորացումը բոլոր համայնքների բյուջեների աճի դինամիկան եղել է դրական, բացառություն է կազմում 2015 թ-ը և 2018թ-ի պլանային ցուցանիշը: Նշենք, որ համաձայն Akhuryan.am կայքում տեղադրված 2018թ-ի բյուջեի ծախսային ցուցանիշների՝ մինչ 2018թ-ը աղբահանությունն իրականացրել է համայնքապետարանը, իսկ 2018 թ-ին նախատեսված է «Ախուրյանի Ջանգ» ՓԲԸ միջոցով իրականացնել աշխատանքները: Նշենք նաև, որ 2017թ-ի Ախուրյան խոշորացված համայնքի պլանավորված բյուջեն ևս մեծ է եղել, սակայն կատարվել է 82%-ով: Այստեղից կարող ենք ենթադրել, որ 2018 թ-ի պլանավորումը էապես շեղվում է համայնքում առկա կարիքների համար անհրաժեշտ միջոցներից՝ ուռճացված է և պարունակում է ռիսկեր:

Դիտարկենք համայնքներին պետական բյուջեից հատկացված դոտացիաների դինամիկան՝ հասկանալու բյուջեի աճի աղբյուրները:

Գծապատկեր 2. Ախուրյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից տրամադրվող դոտացիաները 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դրամ¹⁷



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 2016-18թթ-ին նախորդ տարիների համեմատ աճել են համայնքներին տրվող դոտացիաները՝ 2014 և 2015թթ-ին այն կազմել է համապատասխանաբար 26 և 28 մլն ՀՀ դրամ, 2016-2018թթ այ կազմել է 29 մլն ՀՀ դրամ: Աճը դինամիկ բնույթ է կրում: Հատկանշական է, որ 2016-18թթ-ին դոտացիայի գումարը չի աճել, ինչը նշանակում է, որ համայնքների միավորումը պետության կողմից լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություն չունի, մնչդեռ, միավորման հիմնադրամներից մեկը հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորությունն է: Ելնելով հետազոտության խնդիրներից՝

¹⁷ 2018թ-ի համար վերցված են տվյալ տարվա համար պլանավորված ցուցանիշների 2018թ հոկտեմբերի 1-ի դրությամբ ճշտված ցուցանիշները:
Ցուցանիշները վերցված են ՀՀՇՄ պաշտոնական կայք էջում տեղադրված բյուջեներից <http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/>

անդրադառնանք ծախսերին և ավելի մանրամասն դիտարկենք աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներին հատկացված ֆինանսական միջոցների բաշխվածությունը մինչ խոշորացումը և խոշորացումից հետո:

Նախ նշենք, թե յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեի քանի տոկոսն է հատկացվել աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացնելու համար:

Աղյուսակ 1. Ախուրյան խոշորացված համայնքի մեջ ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեի մեջ 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ.¹⁸


	Ախուրյան	Ջրառատ	Հովիտ	Կառնուտ	Կամո	Բասեն	Արևիկ	Այգաբաց
2014	3,3%	0,06%	0	0	0,05%	0	0,29%	0,06%
2015	3,5%	0	0,05%	0	0,03%	0	0,3%	0
2016	5,6%	0	0,1%	0,09%	0,06%	0	0,3%	0,09%
2017	5,4%	-	-	-	-	-	-	-
2018	14,5%	-	-	-	-	-	-	-

Աղբահանության ոլորտում համայնքային բյուջեից ավելի շատ միջոցներ հատկացվել են Ախուրյան համայնքում, ընդ որում խոշորացումից հետո այս ցուցանիշն աճել է, ինչը նշանակում է, որ նոր միավորված համայնքներում առկա խնդիրներին ևս ուշադրություն է դարձվել, կամ նոր համայնքների բյուջետային միջոցների հաշվին Ախուրյան համայնքում ավելի շատ խնդիրներ են լուծվելու:

Դիտարկենք բոլոր համայնքների բյուջեներից աղբահանության ոլորտում կատարված ծախսերի դինամիկան:

¹⁸ Աղյուսակում արտացոլված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Գծապատկեր 3. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքների աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ-ի համար պլանավորված ծախսերի դինամիկան/հազ դրամ¹⁹



Ինչպես տեսնում ենք, աղբահանության մշտական աշխատանքներ իրականացվել են նախկին Ախուրյան, Արնիկ, և Կամո համայնքում: Այգարաց, Հովիտ, Ջրառատ և Կառնուտ համայնքներում աղբահանության աշխատանքները դիսկրետ բնույթ են կրել: Բասեն համայնքում աղբահանության ծառայություններ ընդհանրապես չեն մատուցվել:

Ըստ համայնքներից ստացված տեղեկատվության՝ համայնքում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում, ըստ անհրաժեշտության գյուղապետարանը մեքենա է տրամադրում և աղբահեռացում է իրականացվում: Բացառություն են կազմում Արնիկ համայնքը՝ որտեղ կա 1 աղբարկղ, և Ախուրյան համայնքը, որտեղ 2014 թ-ին եղել են 32 մետաղական աղբամաններ, 2015թ-ից թիվը ավելացել է՝ 50 մետաղական և 30 պլաստիկ շէրի համար նախատեսված աղբամաններով: Ստացվում է, որ աղբահանության իրականացման համար կատարվում է ծախս՝ մեքենան անհայտ տեղից հավաքում է աղբը և տեղափոխում: Իսկ մինչև մեքենայի մոտենալը բնակավայրում տիրելու է հակասանիտարական պայմաններ:


Ինչպես տեսնում ենք միասնական բյուջեն 2014-2016թթ-ին աստիճանաբար աճել է, 2017 թ-ին արդեն միավորված համայնքների կտրվածքով նվազել է աղբահանության բյուջեն՝ շուրջ 13,8%, իսկ 2018 թ-ի պլանային բյուջեն կրկին բարձր ցուցանիշ է ցույց տալիս: Աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների համար հավաքագրվում է աղբահանության վճար, որի սահմանաչափը որոշում է տվյալ համայնքի ավագանին²⁰: Քննարկվող համայնքներում աղբահանության վճարներ չեն հավաքագրվել մինչև 2017թ-ը՝ խոշորացումը: 2017 թ-ին հավաքագրվել է 5 մլն 924 հազ ՀՀ դրամ եկամուտ, իսկ 2018 թ-ին պլանավորվում է հավաքագրել 10 մլն 624 հազ ՀՀ դրամ:

¹⁹ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>
²⁰ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենք» 2011թ հոդված 5,6 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69863>

Նկատենք, որ աղբահանության վճարների հավաքագրումը նպաստել է աղբահանության ոլորտում կատարվող ծախսերի ավելացմանը, ինչը դրական է գնահատվում: Համաձայն Ախուրյան համայնքի 2018թ-ի տարեկան աշխատանքային պլանի (այսուհետ՝ ՏԱՊ)²¹ համայնքում Աղբահանության համար ամսական գանձվող վճարը կազմում է 150 դրամ՝ մեկ բնակչի հաշվով, ինչը 50%-ով ավել է մարզկենտրոն Գյումրիում հավաքագրվող գումարից²¹:

Հարկ է նշել, որ բյուջեի ծախսերի ըստ տարիների ցուցանիշը թերի է բնութագրում համայնքներում աղբահանության որակը, ուստի դիտարկվել է նաև մեկ շնչին բաժին ընկնող աղբահանության ծախսերի ցուցանիշը: Դիտարկենք մեկ բնակչի հաշվով աղբահանության ծախսը՝ մինչև խոշորանալը և խոշորանալուց հետո՝ ըստ համայնքների:

Գծապատկեր4. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում աղբահանության ոլորտում մեկ բնակչի հաշվով ծախսերի դինամիկան 2014-2017թթ փաստացի և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դ²²



Գծապատկերը ցույց է տալիս, որ մինչև 2016 թ-ը մեկ բնակչի հաշվով կատարվող աղբահանության ծախսը դինամիկ աճել է. բացառություն է Ջրառատ և Բասեն համայնքները, որտեղ ընդհանրապես ծախս չի եղել: 2017 թ-ին մեկ բնակչի հաշվով ծախսն արդեն աճել է 8 համայնքի 18901 բնակիչների հաշվով: Տարբերություն է նկատվում նախկին Ախուրյան համայնքի բնակիչների համար՝ 2018 թ-ին պլանավորված և իննամսյա կտրվածքով ճշգրտված բյուջեով մեկ բնակչի հաշվով ծախսը 2,6 անգամ մեծ է 2017 թ-ի ծախսից, և 1,4 անգամ՝ 2016 թ-ի ծախսից:

Ինչպես արդեն նշվել է, համայնքապետարաններից ստացված և Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքում զետեղված ֆինանսական ցուցանիշների մեջ առկա են տարբերություններ, այդ պատճառով հետազոտության համար հիմք չի համարվել համայնքապետարանից

²¹ <http://shirak.mtad.am/files/docs/33169.pdf> Ախուրյանի 2018թ տարեկան աշխատանքային պլան, էջ 31

²² Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

ստացված տվյալները(Հավելված 1): Բայց այստեղ ներկայացված է 2017 թ-ին կատարված ոլորտային ծախսերն ըստ նախկին համայնքների, որոնք հաշվի են առնվել: Տոկոսային հարաբերակցությամբ դիտարկելիս նկատում ենք, որ ծախսերի 63,4%-ը կատարվել է Ախուրյան համայնքում, 7,9% Արևիկում, 2,2% Այգաբացում, 19,1% Կառնուտում, 2,8% Հովիտում, 4,6% Կամոյում: Բնակչության բաշխվածությունն ըստ համայնքների հետևյալն է՝ Ախուրյան 53%, Արևիկ 9,8%, Այգաբաց 4,5%, Կառնուտ՝ 6,5%, Հովիտ՝ 2,8%, Բասեն՝ 9,3%, Ջրառատ՝ 6,4%, Կամո 7,7%: Աղբահանության ծախսերը բնակչության թվին համապատասխան բաշխվածություն ունեցել է միայն Հովիտ համայնքում: Մյուս համայնքներում տարբեր է՝ Ախուրյանում և Կառնուտում ծախսերի տեսակարար կշիռն ավելի մեծ է եղել քան բնակչության տեսակարար կշիռն է:

Ուշագրավ է, որ ՏՄՊ-ով Ախուրյան բնակավայրում նախատեսված է աղբահանության իրականացում յուրաքանչյուր աշխատանքային օր, իսկ բնակավայրերում ամիսը մեկ անգամ²³: Ակնհայտ է, որ բնակավայրերում հավասարաչափ ծավալների աշխատանքներ չեն իրականացվում: Աղբահանության համար ծախսվող բյուջետային միջոցների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խոշորացման արդյունքում նոր ձևավորված Ախուրյան համայնքում ստեղծվել է հնարավորություն նախկին Ախուրյան համայնքից բացի, մյուս բոլոր բնակավայրերում նախկինից որակյալ աղբահանության ծառայություններ մատուցել, սակայն համայնքային իշխանությունները չեն շտապում հնարավորությունն օգտագործել ի նպաստ բոլոր բնակավայրերի:


Աշոցք համայնք

Աշոցք համայնքը կազմավորվել է 2016 թվականի հոկտեմբերին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՀՕ – 100 - Ն օրենքով: ²⁴ Աշոցք համայնքն իր մեջ ներառում է նախկին Աշոցք, Կարմրավան, Կրասար, Մեծ Մեպասար, Փոքր Մեպասար, Ղազանչի, Միզավետ, Թավշուտ, Բավրա, Սարագյուղ, Զույգաղբյուր համայնքները: Նոր կազմավորված համայնքի մեջ մտնող նախկին համայնքները ըստ տարբեր տարիների ունեցել են հետևյալ բյուջեները.

²³ <http://shirak.mtad.am/files/docs/33169.pdf> Ախուրյան ՏՄՊ 2018, էջ 30


²⁴ ՀՀ Շիրակի մարզպետարան <http://shirak.mtad.am/about-communities/590/>

Գծապատկեր 10. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող համայնքների 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված բյուջեները/հազ դ²⁵



2014-2018թթ ղինամիկայում ընդհանուր համայնքային բյուջեն աճել է, աճել են նաև նախկին համայնքների բյուջեները: Աճի պատճառները հասկանալու համար նախ դիտարկենք պետբյուջեից տրամադրվող դոտացիաների շարժը ըստ համայնքների:

Գծապատկեր 11. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող համայնքներին 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված դոտացիաների փոփոխությունը. / հազ դ²⁶




²⁵ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

²⁶ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Գծապատկեր 11-ից երևում է որ դոտացիաների հատկացման չափը դինամիկ աճել է մինչ 2016թ-ը, ինչով էլ հենց պայմանավորված է նույն ժամանակաշրջանում ընդհանուր բյուջեի աճը: 2016 թ-ի նոյեմբեր ամսին դոտացիաների հաշվարկում մեթոդաբանության փոփոխություն է եղել, որով էլ կարելի է պայմանավորել հաջորդիվ դինամիկայի փոփոխությունը: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ 2017 և 2018 թթ աճել են սեփական եկամուտները՝ համայնքների միավորումը նպաստել է եկամուտների հավթագրելիությանը:

Անդրադառնալով ոլորտային ծախսերին դիտարկենք դրանց տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեում:

Գծապատկեր 12. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող նախկին համայնքների կողմից աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի դինամիկան/հազ դ.՝
27




Ինչպես տեսնում ենք աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացվել են միայն Մեծ Մեպասար և Աշոցք համայնքներում: Գծապատկերն արտացոլում է, որ 2017 թ-ից կտրուկ աճել են աղբահանությանը հատկացվող ծախսերը: Համայնքային բյուջեից ըստ 2014-2018թթ Աշոցքի աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացնելու համար հատկացվել են համապատասխանաբար 3,97%, 3%, 1,6%, 2,9% և 2,8%: Իսկ Մեծ Մեպասարում 2014 թ-ին՝ 2,3% և 2015թ-ին՝ 3,4%: Ծախսերը բացարձակ արժեքով աճել են դինամիկայում, սակայն ընդհանուր բյուջեում տեսակարար կշիռը նվազել է: Սա նշանակում է, որ միավորվելուց հետո հնարավորություն է ստեղծվել ավելի շատ աշխատանքներ իրականացնել ոլորտում, սակայն ոլորտային խնդրի կարևորության աստիճանը նոր ձևավորված համայնքում նվազել է:

²⁷ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

2014-2017թթ կատարված բոլոր ծախսերը եղել են վարչական բյուջեից՝ ընթացիկ բնույթի ծախսեր: Միայն 2018 թ-ի պլանավորված 6 մլն-ից 4մլն-ը՝ 66,6%-ն է նախատեսված կապիտալ ծախսերի իրականացման համար: Ուշագրավն այն է, որ կապիտալ պլանավորված ծախսից բխող գործողություններ ներառված չեն Աշոցքի 2018թ ՏԱՊ-ում: Այստեղ աղբահանության ոլորտին վերաբերող ծրագրեր ընդհանրապես ներկայացված չեն: Սա նշանակում է որ այս ոլորտը համայնքում անտեսված է: Կարելի է ենթադրել, որ նախատեսված միջոցներով իրականացվում են առաջնային անհրաժեշտ աշխատանքները՝ համայնքը աղբադաշտի վերածվելուց փրկելու համար: Սրան գուցահեռ բնակչությունից հավաքագրվում է աղբահանության վճարներ, և 2018թ-ն առանձնանում է հավաքագրելիության բարձր մակարդակով՝ նախորդ տարիների համեմատ: 2018 թ-ին հավաքագրվել է 1,5 մլն ՀՀ դրամ, 2017 թ-ին՝ 67 հազ դրամ, իսկ նախորդող տարիներին հավաքագրում չի եղել:

Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերի դինամիկան դիտարկելիս նկատում ենք, որ մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերը նվազել են՝ չնայած ոլորտային ծախսերի բացարձակ թվի աճին: Սա պայմանավորված է նրանով որ խոշորացված համայնքի կազմում գտնվող համայնքների մեծ մասում նախկինում աղբահանույն ընդհանրապես չի եղել: Այստեղ ևս պետք է նշել որ հատկացվող միջոցների աճը դեռևս չի խոսում ոլորտի բարելավման մասին:

Գծապատկեր 13. Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերի դինամիկան Աշոցք խոշորացված համայնքում և նրա մեջ մտնող նախկին համայնքներում՝ 2014-2017թթ հավաքագրված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դ.՝²⁸



Ամփոփելով նշենք, որ համայնքում աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացվում են առանց նախնական վերլուծությունների ու պլանավորումների: Ֆինանսական միջոցների պլանավորման և օգտագործման այս եղանակը չի կարող ոլորտում ապահովել ցանկալի արդյունք, քանի որ ըստ հրատապության բնույթի աշխատանքների իրականացման ժամանակ ոլորտի հիմնական խնդիրները դուրս են մնում:

²⁸ Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից


4.2 Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում

Դիլիջան համայնք

Դիլիջան համայնքը վերաձևավորվել է 2015 թ-ի դեկտեմբերի 15-ին՝ «ՀՀ վարչատարածքային բաժանումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների պահանջով: Նոր խոշորացված համայնքում ընդգրկվել են նախկին Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղվնավանք և Խաչարձան համայնքները: Նոր խոշորացված համայնքն ունի 18,667 մարդ:²⁹

Դիտարկենք Դիլիջան խոշորացված համայնքի բյուջեն՝ մինչ խոշորանալը ըստ առանձին համայնքների ու խոշորանալուց հետո՝

Գծապատկեր 18. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների բյուջեների 2014-2017թթ-ի կատարված և 2018 թ-ի պլանային ցուցանիշներ/հազ դ.՝³⁰




Ինչպես դիտարկված մյուս համայնքներում Դիլիջանում ևս համայնքների միավորումից հետո նկատվում է միասնական բյուջեի աճ: Աճը կտրուկ նկատվում է 2018թ-ին. 2014-2018թթ ղինամիկայում համապատասխանաբար՝ 7,7%, 8,6%, 5% և 37%: Աճի պատճառները հասկանալու համար դիտարենք պետական դոտացիաների չափերն ըստ տարիների՝

Գծապատկեր 19. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին 2014-2017թթ տրամադրված և 2018թ պլանավորված դոտացիաները /հազ դ՝³¹

²⁹ <http://tavush.mtad.am/about-communities/697/>

³⁰ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>




Ինչպես տեսնում ենք պետբյուջեից տրամադրվող դոտացիաները դինամիկ աճել են՝ բացառությամբ 2018թ-ի: 2014-2018 թթ դինամիկայում՝ 12%, 5,7%, 4% և 2018թ-ին նվազել է 1,4%-ով: Ինչպես տեսնում ենք 2015-2016 թթ բյուջեի աճը մեծամասամբ պայմանավորված է դոտացիաների աճով: Հարկ է նշել, որ Դիլիջան համայնքում պետբյուջեից բացի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից դիտարկված ժամանակահատվածում տրամադրվել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ: 2014-2017թթ Դիլիջան համայնքին տրված սուբվենցիաներն ունեցել են հետևյալ դինամիկան՝ 5 մլն, 4 մլն, 14 մլն, 12 մլն և 10,5 մլն: 2014 թ-ին Դիլիջան համայնքից բացի սուբվենցիաներ ստացել են նաև Հաղարծինը՝ 6,7 մլն, Թեղուտը՝ 28 մլն, Աղվնավանքը՝ 4,8 հազ, Հովքը՝ 4,8 հազ դրամ՝ Իսկ 2015թ-ին Հաղարծինը՝ 8,8 մլն, Խաչարձան՝ 9 մլն, Աղվնավանքը՝ 5 մլն, Հովքը՝ 1,5 մլն, Գոշ՝ 16 մլն դրամ:

2015թ և 2016թ-ին համայնքները ստացել են նաև այլ դոտացիաներ: դոտացիաներ: 2015 թ-ին՝ Դիլիջանում 33 մլն, Հաղարծինում 2,8 մլն, Աղվնավանքում 298 հազ, Գոշում 387 հազ ՀՀ դրամ: Նկատում ենք, որ համեմատ դիտարկվող ժամանակաշրջանի 2015 թ-ին սուբվենցիաներ և այլ դոտացիաներ են տրամադրվել: Այստեղից եզրակացնում ենք, որ չնայած 2016-2018 թթ վերոնշյալ հոդվածներով եկամուտները կտրուկ նվազել են, սակայն համայնքային բյուջեն չի նվազել: Սա խոսում է համայնքների միավորումից հետո սեփական եկամուտների հավաքագրելիության աստիճանի մեծացման մասին:

Վերադառնալով հետազոտության խնդիրներին դիտարկենք աղբահանության ոլորտում կատարված ծախսերի դինամիկան՝

³¹ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Գծապատկեր 20. Դիվիզան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի դինամիկան/հազ դրամ³²



Ինչպես տեսնում ենք աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացվել են միայն Դիվիզան և Թեղուտ համայնքներում: Միավորումից հետո աղբահանության ծախսերը աճել են: Ոլորտին հատկացվող ծախսերը համայնքի բյուջեում 2014-2018թթ դինամիկայում համապատասխանաբար ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝ 32,5%, 13,5%, 9,9% 11% և 9,7%, իսկ Թեղուտում՝ 4% և 6,9%: Այստեղից պարզ է դառնում, որ խոշորացումից հետո աղբահանության ոլորտին պակաս ուշադրություն է դարձվել: Հասկանալու համար թե համայնքում ոլորտային ինչ աշխատանքներ են իրականացվել ոլորտային ծախսերը դիտարկենք ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի.

Աղյուսակ 7. Դիվիզան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017 թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ վարչական և ֆոնդային մասերի՝³³

		Դիվիզան	Աղավնա	Գոշ	Հովիտ	Թեղուտ	Խաչարձան	Հաղարծին
		վանք						
2014	Վարչ. %	40	0	0	0	100	0	0
	Ֆոնդ. %	60	0	0	0	0	0	0
	Ընդ/հազ դ	136237	0	0	0	1203,5	0	0
2015	Վարչ. %	92,5	0	0	0	100	0	0
	Ֆոնդ. %	7,5	0	0	0	0	0	0
	Ընդ/հազ դ	62951,3	0	0	0	1205	0	0
2018	Վարչ. %	93,5	-	-	-	-	-	-

³² Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

³³ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից


	Ֆոնդ. %	6,5	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	65540,6	-	-	-	-	-	-
2017	Վարչ. %	97,5	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	2,5	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	79142	-	-	-	-	-	-
2018	Վարչ. %	98,3	-	-	-	-	-	-
	Ֆոնդ. %	1,7	-	-	-	-	-	-
	Ընդ/հազ դ	92797	-	-	-	-	-	-

Աղյուսակից նկատում ենք, որ կապիտալ բնույթի ծախսերը դինամիկայում նվազել են: Կապիտալ ծախսերն ուղղված են եղել մեքենա սարքավորումների ձեռքբերմանը: Վարչական ծախսերի ավելացումը ևս պայմանավորված է եղել մեքենա սարքավորումների ընթացիկ պահպանման ծախսերով:³⁴

Համաձայն Դիլիջանի 2018թ ՏԱՊ-ի նախատեսվում է Դիլիջան բնակավայրում աղբահանություն իրականացնել շաբաթական 6 օր, իսկ մյուս բնակավայրերում շաբաթական երկու անգամ: Այստեղ նկատում ենք տարբերակված մոտեցում՝ նոր համայնքում ներառված բնակավայրերի նկատմամբ: Բիարկե դրական է այն, որ մի շարք համայնքներում մինչ խոշորացումն ընդհանրապես աշխատանքներ չեն իրականացվել այս ոլորտում, իսկ խոշորացումը բյուջեի միավորման և մեծացման արդյունքում նպաստել է այս համայնքներում աղբահանության աշխատանքների իրականացմանը, սակայն սա դեռ չի նշանակում որ շաբաթական երկու անգամ աղբահեռացումը համայնքում նորմալ է: Անգամ ոչ մեծ ծավալների հասնող աղբի չհեռացումը ամառային շրջանում հակասանիտարական և վտանգավոր է շրջակա միջավայրի համար:

Դիլիջանի 2018թ ՏԱՊ-ով նախատեսված է նաև սանիտարական մաքրման աշխատանքներ Դիլիջան, Թեղուտ և Հաղարծին համայնքներում:³⁵

Գծապատկեր 21. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ծախսը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ-ին/հազ դրամ.³⁶



³⁴ <http://www.dilijancity.am/Pages/NewBudget/Out/result.aspx>


³⁵ <http://tavush.mtad.am/tap/> Դիլիջան ՏԱՊ 2018, էջ 27

³⁶ Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Մեկ բնակչի հաշվով ծախսը խոշորացումից հետո նվազել է: Այստեղ ևս նկատվում է խոշորացման արդյունքում մի համայնքի միջոցների օգտագործումը՝ մյուս համայնքներում ծառայության մատուցումն ապահովելու նպատակով: Մակայն դինամիկան ցույց է տալիս որ այս ցուցանիշը յուրաքանչյուր հաջորդ տարին ավելի բարձր արդյունք է ապահովում: Ստացվում է որ ժամանակի ընթացքում խոշորացումը նպաստում է համաչափ զարգացմանը:

Դիտարկենք նաև աղբահանության վճարների հավաքագրելիության փոփոխությունն ըստ տարիների՝

Գծապատկեր 22. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում 2014-2017թթ հավաքագրված և 2018թ-ին պլանավորված աղբահանության վճարները/հազ դրամ³⁷




Աղբահանության վճարներ հավաքագրվել են Դիլիջան և Թեղուտ համայնքներում: Դինամիկայում վճարների հավաքագրելիության աստիճանը բարձրացել է:

Նոյեմբերյան համայնք

Նոյեմբերյան համայնքը վերաձևավորվել է 17.06.2016թ. ՀՕ-100-Ն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի պահանջով: Տավուշի մարզի խոշորացված Նոյեմբերյան համայնքում ընդգրկվել են Նոյեմբերյան, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեպար, Ոսկեվան և Ջուջան համայնքները: Մինչ ուսումնասիրվող ոլորտներին անդրադառնալը դիտարկենք ընդհանուր բյուջեն, պետբյուջեից հատկացվող դոտացիոն հատկացումները՝ հասկանալու միավորման հավանական ազդեցությունը բյուջեի ծավալների փոփոխման հարցում:


³⁷ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Գծապատկեր 27. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ-ի կատարված և 2018թ պլանավորված բյուջեները/հազ դ.³⁸



Համայնքների միավորումից հետո համայնքների միասնական բյուջեն 2016թ-ին նվազել է 15,4%-ով՝ 73,8 մլն ՀՀ դրամով, այնուհետև 2018 թ-ին պլանավորվել է 21% աճ, ինչը գերազանցում է մինչ խոշորացումը եղած բյուջեի ցուցանիշը: Դիտարկենք նաև պետբյուջեից հատկացվող դոտացիաների դինամիկան:

Գծապատկեր 28. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից 2014-2017թթ-ի հատկացված և 2018թ պլանավորված դոտացիաները/հազ դ³⁹



³⁸ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>


³⁹ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Ինչպես տեսնում ենք համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները չեն նվազել՝ անգամ ավելացել են: Սակայն եկամուտների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այս համայնքներում ստացել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ, որոնք ևս անհրաժեշտ է դիտարկել:

Նոյեմբերյան համայնքում ևս սուբվենցիոն հատկացումներ են եղել: 2014-2018 թթ դինամիկայում Նոյեմբերյան համայնքում սուբվենցիաները համապատասխանաբար եղել են հետևյալ ծավալների՝ 4մլն, 4,9մլն, 8,8մլն, 10,6 մլն և 7,7մլն: 2014 թ-ին Բարեկամավանում՝ 1 մլն, Բերդավանում 3 մլն, Կոթիում 153 հազ, Ոսկեպարում 23 հազ, Ոսկևանում 100 հազ և Ջուջևանում 28 հազ դրամ: 2015 թ-ին Բարեկամավանում 10 մլն, Բաղանիսում 9 մլն, Բերդավանում 7 մլն, Դովեղում 1,3 մլն, Կոթիում 9,7 մլն, Ոսկեպարում 6 մլն, Ոսկևանում 8 մլն և Ջուջևանում 7,6 մն դրամ: Նկատում ենք, որ 2015 թ-ին բոլոր համայնքներին տրամադրված սուբվենցիոն հատկացումները կտրուկ մեծ է եղել՝ 2014 թ-ի համեմատ աճել է 13,5%, իսկ 2016 թ-ին նվազել է մոտ 87%-ով՝ 55,8 մլն ՀՀ դրամով, ընդհանուր տարբեր տարիների համեմատ մոտ 7 անգամ ավել է եղել: Այն կազմել է 2015 թ-ի բյուջեի 13,5%-ը, իսկ 2016 թ-ի 2,1%-ը: Սրանով էլ կարելի է պայմանավորել 2015 թ-ի բյուջեի մեծությունը: Ուշագրավ է նաև այն, որ 2015 և 2016 թթ համայնքը ստացել է այլ դոտացիաներ, որոնք կազմել են բյուջեի համապատասխանաբար 7,5% և 7,8%-ը: 2015 թ-ին այլ դոտացիաներ ստացել են Նոյեմբերյանը 24,7 մլն, Դովեղը 3 մլն, Բերդավանը 1,9 մլն, Բարեկամավանը՝ 1,8 մլն, Ոսկևանը 1,5 մլն, Ոսկեպարը 1 մլն, Բաղանիսը՝ 560 հազ և Ջուջևանը՝ 400 հազ դրամ: 2016 թ-ին Նոյեմբերյանը ստացել է 31,5 մլն ՀՀ դրամի այլ դոտացիա: Այլ դոտացիաները 2017 թ-ից այլ դոտացիաներ չեն տրամադրվել, սակայն համայնքի բյուջեն աճել է, ինչը նշանակում է, որ 2017 թ-ից աճել է համայնքի սեփական եկամուտների հավաքագրելիությունը:

Դիտարկենք ոլորտային ծախսերը: Նշենք, որ Նոյեմբերյանում ևս համայնքապետարանից ստացված տվյալների և «Տարածքային կառավարման և զարգացման նախարարության» կայքում տեղադրված ֆինանսական ցուցանիշների մեջ առկա էր տարբերություններ, և հիմք ենք վերցրել նախարարության կայքում արտացոլված տվյալները: Աղբահանության ոլորտին հատկացված ծախսերը մինչ խոշորացումը նվազել են, իսկ խոշորացումից հետո աճել:

Գծապատկեր 29. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018 թ-ին պլանավորված ծախսերը /հազ դ⁴⁰



Գծապատկերից երևում է որ 2015 թ-ին աղբահանության ոլորտում իրականացվող ծախսերը նվազել են, սակայն 2016 թ-ից դինամիկ աճ է գրանցվել: Համայնքային բյուջեում ունեցած տեսակարար կշիռը հետևյալն է՝

Աղյուսակ 10. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018 թ-ին պլանավորված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեում.⁴¹

	Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2014	20%	0.03%	3.2%	1.4%	2.7%	3%	0.06%	2.2%	0.06%
2015	14%	0.02%	1.6%	0.9%	2.8%	2.3%	0.04%	1.8%	0.03%
2016	7.5%	-	-	-	-	-	-	-	-
2017	10.7%	-	-	-	-	-	-	-	-
2018	12%	-	-	-	-	-	-	-	-


Տարբեր համայնքների ընդհանուր բյուջեում աղբահանության ծախսերի կշիռների էական շեղումը հստակ թույլ է տալիս ենթադրել, որ աղբահանության մակարդակը համայնքներում էապես տարբերվել է:

⁴⁰ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

⁴¹ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Ինչպես ոլորտի ծախսերը բացարձակ արժեքով այնպես էլ դրանց տեսակարար կշիռը համայնքային բյուջեում նվազել է մինչ 2016 թ-ը, և 2017 թ-ից (խոշորացումից հետո) կրկին աճել է: Ոլորտային ծախսերն ամբողջությամբ եղել են վարչական բնույթի:

Գծապատկեր 30. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ-ին



Այս ցուցանիշն ունեցել է նույն դինամիկան ինչ աղբահանության ոլորտում կատարված ծախսերը: Միավորումից հետո այն նվազել է, սակայն 2016-2018թթ դինամիկայում աճել՝ չգերազանցելով մինչ խոշորացումը եղած ցուցանիշը: Համայնքապետարանից ստացված տվյալներից ելնելով կարող ենք ներկայացնել թե աղբահանության ոլորտի ծախսերը 2016թ և 2017թ ըստ բնակավայրերի ինչպես է բաշխվել: Համայնքապետարանի կողմից ծախսերը ներկայացվել է ըստ բնակավայրերի, իսկ ՏԿԶՆ կայքում տեղադրված բյուջեում ծախսը ներկայացված է միասնական համայնքի համար: Քանի որ բացարձակ ցուցանիշների միջև կար տարբերություններ հնարավոր սխալներից խուսափելու նպատակով ըստ բնակավայրերի ծախսը կներկայացնենք տոկոսային հարաբերությամբ՝

Աղյուսակ 11. Նոյեմբերյան խոշորացված համայնքի վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2016-2017թթ կատարված և 2018 թ-ին պլանավորված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր աղբահանությանն ուղղված ծախսերի մեջ և բնակչության տեսակարար կշիռներն ըստ համայնքների.⁴²


		Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկնան	Զուջնան
2016	Ֆինմիջոց.	86%	0,02%	2,3%	2,6%	1,2%	4,8%	0,04%	2,3%	0,4%
	Բնակչույթ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7%
2017	Ֆինմիջոց.	5,5%	4,6%	15,6%	0,25%	17%	0,05%	32%	9,5%	15,5%
	Բնակչույթ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7%
2018	Ֆինմիջոց.	7%	8%	37,6%	0,15%	0,03%	0,06%	0,1%	14,5%	32,5%
	Բնակչույթ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7%

⁴² Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Հետաքրքիր պատկեր է ստացվում: Արձանագրենք, որ խոշորացումից հետո ծախսերի կենտրոնացում չի եղել համայնքի կենտրոն Նոյեմբերյանում, սակայն ըստ համայնքներում եղած բնակչության տեսակարար կշռի էլ չի բաշխվել միջոցները: Բյուջեի ծախսերի տարանջատումն ըստ բնակավայրերի խոսում է այն մասին, որ համայնքում դեռ չի կիրառվում միասնականության սկզբունքը:

Մեր կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզել ենք, որ բնակիչները ընդհանուր առմամբ գոհ են աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից: Բացի Բարեկամավան և Ջուջևան բնակավայրից, մյուս բոլոր բնակավայրերի դեպքում տրվել են միջինից բարձր գնահատաններ՝ ինչին էլ ուղղված աշխատանքներ են իրականացվել: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է 6,7 միավոր հնարավոր 10-ից:⁴³

Գծապատկեր 31. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ծառայության համար բնակիչներից 2014-2017թթ հավաքագրված և 2018թ պլանավորված վճարները/հազ դ ⁴⁴



Աղբահանության վճարներ հավաքագրվել է միայն Նոյեմբերյան համայնքից: Խոշորացումից հետո հավաքագրելիության մակարդակն աճել է՝ 2017 թ-ին 34% իսկ 2018թ-ին 83%⁴⁵: Համաձայն Նոյեմբերյանի 2018 թ-ի ՏԱՊ-ի մեկ բնակչի հաշվով հավաքագրվում է 100 ՀՀ դրամ:⁴⁶ Այստեղից եզրակացնում ենք, որ մինչ խոշորացումը Նոյեմբերյանի մեջ մտնող մյուս համայնքներում աղբահանության վճարներ չեն հավաքագրվել, և միավորումը նպաստել է այս համայնքներում աղբահանության դիմաց վճարելու մշակույթի ստեղծմանը:

⁴³ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» Աղբահանության զեկույց, էջ 29 գրաֆիկ18

⁴⁴ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

⁴⁵ Նախորդ տարվա համեմատ


⁴⁶ <http://tavush.mtad.am/tap/>, Նոյեմբերյան 2018 թ ՏԱՊ, էջ 41, ծրագիր 1, էլքային ցուցանիշներ կետ 3

4.3 Լոռու մարզի Ստեփանավան և Թումանյան խոշորացված համայնքներում 2014-2018 թթ համար իրականացված ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում

Ստեփանավան համայնք

Ստեփանավան համայնքը վերակազմավորվել է 2017 թ-ի հունիս ամսին՝ «ՏԻՄ օրենք»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումով:⁴⁷ Նոր ձևավորված համայնքն իր մեջ ներառում է նախկին Ստեփանավան, Ուրասար և Կաթնաղբյուր համայնքները: Նոր ձևավորված համայնքում բյուջեն շարունակել է փոքր աճ գրանցել՝ 2014-2018թթ-ին համապատասխանաբար 6,5%, 2%, 9,8% և 8%:

Գծապատկեր 35. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ փաստացի և 2018թ-ի պլանավորված բյուջեները /հազ դ⁴⁸




Աճի ուղղությունը և պետական հոգածության միտումները հասկանալու համար դիտարկենք դոտացիաների դինամիկան ընտրված ժամանակաշրջանում:

⁴⁷ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5834&lang=arm>

⁴⁸ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>


Գծապատկեր 36. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից 2014-2017թթ տրամադրված և 2018 թ-ին պլանավորված դոտացիաները/ հազ դ ⁴⁹



2015 թ-ին 2%-ով աճել է դոտացիաների չափը, 2016 թ-ին 0,2%-ով նվազել է, 2017 թ-ին 0,9%-ով աճել է, իսկ 2018 թ-ին 0,09% պակաս է պլանավորվել: Այս փոփոխությունները կարող են պայմանավորված լինել պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաների ընդհանուր բազայի տարբերությունով, և 2017 թ-ից կիրառվող նոր մեթոդաբանության հաշվարկով: Ստեփանավան համայնքում պետբյուջեից տրամադրվել են նաև նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ: Սուբվենցիաները տրամադրվել են միայն Ստեփանավան համայնքին, որը 2014-2018թթ դինամիկայում ունեցել է հետևյալ շարժը՝ 9,6մլն, 11,7 մլն, 11,7 մլն, 35,9 մլն և 10 մլն ՀՀ դրամ: Ցուցանիշը 2015թին 22% աճել է, 2016 թ-ին չի փոխվել, 2017 թ-ին 206% աճ է գրանցել և 2018 թ-ին անկում՝ 71%-ով: Հաշվի առնելով այս փոփոխությունները կարող ենք ասել, որ սեփական եկամուտները դինամիկ աճ են գրանցել: Վերադառնալով հետազոտության խնդիրներին դիտարկենք ոլորտային ծախսերը:

⁴⁹ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Գծապատկեր 37. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտին հատկացվող ծախսերը 2014-2018թթ/հազ դ⁵⁰



Աղբահանության ծախսեր մինչ համայնքների միավորումը կատարվել են միայն Ստեփանավան համայնքում: Բացարձակ ցուցանիշով ոլորտին հատկացվող ծախսերն աճել են 1,7%-12%: Ոլորտային ծախսերը մինչ միավորումը եղել են ընթացիկ ծախսեր, իսկ միավորումից հետո եղել են նաև կապիտալ բնույթի ծախսեր: 2017 թ-ին ոլորտում 98,1%-ով ստեղծվել են կապիտալ ծախսերով պայմանավորված արժեքներ: Ոլորտային ծախսերի կշիռը համայնքային բյուջեում ունեցել է հետևյալ դինամիկան՝ 15%, 14%, 14,9%, 12,8%, 13%, միավորումից հետո նվազել է:


⁵⁰ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

Աղյուսակ 17.Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտին 2014-2017թթ հատկացված և 2018թ-ին պլանավորված ծախսերը ըստ վարչական և ֆոնդային մասերի.⁵¹

		Ստեփանավան	Կաթնաղբյուր	Ուրասար
2014	Վարչ. %	100	0	0
	Ֆոնդ. %	0	0	0
	Ընդ/հազ դ	48555,7	0	0
2015	Վարչ. %	100	0	0
	Ֆոնդ. %	0	0	0
	Ընդ/հազ դ	48505	0	0
2016	Վարչ. %	100	0	0
	Ֆոնդ. %	0	0	0
	Ընդ/հազ դ	52460,1	0	0
2017	Վարչ. %	1,9	-	-
	Ֆոնդ. %	98,1	-	-
	Ընդ/հազ դ	53379,8	-	-
2018	Վարչ. %	87,5	-	-
	Ֆոնդ. %	12,5	-	-
	Ընդ/հազ դ	59879	-	-

Կապիտալ ծախսերի կազմն ու կառուցվածքը վերլուծելու համար համայնքապետարանից բավարար տեղեկատվություն չի տրամադրվել: Համաձայն Լոռու մարզպետարանի կայքում տեղադրված ՏԱՊ-ի 2018 թ-ին ընթացիկ ծախսերով իրականացվելու են աղբահեռացման աշխատանքներ շաբաթական հինգ անգամ՝ 342 աղբամաններով:

Գծապատկեր 38. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտին հատկացվող ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ /հազ դ⁵²



⁵¹ Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից


⁵² Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

Համայնքների միավորումից հետո 1 բնակչի հաշվով ծախսի նվազում է նկատվում՝ 2017թ-ին 7%, սակայն 2018 թ-ին ցուցանիշը 12,5 % ավել է պլանավորվել: Մինչ միավորումը և միավորումից հետո 1 բնակչի հաշվով կատարված ծախսն էական փոփոխության չի ենթարկվել Ստեփանավան համայնքի համար, սակայն Կաթնաղբյուր և Ուրասար համայնքներում էական և դրական փոփոխություն է նկատվում: Ստեփանավան համայնքում ցուցանիշի ոչ էական փոփոխությունը պայմանավորված է Կաթնաղբյուր և Ուրասար համայնքների բնակչության փոքր թվով, և բյուջեի դինամիկ աճով: Ցավոք Ստեփանավան համայնքից տեղեկատվություն չունենք թե միավորումից հետո ծախսերն ըստ բնակավայրերի ինչպիսի բաշխվածություն են ունեցել:

Թումանյան համայնք

Թումանյան համայնքը վերաձևավորվել է 2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն իր մեջ ներառելով նախկին Թումանյան, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Շամուտ, Քարինջ համայնքները: Միավորվելուց հետո ընդհանուր բնակչությունը կազմել է 4621 մարդ, իսկ տարածքը 30,8 քառ կմ:⁵³ Նոր ձևավորված համայնքում ընդհանուր բյուջեն սկսել է դինամիկ աճել: Գծապատկեր 49-ում ներկայացված է միավորված համայնքների բյուջեները մինչ խոշորացվելը և խոշորացվելուց հետո:

Գծապատկեր 43. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ կատարված և 2018թ-ին պլանավորված բյուջեները/հազ դ/⁵⁴




Ինչպես տեսնում ենք մինչ միավորվելը համայնքների բյուջեների գումարային ցուցանիշն ավելի մեծ է եղել քան միավորվելուց հետո: 2016 թ-ին կտրուկ անկում է նկատվում միասնական բյուջեում՝ մոտ 19%, և միայն 2018 թ-ի պլանային ցուցանիշով նոր աճ է նկատվում: Քանի որ 2016 թ-ին տեղի է ունեցել

⁵³ <http://lori.mtad.am/about-communities/466/>

⁵⁴ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

դոտացիաների տրամադրման հաշվարկի մեթոդաբանության փոփոխություն դիտարկենք նաև դոտացիաների դինամիկան նշված ժամանակահատվածում:

Գծապատկեր 42. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից տրամադրվող դոտացիաները 2014-2018թթ/հազ դ⁵⁵




Գծապատկերից երևում է, որ դոտացիաների մասով նվազում եղել է 2016 թ-ին՝ 5,4%, և 2017 թ-ին այն կրկին աճել է: Ստացվում է, որ նվազումը պայմանավորված է եղել դոտացիաներով: Սեփական եկամուտների հավաքագրելիության աճը նկատվում է 2017 և 2018թթ: Անդրադառնալով հետազոտության խնդիրներին դիտարկենք ուսումնասիրվող ոլորտներին հատկացվող ֆինանսական միջոցներին և կատարվող աշխատանքներին:

Նշենք, որ համայնքապետարանից ստացված՝ աղբահանության ոլորտին վերաբերող ցուցանիշները այս դեպքում ևս չէին համապատասխանում Լոռու մարզպետարանում և Տարածքային կառավարման նախարարության կայքում տեղադրված տվյալներին, ուստի որպես հիմք վերցրել ենք Տարածքային կառավարման նախարարության կայքէջում տեղադրված տվյալները:

⁵⁵ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-incomes/>

Գծապատկեր 43. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները 2014-2018թթ հազ. դրամ⁵⁶




Գծապատկերից նկատում ենք, որ աղբահանության ոլորտում ծախս՝ տրամաբանորեն նաև աշխատանքներ մինչ միավորումն իրականացվել է միայն Թումանյան համայնքում: Մարց համայնքում՝ 2014 և 2015թթ համապատասխանաբար 2300 ՀՀ դրամ և 5000 ՀՀ դրամ:

Չնայած ոլորտային ծախսերը բացարձակ թվով աճել են, բայց Թումանյան համայնքի բյուջեում 2014-2018թթ տեսակարար կշիռը նվազել է՝ համապատասխանաբար կազմելով 9%, 6,9%, 6,5%, 13% և 3,4%:

Միավորումից հետո ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները մեծացել են, ինչը ենթադրում է մեկ բնակչի հաշվով կատարված ծախսի ավելացում ևս, որն այլ հավասար պայմաններում նշնակում է տարբեր բնակավայրերի միջև գումարների բաշխում՝ ըստ բնակչության թվաքանակի:

Գծապատկեր 44. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017թթ պլանավորված և 2018թ-ին կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով/հազ դ.՝⁵⁷



Մեկ բնակչի հաշվով ծախսերը 2016 թ-ին նվազել են նախորդ տարիների համեմատ, էական անկումը պահմանավորված է նրանով, որ այն համայնքներում որտեղ եղել են ծախսեր, այդ ծախսերը հարաբերել ենք այն բոլոր խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերի բնակիչների թվաքանակին(այդ թվում և այն

⁵⁶ Տարածքային կառավարման և նախարարության կայքում տեղադրված համայնքների տարեկան բյուջեների հաշվետվություններ <http://mtad.am/hy/budgetary-expenditure/>

⁵⁷ Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվվել են հեղինակի կողմից

բնակավայրերի, որտեղ նախկինում ծախս չի եղել): 2016 թ-ի համեմատ 2017 թ-ին 153% մեծացել է, իսկ 2018 թ-ին 2017թ-ի համեմատ 67% քիչ է պլանավորվել՝ դինամիկայում գրանցելով ամենացածր ցուցանիշը: Տարածքային կառավարման նախարարության կայքում արտացոլված տվյալներից պարզ է դառնում, որ 2014-2018 թթ կատարված աշխատանքներն ամբողջությամբ եղել են վարչական բնույթի ընթացիկ ծախսեր: Հարկ է նաև նշել, որ համայնքապետարանից ստացված տվյալների համաձայն ոլորտային ծախսերի 70%-ից ավելին եղել են աշխատավարձեր:

Հարկ է նշել, որ համաձայն մեր կողմից իրականացված սոցիալական արդյունքների Թումանյան բնակավայրում աղբամաններ չկան, աղբը հեռացվում է շրջիկ մեքենայի միջոցով: Շրջիկ մեքենայով աղբահեռացման մասին նշել են նաև Լորուտ և Քարինջ բնակավայրերում:⁵⁸ Պարզ է դառնում, որ համայնքի ունեցած 2 աղբատար մեքենայի դեպքում ֆինանսական միջոցներն ընթացիկ ծախսվում են աշխատավարձի և մեքենայի վառելիքի տեսքով:⁵⁹ Աղբամանների տեղադրումը կարող է բարելավել աղբահանության որակը՝ ստեղծելով սանիտարահիգիենիկ պայմաններ:

Տվյալներ կարողացել ենք վերցնել նաև Թումանյան համայնքի 2018 թ ՏԱՊ-ից: Համաձայն ՏԱՊ-ի Թումանյան համայնքում նախատեսվում է սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնել՝ Թումանյան բնակավայրում ամսեկան 8 անգամ, մյուս բնակավայրերում ամսեկան 3 անգամ երկու աշխատակիցներով:⁶⁰

Համաձայն ՏԱՊ-ի նախատեսվում է նաև աղբահանության իրականացման դիմաց վճարներ գանձել՝ 100 դրամ: Բյուջեով նախատեսված հավաքագրվող գումարի չափը կազմում է 3,431 հազ դրամ: Նշենք, որ նախորդ տարիներին աղբահանության վճարներ չեն գանձվել: Ուշագրավ է, որ ՏԱՊ-ում 2018 թ-ի ընթացքում աղբահանության աշխատանքների համար համայնքային բյուջեից նախատեսված է 17 մլն ՀՀ դրամ,⁶¹ որը մոտավորապես համընկնում է այն ցուցանիշին ինչ համայնքապետարանից մեզ ներկայացվել է: Այստեղ մասնագիտական թերացման խնդիր է նկատվում, որի պատճառով ծախսը համապատասխան հոդվածներում չի ներկայացվում և տարբեր աղբյուրներում տարբեր ցուցանիշների ենք հանդիպում:

⁵⁸ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Աղբահանության զեկույց էջ 48

⁵⁹ <http://lori.mtad.am/files/docs/32978.pdf> ՏԱՊ 2018 էջ 22

⁶⁰ <http://lori.mtad.am/files/docs/32978.pdf> էջ 23

⁶¹ <http://lori.mtad.am/files/docs/32978.pdf> էջ 8

Եզրահանգումներ

Մոնիթորինգի արդյունքում իրականացված եզրահանգումներ

- 1) Շիրակի մարզի խոշորացված համայնքները չունեն աղբահանության ոլորտում բավարար տեխնիկական հնարավորություններ խոշորացված համայնքի ամբողջ տարածքում աղբահանություն իրականացնելու համար. սակավաթիվ են ոչ միայն համայնքների սեփականություն հանդիսացող աղբամանները, այլև աղբատար մեքենաները:
- 2) Այն բնակավայրերում, որտեղ համայնքի կողմից չի իրականացվում կենտրոնացված աղբահանություն, բնակիչներն աղբը հեռացնում են ինքնուրույն, այդ թվում՝ առավել տարածված են աղբի այրման, սեփական միջոցներով աղբավայր տեղափոխման, ջրատար առուների կամ գետերի մեջ նետման, անհատական աղբավայրերում աղբի թափման աղբի՝ հողի մեջ թաղման պրակտիկաները:
- 3) Թեև Նոյեմբերյանի և Դիլիջանի որոշ բնակավայրերում համայնքի կողմից իրականացվում է կենտրոնացված աղբահանություն, համայնքի բնակիչների մի մասը աղբը կուտակում և հեռացնում է ինքնուրույն:
- 4) Համայնքի սեփականություն հանդիսացող աղբամանների թվի բաշխումը բնակավայրերի միջև որոշ դեպքերում համամասնական չէ բնակավայրի մեծությանը և բնաչության թվին (Լորուտ, Գոշ): Հիմնականում այսպիսի բնակավայրերում աղբահանության ոլորտից բնակչության բավարարվածության մակարդակը ցածր է:
- 5) Հիմնականում չեն պահպանվում աղբահանության ոլորտում գործող նորմատիվային պահանջները. տեղադրված աղբամանները հողից մեկուսացված չեն, 3 կողմից ցանկապատված չեն:
- 6) Աղբամանների և աղբատար մեքենաների վրա առկա չեն աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանունը և կոնտակտային տվյալները, ինչը օրենսդրական պահանջ է:
- 7) Խոշորացված համայնքները սպասարկող կենտրոնացված աղբավայրերից ոչ մեկը ցանկապատված չէ, չունի աղբատար մեքենաների սանիտարական մաքրման և լվացման հարմարություններ:

Ֆինանսական վերլուծության արդյունքում արված եզրահանգումներ

- 8) Համայնքային բյուջեները միավորումից հետո աճել են՝ սա հիմնականում հիմնականում պայմանավորված է եղել սեփական եկամուտների աճով:
- 9) Գրեթե բոլոր համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում կատարված ծախսերի դինամիկան աճել է, սակայն բյուջեում դրանց տեսակարար կշիռը նվազել է:
- 10) Գրեթե բոլոր միավորված համայնքներում վերջին երկու տարում ավելացել են կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, որը դրական ցուցանիշ է և խոսում է համայնքներում նյութական արժեքների ստեղծման մասին: Սակայն, մեր կողմից կատարված

ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ խոշորացված ոչ մի համայնքում կապիտալ ծախսերը չեն բխում տվյալ համայնքի զարգացման զարգացման ծրագրից, ավելին՝ ոչ մի համայնքում չկա կապիտալ ծախսերի գերակայությունների կամ կապիտալ ծախսերի՝ ըստ համայնքների բաշխվածության պլաններ:

- 11) Ուսումնասիրելով միավորված համայնքներում ոլորտի ծախսերը՝ նկատում ենք, որ նախկինում ծախսեր հիմնականում կատարվել են մեկ երկու համայնքներում, որոնք ներկայումս համընկում են միավորված համայնքերի կենտրոնների հետ: Կարելի է փաստել, որ միավորումից հետո ծախսերի բաշխվածությունն ավելացել է հոգուտ փոքր համայնքների, սակայն այստեղ հնարավոր չէ միանշանակ եզրակացություն անել, քանի որ խոշորացված համայնքների կողմից ըստ միավորված համայնքների՝ ներկայիս բնակավայրերի, առանձին հաշվառում չկա: Դիտարկված 6 համայնքներում ըստ ոլորտի՝ 1 բնակչի հաշվով ծախսերի աճի 10 դեպք է գրանցվել և 8՝ նվազման:
- 12) Միավորված Թումանյան համայնքում աղբամանների տեղադրման և սպասարկման ծախսեր չեն նախատեսվել, Աշոցքում 2018 թվականին ՏԱՊ-ում աղբահանության աշխատանքներ չեն նշվել, Դիլիջանում (բացի համայնքի կենտրոն Դիլիջանից) աղբահեռացման ծախսերը նախատեսվել են շաբաթական երկու անգամ աղբահեռացում իրականացնելու համար: Սրանով փաստվում է, որ սանիտարահիգիենիկ պայմանները երկրորդական են համարվում, ինչով պայմանավորված աղբահանության որակի ապահովումն այս համայնքներում երկրորդային է դառնում:
- 13) Համայնքային բյուջեներում մինչ միավորումը և միավորումից հետո կան ծախսերի հիմնավորվածության և նպատակային լինելու խնդիրներ: Օրինակ, նախկին Կաթնաղբյուր համայնքում, որտեղ 2015 թ-ին եղել է կապիտալ բնույթի 4մլն ՀՀ դրամի ծախս սակայն հաջորդող տարում վարչական բնույթի որևէ ծախս չի կատարվում այդ հողվածի ուղղությամբ: Այստեղից կարելի ենթադրել, որ վերը նշված կապիտալ ծախսը ոչ նպատակային է կամ չհիմնավորված: Հարկ է նշել, որ ֆոնդային և վարչական ծախսերի միջև իրականացման հաջորդականությունից զատ նաև առկա է դրանց զարգացման ծրագրին համապատասխան լինելու խնդիրը:
- 14) Ծրագրի շրջանակում իրականացված հարցումների տվյալներից պարզ դարձավ, որ համայնքներում խնդրի կարևորության ցուցանիշները հիմնականում համահունչ չեն բյուջեով սահմանված ոլորտային ծախսերի կառուցվածքի հետ, սրանով փաստվում է, որ բյուջեների կազմման ժամանակ համայնքներում կարիքների գնահատում չի իրականացվում, այլ պարզապես կազմվում են իներցիոն բյուջեներ:
- 15) Քանի որ հետազոտության ընթացքում ուսումնասիրվող ոչ մի համայնքից ի պատասխան մեր տեղեկատվության հարցումների չի ստացվել օրենսդրական պահանջներին համապատասխան և պատշաճ պատասխաններ, անհրաժեշտություն կա իրականացնել վերապատրաստման դասընթացներ՝ պլանավորման, բյուջետային դասակարգումների և «Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի» պահանջների վերաբերյալ:
- 16) Ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ կան էական անճշտություններ համայնքապետարանների, մարզպետարանների կայքերում և Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքում արտացոլված տվյալների միջև:
- 17) Թումանյան և Նոյեմբերյան համայնքների կայքէջերի ծախսերի կատարողական բաժնում ծախսերը մասամբ են տարբերակվել ըստ գործառնական նշանակության: Համայնքների բյուջեների արխիվներ հնարավոր չէ գտնել (Նոյեմբերյան, Աշոցք, Ստեփանավան): Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել

կայքէջի պատշաճ գործարկմանը, քանի որ վերջինս համայնքի ֆինանսական թափանցիկության ապահովման թիվ մեկ գործիքն է:

- 18)** Ուսումնասիրվող ոլորտում որակի վերահսկողությանն ուղղված միջոցառումներ չեն գրանցվել: Այդ մասին է փաստում այն, որ 2018 թվականի ՏԱՊ-երում որակի վերահսկողության միջոցառումներ նախատեսված չեն, ինչպես նաև ոլորտներում բացահայտված խնդիրները: Առաջարկում ենք ՏԱՊ-ում ներառել որակի վերահսկման միջոցառումներ, ինչը կնպաստի մատուցված ծառայության երկարակետային և բյուջետային միջոցների օպտիմալ օգտագործմանը:
- 19)** Որպեսզի համայնքի կապիտալ ծախսերը բխեն համայնքի զարգացման ծրագրից և բնակավայրերի մեջ ապահովվի համաչափ զարգացում, անհրաժեշտ է, որ համայնքներն ունենան կապիտալ ծախսերի գերակայությունների և ըստ բնակավայրերի առաջնահերթություններով պայմանավորված բաշխվածության պլաններ:

Առաջարկություններ

Համայնքապետարաններին՝

- 1) Խոշորացված համայնքներում պետք է ապահովել այն նորմատիվային պահանջների կատարումը, որոնք չեն ենթադրում համայնքի կողմից մեծ ծախսերի ներդրում, ինչպես օրինակ՝ աղբի կոնտեյներների և աղբատար մեքենաների վրա ապահովել աղբահանություն իրականացող կազմակերպության անվանումը և կոնտակտային տվյալները, աղբամանները չտեղակայել փողոցի երթևեկելի հատվածում, մայթերի կամ սիզամարզերի վրա, աղբամանները տեղակայել բնակելի տներից նվազագույնը 15 մետր հեռավորության վրա, ապահովել աղբամանների՝ հողից մեկուսացումը երկաթյա թիթեղների կամ բետոնե շերտի միջոցով:
- 2) ՔՀԿ-ների և համայնքապետարանների համատեղ ջանքերով համայնքային ծառայողների համար անհրաժեշտ է ստեղծել նորմատիվային ուղեցույց, որը յուրաքանչյուր ոլորտի, այդ թվում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության վերաբերյալ կներառի քայլերի և օրինակելի իրավիճակի նկարագիր, որին պետք է ձգտի յուրաքանչյուր համայնքային ծառայող ու բնակիչ:
- 3) Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան համայնքներում կենտրոնացված աղբահանության սխեմայում ներառել ոչ միայն խոշորացված համայնքի կենտրոնները, այլ նաև մյուս բնակավայրերը:
- 4) Համայնքի սեփականություն հանդիսացող աղբամանները և աղբատար մեքենաները համայնքի մաս կազմող տարբեր բնակավայրերի համար բաշխել արդարացի՝ հնարավորություն տալով այդ ծառայություններից օգտվել նաև ծայրամասային գյուղական բնակավայրերին:
- 5) Առավել մեծ ուշադրություն է պետք դարձնել կենտրոնացված աղբավայրերին՝ հատկապես այն վայրերում, որտեղ աղբավայրերը տեղակայված են բնապահպանական առումով զգայուն ընկալիչների հարակից տարածքում:
- 6) Աղբահանության սխեմա կազմելիս կամ վերանայելիս անհրաժեշտ է նախևառաջ այդ մասին քննարկումներ ունենալ համայնքի բնակիչների հետ՝ պարզելու համար, թե վերջիններիս համար առավել հարմար իրականացնել աղբահանության իրականացման որ սխեման է առավել հարմար՝ աղբամանների միջոցով, թե շրջիկ աղբատար մեքենաների:
- 7) Նոր աղբամաններ տեղադրելիս բնակիչների հետ քննարկվել վերջիններիս նախընտրությունները՝ մասնավորապես տեղադրել փակվող կափարիչներով աղբամաններ թե ոչ:
- 8) Աղբամանների շրջակայքում տիրող գարշահոտությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել դեռատիզացիայի աշխատանքներ և դիա համար յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեից ֆինանսական միջոցներ հատկացնել:

Քաղաքականություն մշակողներին

- 9) Համայնքներին տրամադրել նորմատիվային ուղեցույցներ, որով սահմանված կլինեն համայնքի սեփականություն հանդիսացող աղբամանների առավել արդարացի և արդյունավետ բաշխման սկզբունքները համայնքի մաս կազմող տարբեր բնակավայրերի միջև՝ հաշվի առնելով բնակավայրի

մեծությունը, բնակիչների թիվը, տնային տնտեսությունների՝ միմյանցից եղած հեռավորությունը, ամսական կտրվածքով կուտակվող աղբի ծավալը և այլն:

- 10)** Բարձրացնել աղբահանության ոլորտում գործող նորմատիվային պահաջների վերաբերյալ համայնքի ղեկավարների և ծառայություն մատուցողների վերահսկման և իրազեկվածության մակարդակը:

Հավելված 1. Տնային տնտեսությունների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների հարցաթերթ⁶²

Հարցաթերթ N _

Լրանում է համապատասխան	Մարզ		Հարցազրույցի անստորագրողը	__/__/2018թ.	
	Խոշոր համայնք		Հարցազրույցի մեկնարկի ժամը	__: __	
	Բնակավայր		Հարցազրույցի ավարտի ժամը	__: __	
	Բնակավայրի տիպը	1. Քաղաք. 2. Գյուղ.		Հարցազրույց ավարտի կողմ	
		SS տեղադիրքը բնակավայրում		1. Կենտրոն 2. Ծայրամաս	
	SS տեղադիրքը փողոցում		1. Գլխավոր փողոց 2. Երկրորդական փողոց		

ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ՝ Բարև Ձեզ, իմ անունը _____ է: Ես ներկայացնում եմ «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՆԿ-ն, որը Շիրակի, Լոռվա և Տավուշի մարզի համայնքներում իրականացնում է «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» թեմայով հետազոտություն: Ձեր տնային տնտեսությունն, ի թիվս այլ 900-ի, պատահականության սկզբունքով ընտրվել է մասնակցելու այս ուսումնասիրությանը: Ձեր մասնակցությունն այս հետազոտությանը և Ձեր պատասխանները շատ կարևոր են մեզ համար, այդ իսկ պատճառով խնդրում ենք տրամադրել ժամանակ և լինել անկեղծ: Հարցազրույցը կոնֆիդենցիալ է: Ձեր անունը ոչ մի տեղ չի նշվելու: Հետազոտության արդյունքները ներկայացվելու են միայն ընդհանրացված տեսքով: Նախապես շնորհակալություն ենք հայտնում Ձեզ՝ ժամանակ տրամադրելու և անկեղծության համար:

Q0. Ասացեք, խնդրեմ, որքա՞ն է ժամանակ է, որ բնակվում եք այս համայնքում:

1. Մինչև մեկ տարի /ավարտել հարցազրույցը/
2. Մեկից մինչև հինգ տարի՝ [1-5]
3. Հինգից մինչև տաս տարի՝ [5-10]
4. Տաս տարի և ավելի՝ [10 և ավելի]

ԲԱԺԻՆ 2: ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Q8. Այժմ եկեք խոսենք Ձեր համայնքում իրականացվող աղբահանության աշխատանքների մասին: Կներկայացնեք, թե ինչպես եք հեռացնում Ձեր տնային տնտեսությունում կուտակված կենցաղային աղբը:

(ընտրել այնքան տարբերակ, որքան կնշվի)

1. Թափում ենք մոտակա աղբարկղերի մեջ
2. Հանձնում ենք շրջիկ աղբատար մեքենային
3. Աղբը այրում ենք
4. Ունենք տնային տնտեսությանը կից անհատական աղբավայր, որտեղ թափում ենք աղբը
5. Աղբը նետում ենք ցանկացած պատահական վայրում
6. Աղբը նետում ենք ջրատար առուների կամ գետի մեջ
7. Կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում ենք կենտրոնացված աղբավայր
8. Աղբը թաղում ենք հողի մեջ
9. Աղբը հեռացնում ենք աղբամուղերի միջոցով
10. Այլ տարբերակ (խնդրում ենք մանրամասնել) _____

Q9. Ասացեք խնդրեմ, արդյո՞ք Ձեր համայնքապետարանը Ձեր բնակավայրում իրականացնում է աղբահանություն:

1. Այո
2. Ոչ → Հարցազրույցը շարունակել Q18 հարցից

Q10. Ինչպե՞ս է համայնքապետարանն իրականացնում աղբահանությունը:

⁶² Հարցաթերթը բաղկացած է եղել երեք թեմատիկ բլոկներից՝ ներհամայնքային ճանապարհների սպասարկում, աղբահանության իրականացում և փողոցային լուսավորություն: Այս օրինակում ներկայացված է միայն աղբահանությանը վերաբերող բլոկը:

1. Առկա են աղբարկղեր, որտեղ կուտակվում է կենցաղային աղբը, այնուհետև հեռացվում աղբատար մեքենաներով
2. Առկա է աղբատար մեքենա, որը շրջում է փողոցներով և տներից հավաքում է աղբը → *Անցում հարց Q14*
3. Այլ տարբերակ (խնդրում ենք մանրամասնել) _____

Q11. Արդյո՞ք առկա աղբարկղերը բավարարում են Ձեր և Ձեր հարևանությանը գտնվող սնային տնտեսությունների կենցաղային աղբի սպասարկման համար:

1. Այո, աղբարկղերը բավարար քանակի են և տարողունակ
2. Ոչ, աղբարկղերը քիչ են և/կամ տարողունակ չեն

Q12. Արդյո՞ք աղբարկղերի տեղադիրքը հարմար է Ձեզ և Ձեր հարևանությանը գտնվող սնային տնտեսությունների սպասարկման համար:

1. Այո, տեղադրված են հարմար վայրում
2. Ոչ, տեղադրված են անհարմար վայրում
(*Ոչ պատասխանի դեպքում խնդրում ենք մասնավորեցնել, թե ինչն է անհարմար/եթե անհարմար տեղադիրքը կապված է հեռավորության հետ, նշել թե քանի մետր է կազմում աղբարկղերի և տան միջև եղած հեռավորությունը*)

Q13. Ինչպե՞ս կզնահատեք աղբամանների հարակից տարածքում առկա սանիտարական վիճակը:

1. Հարակից տարածքը միշտ մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված չէ
 2. Հարակից տարածքը հիմնականում մաքուր է, աղբարկղերից դուրս աղբ կուտակված է լինում շատ հազվադեպ
 3. Հարակից տարածքը հիմնականում մաքուր չէ, հարակից տարածքում ժամանակ առ ժամանակ կուտակված է լինում կենցաղային աղբ
 4. Հարակից տարածքը ընդհանրապես մաքուր չէ, աղբամանների հարակից տարածքում մշտապես առկա է կուտակված աղբ
99. Դ.Պ.

→Q14. Արդյո՞ք աղբատար մեքենաները բավարար հաճախությանը են իրականացնում աղբահանության աշխատանքները:

1. Ընդհանրապես բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են շատ հազվադեպ
 2. Ավելի շուտ բավարար չէ, աղբատար մեքենաները տարածք այցելում են երբեմն-երբեմն
 3. Ավելի շուտ բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են պարբերաբար
 4. Լիովին բավարար է, աղբատար մեքենաները տարածք այցելում են հաճախ
99. Դ.Պ.

Q15. Արդյո՞ք Դուք/Ձեր ընտանիքը վճարում է աղբահանության ծառայությունների համար:

1. Այո
2. Ոչ → *Անցում հարց Q17*

Q16. Արդյո՞ք աղբահանության ծառայությունների վճարը մատչելի է Ձեր ընտանիքի համար:

- | | | |
|---------------------------|-------------------------|----------|
| 1. Ընդհանրապես մատչելի չէ | 3. Ավելի շուտ մատչելի է | 99. Դ.Պ. |
| 2. Ավելի շուտ մատչելի չէ | 4. Լիովին մատչելի է | |

Q17. Եթե շփվում եք կամ երբևէ շփվել եք աղբահանություն իրականացնող աշխատակիցների հետ իրենց պարտականությունները կատարելիս, ինչպե՞ս կզնահատեիք նրանց վերաբերմունքը Ձեր հանդեպ:

- | | | |
|----------------------|-------------------------|----------|
| 1. Լիովին դրական | 3. Ավելի շուտ բացասական | 99. Դ.Պ. |
| 2. Ավելի շուտ դրական | 4. Լիովին բացասական | |

→Q18. Արդյո՞ք Ձեր բնակավայրում առկա են փողոցային աղբանոթներ:

1. Ոչ, առկա չեն
2. Առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում քիչ քանակությամբ
3. Առկա են միայն գլխավոր փողոցներում, հրապարակներում և այլ հանրային վայրերում բավարար քանակությամբ
4. Առկա են ամբողջ համայնքի տարածքում քիչ քանակությամբ

Q19. Այժմ ես կկարդամ աղբահանության ծառայության որակի հետ կապված մի շարք բնութագրիչներ և կխնդրեմ Ձեզ գնահատել Ձեր բավարարվածությունը, գնահատեք 1-ից 4 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես բավարարված չեք, 2-ը՝ ավելի շուտ բավարարված չեք, 3-ը՝ ավելի շուտ բավարարված եք, 4-ը՝ լիովին բավարարված եք (հարցազրուցավարին՝ նշեք 0 կողմ էթե ծառայությունն առհասարակ բացակայում է):

N	Բնութագրիչներ	Գլխավոր ճանապարհներ					Դ.Պ.
0 - ծառայությունն առհասարակ բացակայում է1. ընդհանրապես բավարարված չեք2. ավելի շուտ բավարարված չեք 3. ավելի շուտ բավարարված եք4. լիովին բավարարված եք99. Դժվարանում է պատասխանել							
1.	Աղբահանության իրականացման հաճախություն	0	1	2	3	4	99
2.	Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	0	1	2	3	4	99
3.	Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	0	1	2	3	4	99
4.	Աղբարկղերի հարակից տարածքի մաքրություն	0	1	2	3	4	99
5.	Աղբարկղերի հարակից տարածքում տհաճ հոտերի բացակայություն	0	1	2	3	4	99
6.	Աղբարկղերի հարակից տարածքում թափառող շների, կատուների բացակայություն	0	1	2	3	4	99
7.	Աղբանոթների առկայություն	0	1	2	3	4	99
8.	Աղբանոթների մաքրման հաճախություն	0	1	2	3	4	99

Q20. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից Ձեր բավարարվածությունը: Գնահատեք 1-ից 10 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես բավարարված չեք, 10-ը՝ լիովին բավարարված եք:

1	2	3	4	5	6	7	8	9	10	99. Դ. Պ.
---	---	---	---	---	---	---	---	---	----	-----------

Q21. Ի՞նչ կառաջարկեիք համայնքապետարանին ուղղված աղբահանության ծառայության որակի բարելավմանը

ԲԱԺԻՆ 4: ՍՈՑԻԱԼ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

D1. Նշեք Ձեր տարիքը՝ _____

D2. Հարցվողի սեռը՝ 1. Արական 2. Իգական

D3. Ի՞նչ կրթություն ունեք:

- | | |
|-----------------------------|--|
| 1.Չունի տարրական կրթություն | 5.Նախնական մասնագիտական /արհեստագործական/ |
| 2.Տարրական կրթություն | 6.Միջին մասնագիտական |
| 3.Հիմնական կրթություն | 7.Բարձրագույն մասնագիտական (բակալավր, մագիստրոս) |
| 4.Միջնակարգ կրթություն | 8.Հետբուհական մասնագիտական 98.Հ. Պ. |

D4. Ինչպիսի՞ զբաղվածություն ունեք:

- | | |
|--|--|
| 1.Ղեկավար (պետական հատված) | 8. Գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղված |
| 2.Ծառայող մասնագետ (պետական հատված) | 9.Ուսանող |
| 3.Սպասարկող անձնակազմ (պետական հատված) | 10.Տնային տնտեսություն վարող |
| 4.Ղեկավար/մենեջեր (մասնավոր հատված) | 11.Անհատ ձեռներեց |
| 5.Ծառայող մասնագետ (մասնավոր հատված) | 12.Գործազուրկ |

6. Սպասարկող անձնակազմ (մասնավոր հատված) 13. Թոշակառու

7. Համայնքային աշխատող 12. Այլ՝ _____

D5. Խնդրում եմ նշեք, թե ՀՀ դրամով որքա՞ն են կազմում Ձեր ընտանիքի միջին ամսական եկամուտները՝ ներառյալ թոշակները, արտասահմանից ուղարկված գումարը և այլն:

- | | | |
|--------------------|--------------------|--------------------|
| 1. Մինչև 50.000 | 2. 50.001-100.000 | 3. 100.001-150.000 |
| 4. 150.001-200.000 | 5. 200.001-300.000 | 6. 300.001-400.000 |
| 7. 400.001-500.000 | 8. 500.001 և ավել | 98. Հ.Պ. 99. Դ.Պ. |

D6. Նշված տարբերակներից ո՞րն է լավագույնս բնութագրում Ձեր ընտանիքի սոցիալական վիճակը:

1. Ընտանիքի եկամուտը չի բավականացնում սնունդ գնելու համար:
 2. Ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար:
 3. Ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ և հագուստ, բայց ոչ թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար:
 4. Ընտանիքի եկամուտը բավականացնում է թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար:
 5. Ընտանիքի եկամուտը բավականացնում է մեքենա կամ բնակարան գնելու համար:
98. Հ.Պ.

ՀԱՐՑԱԶՐՈՒԹՅԱՎԱՐ՝ Ես կխնդրեի փոխանցել որևէ կոնտակտային հեռախոսահամար, որը կարող է օգտագործվել միայն իմ աշխատանքը ստուգելու համար, այլ նպատակներով Ձեր կողմից նշված կոնտակտային տվյալները չեն օգտագործվի՝

Հեռախոսահամար _____ 98. Հ.Պ.

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

Հավելված 2. Աղբահանության ոլորտի մոնիթորինգային ստուգաթերթեր

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ	
<i>Մարզ</i>	
<i>Խոշորացված համայնք</i>	
<i>Բնակավայր</i>	
<i>Բնակավայրի տիպը</i>	1. Քաղաքային 2. Գյուղական
<i>Մոնիթորինգի իրականացման ամսաթիվը</i>	_ / _ / 2018թ.
<i>Մոնիթորինգի իրականացման ժամերը</i>	_ : _ -ից _ : _
<i>Մոնիթորինգի անունը</i>	
<i>Մոնիթորինգի ենթակարգված փողոցը</i>	
<i>Փողոցի տեղադիրքը բնակավայրում</i>	1. Կենտրոն 2. Ծայրամաս
<i>Փողոցի տիպը</i>	1. Գլխավոր փողոց 2. Երկրորդական փողոց 3. Նրբանցք, փակուղի 4. Բակային տարածք 5. Հրապարակ
1. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	
1. Փողոցի երկայնքով աղբի կոնտեյներների առկայություն	1. Այո 2. Ոչ
2. Փողոցում քանի կետում է աղբաման տեղադրված (նշել քանակը)	

ԱՂԲԻ ԿՈՆՏԵՑՆԵՐՆԵՐ		Փողոցի երկայնքով կոնտեյներների կետ N	
1. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ			
N	Սոնիթորինգային ցուցանիշ	Արդյունք	Մեկնաբանություն
1.	Տվյալ կետում առկա աղբամանների քանակը (նշել քանակը)	-- հատ	Լուսանկարի կող
2.	Աղբարկղերի տարողունակությունը	-- լիտր	
3.	Պլաստիկ շշերի տարբերակված աղբամանների առկայություն	1. Այո 2. Ոչ	
4.	Արդյո՞ք աղբամանները տեղադրված են եղել պատվանդանի վրա (բետոնե, երկաթյա)	1. Այո 2. Ոչ	
5.	Արդյո՞ք աղբամանի/աղբամանների շուրջ երեք կողմից եղել է պատնեշ/ցանկապատ (բետոնե, երկաթյա)	1. Այո 2. Ոչ	
6.	Արդյո՞ք աղբամանը տեղադրված է եղել մայթի վրա, փողոցի երթևեկելի հատվածում կամ սիգամարզերի վրա	1. Այո 2. Ոչ	
8.	Որքա՞ն է եղել մոտակա բնակելի շենքից աղբամանների կետի մոտավոր հեռավորությունը (հաշվել ոտնաքայլերով)	-- մետր	
9.	Արդյո՞ք կոնտեյներների վրա առկա էին աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ ցանկացած այլ կոնտակտային տվյալ	1. Այո 2. Ոչ	
2. ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ			

10.	Ի՞նչ տիպի աղբարկղեր են տեղադրված եղել տվյալ կետում (պլաստմասե, մետաղական, ներկված, փակվող կապարիչներով /չփակվող/վնասված)	1. Պլաստմասե <input type="checkbox"/> 2. Մետաղական <input type="checkbox"/> 3. Ներկված/գունազարդված <input type="checkbox"/> 4. Ժանգոտված <input type="checkbox"/> 5. Փակվող կապարիչներով <input type="checkbox"/> 6. Չփակվող <input type="checkbox"/> 7. Վնասված <input type="checkbox"/>	
11.	Նշվածներից ո՞րն է լավագույնս բնութագրում աղբի կոնտեյներների վիճակը	1. Աղբի կոնտեյներները կիսադատարկ էին, հարակից տարածքը զերծ էր աղբից 2. Աղբի կոնտեյներները կիսադատարկ էին, սակայն կենցաղային աղբը կուտակված էր հարակից տարածքում 3. Աղբի կոնտեյներները լցված էին, սակայն հարակից տարածքը մաքուր էր 4. Աղբի կոնտեյներները լցված էին, աղբը կուտակված էր հարակից տարածքում	
12.	Արդյո՞ք աղբի կոնտեյներների հարակից տարածքում առկա են եղել թափառող կենդանիներ	1. Այո 2. Ոչ	
13.	Արդյո՞ք աղբի կոնտեյներների հարակից տարածքում տարածված էր գարշահոտություն	1. Այո 2. Ոչ	
14.	Արդյո՞ք կոնտեյներների հարակից տարածքում առկա էին աղբաջրերի հոսքեր	1. Այո 2. Ոչ	
15.	Արդյո՞ք կոնտեյներների հարակից տարածքն ապահովված էր լուսավորության հենասյունով/լուսավորությամբ	1. Այո 2. Ոչ	
16.	Ընդհանուր առմամբ քանի տոկոս էր կազմում աղբամանների լցվածությունը (վերցնել շրջանակի մեջ)	0% 10% 20% 30% 40% 50% 60% 70% 80% 90% 100%	

ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ								
N	Մոնիթորինգային ցուցանիշ	Արդյունք/Մեկնաբանություն						
1.	Արդյո՞ք Ձեր կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում նկատել էք աղբատար ավտոմեքենա՝ աղբահանության աշխատանքներ իրականացնելիս:	<table border="1"> <tr> <td>1.Այո</td> <td>2. Ոչ</td> <td>Լուսանկարի կող</td> </tr> </table>	1.Այո	2. Ոչ	Լուսանկարի կող			
1.Այո	2. Ոչ	Լուսանկարի կող						
2.	Ինչպիսի՞ աղբատար մեքենա էր իրականացնում աղբահանություն:	<ol style="list-style-type: none"> 1. Կողային բարձիչով աղբատար մեքենա 2. Առանց կողային բարձիչի աղբատար՝ փակ թափքով 3. Բաց թափքով ինքնաթափ մեքենա 4. Տրակտոր՝ հարմարեցված կցորդով 5. Այլ (ինդրում ենք մանրամասնել) <hr/>						
3.	Արդյո՞ք աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս կամ այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ:	<table border="1"> <tr> <td>1.Այո</td> <td>2. Ոչ</td> <td></td> </tr> </table>	1.Այո	2. Ոչ				
1.Այո	2. Ոչ							
4.	Արդյո՞ք աղբատար մեքենայի թափքից նկատել էք աղբաջրերի բացթողնում:	<table border="1"> <tr> <td>1.Այո</td> <td>2. Ոչ</td> <td></td> </tr> </table>	1.Այո	2. Ոչ				
1.Այո	2. Ոչ							
5.	Արդյո՞ք աղբատար մեքենայի վրա առկա էր աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ:	<table border="1"> <tr> <td>1.Այո</td> <td>2. Ոչ</td> <td></td> </tr> </table>	1.Այո	2. Ոչ				
1.Այո	2. Ոչ							
6.	Արդյո՞ք աղբահանություն իրականացնող աշխատակիցները կրում էին արտահագուստ և սանիտարական ձեռնոցներ:	<table border="1"> <tr> <td>1.Այո</td> <td>2. Ոչ</td> <td></td> </tr> </table>	1.Այո	2. Ոչ				
1.Այո	2. Ոչ							
7.	Արդյո՞ք աղբահանություն իրականացնող աշխատակիցները իրականացրեցին նաև աղբի կոնտեյներների հարակից տարածքի մաքրում:	<table border="1"> <tr> <td>1. Այո</td> <td>2. Ոչ</td> <td></td> </tr> <tr> <td colspan="3">3. Կարիք չկար, քանի որ մաքուր էր</td> </tr> </table>	1. Այո	2. Ոչ		3. Կարիք չկար, քանի որ մաքուր էր		
1. Այո	2. Ոչ							
3. Կարիք չկար, քանի որ մաքուր էր								
8.	Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք աղբահանությունից հետո կոնտեյներների և հարակից տարածքի վիճակը: :	<ol style="list-style-type: none"> 1. Աշխատակիցներն ամբողջությամբ մաքրեցին կոնտեյներները և հարակից տարածքը աղբից 2. Աշխատակիցները միայն իրականացրեցին կոնտեյներներից աղբի հեռացում, հարակից տարածքը չմաքրեցին 3. Աշխատակիցներն իրականացրեցին կոնտեյներներից աղբի հեռացում և հարակից տարածքի մաքրում, սակայն թերի 4. Այլ _____ 						

D. ԱՂԲԱՎԱՅՐԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

D1.	Արդյոք տվյալ փողոցում Ձեր շրջայցի ընթացքում նկատել եք պատահական բացված ոչ օրինական աղբավայրեր (չի առաջացել աղբի կոնտեյներների հարակից տարածքում)	1. Այո (նշել քանակը)____ 2. Ոչ	Լուսանկարի կող	
D2.	Ըստ Ձեզ, նշվածը կարող է լինել աղբավայրի առաջացման պատճառ՝ Ամենայն հավանականությամբ աղբավայրն առաջացել է, քանի որ հարակից տարածքում առկա չեն աղբի կոնտեյներներ	1.Այո 2. Ոչ		
D3.	Արդյո՞ք Ձեր կողմից դիտարկվող բնակավայրի տարածքով անցնում է գետ կամ ջրատար առու	1.Այո 2. Ոչ		
D4.	Եթե այո՝ ապա նշվածներից որն է լավագույնս բնութագրում գետի/ջրատար առվի մաքրությունը	1.Գետի/ջրատար առվի հունը հիմնականում մաքուր է, կենցաղային աղբ թափված չէ 2.Գետի/ջրատար առվի մեջ առկա են հատուկենտ կենցաղային թափոններ, պլաստիկ շշեր, տոպրակներ և այլն 3.Գետի/ջրատար առվի մեջ թափված է կենցաղային աղբ՝ տոպրակներով 4.Գետի/ջրատար առվի որոշակի հատվածներում գոյացել են փոքր աղբանոցներ	Լուսանկարի կող	

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՂԲԱՎԱՅՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԽՄԲԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

<i>Մարզ</i>	
<i>Խոշորացված համայնք</i>	
<i>Բնակավայր</i>	
<i>Բնակավայրի տիպը</i>	1. Քաղաքային 2. Գյուղական
<i>Մոնիթորինգի իրականացման ամսաթիվը</i>	_ / _ / 2018թ.
<i>Մոնիթորինգի իրականացման ժամերը</i>	__ : __ -ից __ : __
<i>Մոնիթորինգի անունը</i>	
<i>Աղբավայրի տիպը</i>	1. Բնակավայրին սպասարկող լիցենզավորված աղբավայր 2. Բնակավայրին սպասարկող չլիցենզավորված աղբավայր
<i>Բնակավայրից քանի կմ հեռավորության վրա է կազմակերպված աղբավայրը</i>	
<i>Աղբավայրի լուսանկարների կողեր</i>	

1. Աղբավայրի կազմակերպում

Մոնիթորինգային չափորոշիչ	Տարբերակ	Մեկնաբանություն
1. Սպառման թափոնների պոլիգոնը ունի կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ	1. Այո 2. Ոչ	
2. Սպառման թափոնների պոլիգոնի տարածքը շրջապատից մեկուսացված է ցանկապատով	1. Այո 2. Ոչ	
3. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը և անվաղողերը լվացվում և ախտահանվում են յուրաքանչյուր անգամ սպառման թափոնները թափելուց հետո	1. Այո 2. Ոչ	
4. Սպառման թափոնների պոլիգոնում թափոնները այրում են	1. Այո 2. Ոչ	
5. Արդյոք Ձեր այցելության ընթացքում աղբավայրի տարածքում կային խոշոր կամ մանր եղջերավոր կենդանիներ	1. Այո 2. Ոչ	

2. Բնապահպանական բնութագրիչներ

6. Արդյոք աղբավայրի հարակից տարածքում առկա են զգայուն ընկալիչներ (օրինակ՝ ջրային օբյեկտներ, անտառային տարածք, մշակութային կամ բնական հուշարձաններ և այլն):	1. Այո 2. Ոչ	
--	--------------	--

Հավելված 3: Խոշորացված համայնքներում աղբահանության բաղադրիչներից բնակչության բավարարվածությունն ըստ առանձին բնակավայրերի

Մաս 1: Ախուրյան համայնքում աղբահանության բաղադրիչներից բնակչության բավարարվածությունը

Ախուրյան					
Աղբահանության բաղադրիչներ	Ծառայությունը բացակայում է	Ընդհանրապես բավարարված չեն	Ավելի շուտ բավարարված չեն	Ավելի շուտ բավարարված են	Լիովին բավարարված են
Աղբահանության իրականացման հաճախություն	0%	0%	14%	67%	19%
Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	23%	26%	35%	14%	2%
Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	23%	32%	26%	16%	4%
Աղբարկղերի հարակից տարածքի մաքրություն	23%	26%	33%	14%	4%
Աղբարկղերի հարակից տարածքում սհաճ հոտերի բացակայություն	25%	28%	32%	14%	2%
Աղբարկղերի հարակից տարածքում թափառող շների, կատուների բացակայություն	25%	32%	33%	9%	2%
Աղբանոթների առկայություն	35%	26%	26%	9%	4%
Աղբանոթների մաքրման հաճախություն	40%	22%	11%	22%	5%

Այգաբաց

Աղբահանության բաղադրիչներ	Ծառայությունը բացակայում է	Ընդհանրապես բավարարված չեն	Ավելի շուտ բավարարված չեն	Ավելի շուտ բավարարված են	Լիովին բավարարված են
Աղբահանության իրականացման հաճախություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքի մաքրություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում տհաճ հոտերի բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում թափառող շների, կատուների բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների առկայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների մաքրման հաճախություն	100%	0%	0%	0%	0%

Արևիկ

Աղբահանության բաղադրիչներ	Ծառայությունը բացակայում է	Ընդհանրապես բավարարված չեն	Ավելի շուտ բավարարված չեն	Ավելի շուտ բավարարված են	Լիովին բավարարված են
Աղբահանության իրականացման հաճախություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	100%	0%	0%	0%	0%

Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքի մաքրություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում տհաճ հոտերի բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում թափառող շների, կատուների բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների առկայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների մաքրման հաճախություն	100%	0%	0%	0%	0%

Բասեն					
Աղբահանության բաղադրիչներ	Ծառայությունը բացակայում է	Ընդհանրապես բավարարված չեմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Ավելի շուտ բավարարված եմ	Լիովին բավարարված եմ
Աղբահանության իրականացման հաճախություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքի մաքրություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում տհաճ հոտերի բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում թափառող շների, կատուների բացակայություն	100%	0%	0%	0%	0%

Աղբանոթների առկայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների մաքրման հաճախություն	100%	0%	0%	0%	0%

Կամո

Աղբահանության բաղադրիչներ	Ծառայությունը բացակայում է	Ընդհանրապես բավարարված չեմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Ավելի շուտ բավարարված եմ	Լիովին բավարարված եմ
Աղբահանության իրականացման հաճախություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքի մաքրություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում սհաճ հոտերի բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում թափառող շների, կատուների բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների առկայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների մաքրման հաճախություն	100%	0%	0%	0%	0%

Կառնուտ

Աղբահանության բաղադրիչներ	Ծառայությունը բացակայում է	Ընդհանրապես բավարարված չեմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Ավելի շուտ բավարարված եմ	Լիովին բավարարված եմ
Աղբահանության իրականացման հաճախություն	100%	0%	0%	0%	0%

Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքի մաքրություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում տհաճ հոտերի բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում թափառող շների, կատուների բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների առկայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների մաքրման հաճախություն	100%	0%	0%	0%	0%

Հովիտ					
Աղբահանության բաղադրիչներ	Ծառայությունը բացակայում է	Ընդհանրապես բավարարված չեմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Ավելի շուտ բավարարված եմ	Լիովին բավարարված եմ
Աղբահանության իրականացման հաճախություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքի մաքրություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում տհաճ հոտերի բացակայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի հարակից տարածքում թափառող շների, կատուների	100%	0%	0%	0%	0%

բացակայություն					
Աղբանոթների առկայություն	100%	0%	0%	0%	0%
Աղբանոթների մաքրման հաճախություն	100%	0%	0%	0%	0%

Ջրատատ					
Աղբահանության բաղադրիչներ	Ծառայությունը բացակայում է	Ընդհանրապես բավարարված չեն	Ավելի շուտ բավարարված չեն	Ավելի շուտ բավարարված են	Լիովին բավարարված են
Աղբահանության իրականացման հաճախություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի բավարար քանակ և տարողունակություն	100%	0%	0%	0%	0%
Աղբարկղերի տեղադիրք և հասանելիություն	100%	0%	0%	0%	0%
